ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(76-րդ տարի**) Թիվ-3** (1661) *Մարտ 2022*

Մարտ 2022

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող
ՀՅԴ Ընդհանուր ժողովը (էջ 1-2)

2- Քաղաքական
Վարդան Հակոբյան
Պատմությունը չի հանդուրժում իրեն կապկողներին (էջ 3-6)

3- Հասարակություն
Վաչէ Բրուտեան
Ազգային միասնականութիւնը. խոչընդոտներ եւ զանոնք յաղթահարելու միջոցներ (էջ 7-9)

4- Տարածաշրջանային
Հրանտ Մելիք-Շահնազարյան
Իրանի տարածաշրջանային շահերն ու հայկական գործոնը (էջ 10-12)

5- Իրավաքաղաքական
Արփի Աբրահամյան
Հայաստանի Հանրապետության եվրասիական ինտեգրման իրավական հենքը որպես ՀՀ անվտանգության բաղադրիչ (էջ 13-15)
Վիգէն Աբրահամեան
Քուէէն անդին
Կարելի՞ է ժողովրդավարութիւնը ապահովագրել ամբոխավարական փորձանք-ներու դէմ (էջ 16-20)

6- Դաշնակցական բեմ
Արարատ Հակոբյան
Հայաստանի քաղաքական կողմնորոշման (օրիենտացիայի) հարցը Ռ. Տեր-Մինասյանի դիտարկմամբ (էջ 21-23)

7- Պատմության լուսարձակ
Անի Մելքոնյան
Հայկական վրիժառությունը պատմության մեջ (էջ 24-27)

8- Աշխարհաքաղաքական
Լիանա Պետրոսյան
Նովրուզի քաղաքականացումը հարավկովկասյան տարածաշրջանում (էջ 28-29)

Խալիդ Օկաշա
Թուրքական ներթափանցումը Աֆրիկա մայրցամաք (էջ 30-35)

Տիգրան Չանդոյան
«Արդարություն և զարգացում» կուսակցության՝ իշխանության գալը Թուրքիայում (հոդված 4) (էջ 36-43)

9- Ընկերական զրույցներ
Վրէժ-Արմէն *(էջ 44)*

ՀՅԴ Ընդհանուր ժողովը

2022 թ. փետրվարի 28-ից մարտի 8-ը Հայաստանում տեղի ունեցավ Դաշնակցության 34-րդ Ընդհանուր ժողովը: Գաղտնիք բացահայտած չենք լինի, եթե ասենք, որ Ընդհանուր ժողովները Դաշնակցության ընթացիկ կյանքում տեղի ունեցող ամենակարևոր իրադարձությունն են: Իբրև ՀՅԴ աշխարհատարած ողջ կառույցի բարձրագույն ժողովներ՝ դրանք գալիք քառամյա շրջանի համար ընդունում են ռազմավարական բնույթի որոշումներ: Այդպիսով ժողովները նաև ամրապնդում են կուսակցական կազմակերպորեն ապակենտրոն կառույցի, ինչպես և նրա գաղափարախոսության ու ռազմավարական առաջադրանքների միասնականությունը: Բնական է, որ Հայաստանում, Ավստրալիայում, Կանադայում, Շվեդիայում կամ մեկ այլ վայրում Դաշնակցության կառույցների առջև ծառացած կոնկրետ խնդիրները կարող են լինել միանգամայն տարբեր, սակայն տեղական խնդիրների լուծումները չեն կարող հակասել կուսակցության Ընդհանուր ժողովների ոգուն ու տառին: Առավել ևս հակասություն չի կարող լինել Ընդհանուր ժողովների ընդունած ուղենիշների, որոշումների ու հայեցակարգային մոտեցումների հարցում:

Ընդհանուր ժողովները հաճախ որակվում են որպես պատմական ժողովներ, և սա հաճոյախոսություն չէ, որ իրենց հասցեին անում են իրենք՝ դաշնակցականները: Ցավոք, ՀՅԴ 131-ամյա կենսագրությունն անցել է հայոց պատմության դրամատիկ ու դժնդակ փուլերով, որոնց ընթացքում ՀՅԴ-ի ստանձնած հանձնառությունը եղել է նույնը՝ մասնակից լինել հայ ժողովրդի ճակատագրի կերտմանը՝ այդ նպատակին ամմնացորդ նվիրաբերելով իր ֆիզիկական ու բարոյական ողջ ներուժը:

Հայ ժողովրդի, Հայաստանի ու Արցախի համար այդպիսի մի դժնդակ ժամանակ էլ գումարվեց ՀՅԴ ոչ արտահերթ, բայց իր բնույթով արտակարգ 34-րդ Ընդհանուր ժողովը: Բնականաբար, հայ կյանքի տագնապները չէին կարող անարձագանք մնալ այս կարևոր ժողովում: Ընդհակառակը՝ մթնոլորտում գերիշխողը հենց այդ մտահոգություններն էին, որոնք էլ առաջնորդեցին ժողովն ու արտացոլվեցին որոշումներում: Կարելի է հաստատել, որ Հայաստանում ու Արցախում ստեղծված իրավիճակի, նրանց առջև ծառացած մարտահրավերների գնահատման, ինչպես և դրանցից բխող անելիքների հստակեցման առումով ժողովը եղավ միակամ, բոլոր ելույթ ունեցողները և ընդհանրապես ներկաները համամիտ էին այն գնահատականներին, որոնք արտացոլվեցին ժողովի բանաձևերում և նախանշվող անելիքների հիմքը դարձան:

Ժողովը տագնապով արձանագրեց, որ այսօր գերխնդիր է դարձել Հայաստանի և Արցախի Հանրապետությունների անվտանգության, տարածքային ամբողջականության, ինքնիշխանության, կայունության ու զարգացման ապահովումը, և որ Հայաստանի իշխանությունների վարած ապազգային քաղաքականության շարունակումը հանգեցնելու է Հայաստանի թուրքացմանը, Արցախի հայաթափմանը, իսկ սպառնալի չափերի հասնող արտագաղթը կարող է ժողովրդագրական աղետի վերածվել թե՛ Հայաստանի, թե՛ Արցախի համար: Հայաստանի Հանրապետությունը դադարել է լինել Արցախի Հանրապետության և Արցախի ժողովրդի անվտանգության երաշխավորը, նվազում է Արցախի՝ որպես համահայկական գործոնի դերակատարությունը: Ադրբեջանական զորամիավորումները շարունակում են խախտել Հայաստանի տարածքային ամբողջականությունը, սասանել երկրի ինքնիշխանությունը:

Ժողովականները արձանագրեցին, որ Հայաստանի պետական ինստիտուտները կազմաքանդված են, բանակը, ինչպես և ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներին դիմակայելու ներուժը՝ քայքայված: Սրան զուգահեռ ոտնահարվում են հայկական ինքնությունը կերտող ազգային և ավանդական արժեքները, երկրի քաղաքական օրակարգից դուրս են մղվում Հայ դատը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և հատուցման գործընթացը, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի հոչակագրում ամրագրված համահայկական հանձնառությունները: Համազգային պառակտվածության և անհանդուրժողականության վտանգավոր մակարդակը, ազգային արժեքների և տեսլականների ոտնահարումը, քաղաքական ուժերի և ազգային ինստիտուտների հանդեպ հանրային հավատի և վստահության պակասը, քաղաքական կայուն համակարգի և ստեղծարար օրակարգերի բացակայությունը, երկրում իրականացվող բռնաճնշումները, քաղաքական, մշակութային, գիտական և հոգևոր ընտրախավերի հեղինակազրկումը գրեթե բացառում են հանրային երկխոսությունը, անէացնում հեռանկարի հույսը, նպաստում արտագաղթի տեմպերի աճին:

Երկրի հակասահմանադրական ընթացքը, համատարած բռնաճնշումներն ու քաղաքական հետապնդումները ամրապնդում են երկրում հաստատված ավտորիտար ռեժիմը:

Կատարելով այսպիսի գնահատումներ՝ ՀՅԴ Ընդհանուր ժողովը հաստատեց այս բախտորոշ շրջանում կուսակցության հանձնառությունները՝ ի շահ հայ ժողովրդի և հայոց երկու պետականությունների: Ընդ որում, ազգի ու հայրենիքի առջև ծառացած մարտահրավերները հաղթահարելու նպատակով Դաշնակցության ժողովն ընդունեց, որ կուսակցությունը կարող է համագործակցել նույն նպատակները հետապնդող ազգային բոլոր ուժերի հետ, պահանջել, որ օրվա ցանկացած իշխանություն ձեռնամուխ լինի ծագած խնդիրների լուծմանը, իսկ այլ պարագաներում միշտ պատրաստ լինի ինքնուրույնաբար ու միայնակ դուրս գալու պայքարի հրապարակ:

Որպես ստեղծված իրավիճակի հաղթահարմանն ուղղված ռազմավարական նպատակ նախանշվեց ազգային բանակի հզորացումը՝ իբրև հայրենիքի անվտանգության անփոխարինելի երաշխիք: Դաշնակցության պատկերացրած «ազգ-բանակ»-ի գաղափարից է բխում համաժողովրդական բանակի կազմավորումը, որն օժտված կլինի 21-րդ դարին համապատասխան կարողականությամբ:

Ժողովը արձանագրեց, որ Հայաստանում համակարգային ճգնաժամի հաղթահարման համար անհրաժեշտ են ռազմավարական հեռանկարային համապարփակ ծրագրեր, որոնք թույլ կտան վերականգնել պետական անվտանգության ողջ համակարգը:

Կարևորագույն հիմնախնդիրներ համարվեցին Հայաստանի և Արցախի անվտանգության, տարածքային ամբողջականության, ինքնիշխանության, կայունության ու զարգացման ապահովումը, Հայաստանի և Արցախի հայաթափման կանխումը:

Անհրաժեշտ նկատվեց սահմանել և հստակեցնել համազգային այն կենսական շահերն ու կարմիր գծերը, որոնցից դուրս որևէ զիջում անընդունելի է: Մասնավորապես՝ նկատի ունենալ, որ հանուն Թուրքիայի հետ հարաբերությունների հաստատման հայությունը չի կարող ընդունել որևէ նախապայման, որն ուղղված կլինի Հայաստանի և Արցախի Հանրապետությունների ինքնիշխանության, տարածքային ամբողջականության դեմ, կպարտադրի Հայաստանին ճանաչել ներկայումս ձևավորված փաստական սահմանները, ինչպես և հրաժարվել Հայ դատի պայքարից՝ հայության արդար պահանջատիրությունից:

Այժմեական որակվեց Հայաստանի և Արցախի միջև ռազմաքաղաքական փոխգործակցության պայմանագրի կնքման անհրաժեշտությունը: Անհրաժեշտ համարվեց նաև ՀՀ իշխանություններին մղելը, որ միջազգային հարթակներում հանդես գան Արցախի ժողովրդի անվտանգության և ազգային իրավունքների երաշխավորի հանձնառությամբ:

Հայաստանի և Արցախի քաղաքական կշիռն ու դերակատարությունը վերականգնելու նպատակով անհրաժեշտ համարվեցին ավանդական դաշնակիցների հետ խարխլված հարաբերությունների վերականգնումը, կապերի զարգացումը նախկին դաշնակիցների ու գործընկերների հետ, այդ թվում՝ Ռուսաստանի, Իրանի, Վրաստանի, ԱՄՆ-ի, Եվրամիության երկրների, Չինաստանի ու Հնդկաստանի և այլն:

Որպես սոցիալիստական կուսակցություն՝ Դաշնակցությունը ազգային հիմնահարցերի կողքին չէր կարող չկարևորել նաև հայ մարդու և հայ հասարակության առօրյա կենսական խնդիրները: Ժողովը վերահաստատեց, որ իբրև ընկերվարական (սոցիալիստական) քաղաքական ուժի՝ «Հայ Յեղափոխական Դաշնակցության» համար մարդը և նրա բարեկեցությունը հիմնական արժեքներ են: Ընկերային (սոցիալական) արդարության, հանրային համերաշխության և եկամուտների արդար բաշխման խնդիրները տակավին լուծված չեն: Մեր ազգային անվտանգության համար սպառնալիքի աստիճանի հասած հանրության բևեռացումը մնում է Հայաստանի ներքաղաքական հիմնական մարտահրավերներից մեկը:

Դաշնակցությունը չէր կարող մոռանալ Սփյուռքը՝ իր հիմնահարցերով և հայության ու հայոց պետության կյանքում դերակատարությամբ: Գնահատվեց Սփյուռքի ռազմավարական դերը՝ որպես հայկական եռամիասնության կարևոր օղակի: Նշվեց, որ անհրաժեշտ է նոր ավյուն ներարկել Սփյուռքի առավել կազմակերպման և համահայկական քաղաքական նպատակների իրականացման պայքարին:

Հայաստանում ճգնաժամի հաղթահարման կարևոր պայման դիտվեց քաղաքացիական հասարակության ձևավորումը: Շեշտվեց, որ ազգային կրթությունը և դաստիարակությունը, ազգային դպրոցի և մշակույթի պահպանումն ու զարգացումը ռազմավարական և քաղաքական առաջնահերթություններ են Հայաստանի ու Սփյուռքի համար: Ազգային նկարագիր ունեցող հայ քաղաքացու, հանրության ու ընտրախավի (էլիտա) ձևավորումը, ՀՀ քաղաքացու բարոյահոգեբանական նկարագրի բարեփոխումը հայոց պետականության ամրապնդման և հզորացման նախապայմաններ են:

ՀՅԴ 34-րդ Ընդհանուր ժողովի աշխատանքներն ընթացան 9 օր: Այդ ընթացքում քննարկվեց համահայկական կյանքին, համընդհանուր մարտահրավերներին վերաբերող համապարփակ օրակարգ: Ընդունվեցին բազմաթիվ կարևոր որոշումներ, որոնց բոլորին անհնար է անդրադառնալ մեկ հրապարակման սահմաններում: Այո՛, Ընդհանուր ժողովը արդյունավետ եղավ իր կայացրած որոշումներով, սակայն այն պատմական կշիռ ձեռք կբերի, երբ Դաշնակցության համահայկական ընտանիքը միասնական կամքով և վճռականությամբ իրականացնի ժողովի կողմից իրեն թելադրված հանձնարարությունները:

Պատմությունը չի հանդուրժում իրեն կապկողներին

Վարդան Հակոբյան
Դիվանագետ, վերլուծաբան

«Վլադիմիր Իլյիչը այն ժամանակ հայրենիք չէր ճանաչում, դրա համար էլ գերմանական կայսերական կառավարությունը, նրա կարծիքով, կարող էր իրեն թշնամի չլինել: Այդ ժամանակ նա տարված էր համաշխարհային հեղափոխության երազանքներով, և նրան փող էր պետք: Շատ փող: Նրա հայացքները շատ հարմար էին գերմանական շտաբի համար, և նա խոշոր գումար ստացավ՝ 70 մլն մարկ, որի դիմաց պարտավորվեց քայքայել ռուսական բանակը և դրդել Ռուսաստանին սեպարատ խաղաղության: Եվ այսպես, խելագար, քաղաքական հանցագործ, մոլագար, ուտոպիստ, լրտես և դավաճան, որի մասին խորհրդային ուսումնական գրականության գրամադրության տակ կային ճշգրիտ անհերքելի փաստեր, որ գալիս է որոշակի նպատակով՝ ոչնչացնելու և խայտառակելու Ռուսաստանը գերմանական փողերի դիմաց: Այդ մասին գիտեն Կերենսկին, գերագույն հրամանատարությունը, գիտեն դաշնակիցները: Ինչ են նրանք անում՝ ինքդ տեսար:

- Խեղկատակ է,- ասաց Մարլինը:

- Իհարկե խեղկատակ է: Բայց այդ խեղկատակը անսովոր համառությամբ իր գործն առաջ է տանում»:

От двуглавого орла к красному знамени. 1894-1921: роман в 4 томах / П. Н. Краснов. - Издание 2-е, пересмотренное и исправленное автором. -Берлин

Իր վեպում հայտնի սպիտակգվարդիական, մոլի հակաբոլշևիկ Պ. Կրասնովի՝ Վ. Լենինին տրված այս գնահատականները անշուշտ սուբյեկտիվ են: Սակայն վերը բերված հատվածում մեզ հետաքրքրողը պետության քայքայման նրա նկարագրած միջոցներն են: Միայն ավելացնենք, որ դրանց մշակման և կիրառման գործում ոչ պակաս, կարելի է ասել՝ ավելի մեծ, դեր է խաղացել Լև Տրոցկին: Այդ միջոցները կատարելագործվեցին, հարստացան քարոզչական, հոգեբանական նոր գործիքակազմով և արդեն 70 տարի անց օգտագործվեցին Ռուսաստանի խորհրդային կայսրությունը «ոչնչացնելու ու խայտառակելու» նպատակով: Պատմությունը կրկնվեց: Իհարկե, ծիծաղելի կլիներ Գորբաչովին կամ Եյցինին Լենինի կամ Տրոցկու հետ համեմատելը եթե վերջինները խոշոր անհատականություններ էին, և իրենք էին հեղինակները իրենց գործերի, ապա առաջինները քաղաքական գաճաճներ էին և խամաճիկներ: Դրա համար էլ ասում են, որ պատմությունը կրկնվեց, բայց արդեն որպես ֆարս:

Խորհրդային Միության փլուզումից հետո Արևմուտքը տարբեր երկրներում լիբերալ հասարակարգեր հաստատելու նպատակով իրականացրեց հեղաշրջումներ՝ կիրառելով քաղաքական այնպիսի տեխնոլոգիաներ, որոնց հիմքում ընկած էին Լենինի և

Տրոցկու գործադրած միջոցները: Այդ հեղաշրջումները ներկայացվում էին որպես զանգվածային ընդվզումներ հակաժողովրդավարական և կոռումպացված իշխանությունների դեմ, որպես հեղափոխություններ: Իսկ նրբազգաց արևմտյան հասարակությանը չվախեցնելու համար դրանց տրվում էին պոետիկ, այս կամ այն գույնին, երևույթին կամ առարկային համապատասխանող անվանումներ:

«Պատմությունը կրկնվում է երկու անգամ,- ասում էր Հեգելը,- առաջին անգամ՝ որպես ողբերգություն, երկրորդ անգամ՝ որպես ֆարս»: Ֆարսը կրկնության ձևի մեջ է, որը պարունակում է կոմիկական տարրեր, առաջինի կապկումն է: Բայց պատմությունը կապկելու հետևանքները նույնքան ողբերգական են լինում, այդ թվում՝ կապկողների համար:

Մեր օրերի հայաստանյան իրականությունը բնութագրելու համար տեղին կլիներ նաև ռուս գրող-երգիծաբան Ա. Կնիշևի կողմից Հեգելի աֆորիզմի ձևափոխված տարբերակը.«Պատմությունը կրկնվում է երիցս. առաջին անգամ՝ որպես ողբերգություն, երկու անգամ էլ՝ բթամիտների համար»:

Հայաստանի Հանրապետության պատմությունը 100 տարվա ընթացքում կատարեց մի շրջան և, հասնելով 2020 թ., կրկնեց 1920 թ. ողբերգությունը: Բայց մինչ այդ Հայաստանի անկախացման պատմությունը 1991 թ. կրկնվեց որպես ֆարս: Հասկանալու համար, թե ինչու որպես ֆարս, դիմենք համեմատության: Առաջին հանրապետությունը սկիզբ առավ Սարդարապատի գոյամարտում տարած հաղթանակով, ձևավորվեց ընդամենը 12 հազ. ք. կմ տարածքում՝ բնակեցված մի քանի հարյուր հազար հայերով, պետահիրավական, քաղաքական կառուցվածք գոյություն չուներ, տնտեսությունը խղճուկ վիճակում էր: Սակայն երկուսուկես տարում ծանրագույն պայմաններում Առաջին հանրապետության կառավարությունը պետություն հիմնեց, ստեղծեց մարտունակ բանակ, ազատագրեց տարածքներ, հաստատեց միջազգային հարաբերություններ, տնտեսության, ազգային

կրթության ու մշակույթի զարգացման հիմքերը դրեց, կազմակերպեց հայահավաք:

Երրորդ հանրապետությունը իր նախորդից՝ Խորհրդային Հայաստանից, ժառանգություն ստացավ մոտ 30 հազ. ք. կմ տարածք՝ 4 միլիոնի հասնող բնակչությամբ, զարգացած արդյունաբերությամբ, համաշխարհային ճանաչում ունեցող գիտական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատություններով, բարձրակարգ մասնագետների բանակով, պետական կառավարման ապարատով: 1991 թ., սակայն, Ղարաբաղյան շարժման ուսերի վրա իշխանության եկած ՀՀՇ-ն (նրա լիբերալ թևը) Սպիտակի երկրաշարժի, խորհրդային տնտեսական համակարգի փլուզման հետևանքով ճգնաժամի մեջ հայտնված երկիրը վերականգնելու և նորանկախ պետականության զարգացման հիմքերը դնելու և ամրապնդելու համար, այդ հսկայական ներուժն օգտագործելու փոխարեն, ընդամենը երեք տարում լիբերալ ռեֆորմների անվան տակ ոչնչացրեց իրեն բաժին հասած նյութական ու հոգևոր հարստությունը, երկրի սոցիալ-տնտեսական վիճակը հասցրեց 1918 թ. մակարդակին:

Տնտեսության մեջ կատարված ավերածությունները, բնակչության սրընթաց աղքատացումը պատճառ դարձան մեծ արտագաղթի, որի ցուցանիշները համադրելի էին 1915 թ. արևմտահայության արտագաղթի ցուցանիշների հետ: Որպես հետևանք՝ արմատապես փոխվեց հասարակության սոցիալական կառուցվածքը: Մինչ այդ սովորական դարձած հասարակության բաժանումը դասակարգերի և մասնագիտական խմբերի վերածվեց գործազուրկների և աշխատողների, աղքատացողների և հարստացողների պարզունակ բաժանման: Հասարակությունը քանակապես և որակապես անկում ապրեց: Աշխատանքից և ապրելու միջոցներից զրկված՝ արդյունաբերության, մշակույթի, գիտության, կրթության և այլ ոլորտների հազարավոր մասնագետներ ստիպված լքեցին երկիրը: Նրանց փոխարեն հասարակական կյանքի մակերես բարձրացան սպեկուլյանտները, մանր առևտրականները, լիբերալիզմի մարտիկներ դարձած կոմունիստական և կոմերիտական ֆունկցիոներները, չկայացած արվեստագետները, դատարկախոս «մտավորականները» և այլք: Սրանք էին, որ զբաղեցրին պետական պաշտոնները և պետք է իրականացնեին ժողովրդավարական ռեֆորմներ, զարգացնեին տնտեսությունը և կառուցեին անկախ, ինքնիշխան պետություն: Ժողովրդավարության փոխարեն, սակայն, սանձազերծվեցին քաղաքական հետապնդումներ, տնտեսական բարեփոխումները սեփականաշնորհման անվան տակ վերածվեցին հանրային սեփականության թալանի, ազգային գաղափարախոսությունը բնորոշվեց որպես կեղծ կատեգորիա, ծաղրվեցին և նսեմացվեցին մեր անցյալը, բոլոր այն արժեքները, որոնք պայմանավորում են ազգային ինքնագիտակցության վերարտադրությունը, օտարություն սերմանվեց Սփյուռքի և արցախցիների

Լենին

նկատմամբ: Չկարողանալով լուծել պետության և քաղաքացիների առջև ծառացած խնդիրները, արդարացնելու համար իրենց ապիկարությունը նրանք ամեն ինչ բարդեցին Արցախյան ազատամարտի ու արցախցիների վրա և վերջնագիր ներկայացրին ժողովրդին, այն է՝ եթե ուզում եք լավ ապրել, Արցախը հանձնեք Ադրբեջանին: Մի խոսքով՝ անկախության գործընթացը վերածեցին ֆարսի:

1998 թ. հաջողվեց կասեցնել նրանց ավերիչ ու ապազգային գործունեությունը: Հաջորդ տասը տարիների ընթացքում թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում տնտեսության, սոցիալական, անվտանգության, միջազգային հարաբերությունների ոլորտներում գրանցված հաջողությունները ապացուցեցին ՀՀՇ-ական այդ վերջնագրի անհիմն լինելը:

ՀՀՇ-ական կառավարման 7 տարիների ընթացքում հասարակության մեջ ձևավորվեց քաղաքացիների մի շերտ, որն առաջին իսկ օրերից ոգևորությամբ ընդունեց նոր իշխանությանը, դարձավ նրա հասարակական հավատարիմ հենարանը, նրա «ժողովուրդը»: Այն կազմված է տարբեր ունեցվածքի, զբաղմունքի, կրթության տեր մարդկանցից: Դրան մաս են կազմում ինչնունականների զրկանքները կրած և չքավոր կյանքից բարոյալքված լյումպենը կամ, ինչպես այսօր ընդունված է ասել, ժեխը, ձախողակ, իրենց գործում չկայացած և դրանում բոլորին, բացի իրենցից, մեղադրող մարդիկ, սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչները, քրեական տարրերը: Այդ շերտի մեջ զգալի տեղ են զբաղեցնում բազմաթիվ մանր ու խոշոր վաճառականները կամ, ինչպես իրենք են իրենց կոչում, բիզնեսմենները, կան նաև դրանցից բուծված օլիգարխներ և այլք: Այսքան տարբեր մարդկանց միավորում և ցեմենտում է մեկ ընդհանուր հատկանիշ՝ անձնական շահի գերակայությունը ազգայինի, պետականի նկատմամբ: Սրանց

համար բարձրագույն արժեք են իրենց բնազդների բավարարումը, իրենց ցանկությունների կատարումը, իրենց իրավունքները, իրենց, այլ ոչ թե մարդու՝ ընդհանրապես: Ազգային, կրոնական, բարոյական արժեքները սրանք համարում են վերացական, կեղծ հասկացություններ, որոնք կաղապարում են իրենց միտքը, խանգարում են իրենց կամքի ազատ դրսևորմանը, կաշկանդում են վարքագիծը: Սրանք այն մարդիկ են, որոնք իրենք իրենց դուրս են դնում ազգից և նրա պատմությունից: Ոչ մի թելով սրանք կապված չեն մեր պատմության հետ, ո՛չ հպարտանում են հերոսներով, ո՛չ ցավում ու կարեկցում են զոհերի համար, ո՛չ էլ ցանկանում են այդ ժառանգության վրա ապագա կերտել, շարունակել պատմության ընթացքը: Այս մարդիկ դիտում են պետությունը որպես առանձին սուբյեկտ, հասարակությունից դուրս մի օտար մարմին, որը կաշկանդում է իրենց օրենքներով և պարտավորություններով, ու այն պետք է միայն իրենց իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար: Օտարելով պետությունը հասարակությունից՝ նրանք այն նույնացնում են իշխանության հետ, իսկ ատելությունը իրենց ոչ հաճո իշխանությունների նկատմամբ տարածում են նաև պետության վրա: Պարզ երևում է, որ մեր հասարակության այս շերտը, գիտակցված կամ չգիտակցված տուրք տալով իր անձնապաշտական բնազդներին ու շահերին, լիբերալ արժեքների կողմակից է: Այս մարդիկ թե՛ իրենց համոզմունքներով, թե՛ հոգեբանորեն միշտ պատրաստ են գունավոր հեղափոխությունների, որոնք լայն հնարավորություններ են բացում նրանց առաջ դրանց պղտոր ջրերում վեր բարձրանալու և գրավելու հասարակության մեջ իրենց արժանիքներին ոչ համապատասխան տեղ, լվալու իրենց կեղտոտ փետուրները կամ պարզապես ինչ-որ բան թոցնելու փողոցային անկարգությունների խառնաշփոթում:

Հիմա վերը նշված խմբին միացրեք աղանդավորների բազմահազարանոց բանակը, որոնք իրենց էությամբ հակազգային և հակապետական են, ու կստանաք բնակչության մեկ երրորդը կազմող մի շերտ, որը թքել է պատմության վրա և մտադիր չէ դրանից դասեր քաղելու, որքան էլ այն կրկնվի՝ երկու թե տասներկու անգամ:

Բորիս Ելցին

Հասարակության այս շերտը արդեն 30 տարի դարձել է հայոց պետության ընթացքը և ճակատագիրը որոշող կամ, պարզ ասած, այդ ընթացքը խաթարող գործոն: Այդպիսի գործոն դարձավ նաև քաղաքական ուժերի բաժանումը վերը նշված նեոլիբերալ սկզբունքներն ընդունողների և դրանք մերժողների: Առաջիններից կազմվեց մի շրջանակ, որում հայտնված քաղաքական ուժերը պետք է գործեին արևմտյան քաղաքական, տնտեսական ու ֆինանսական ինստիտուտների թելադրած խաղի կանոններով: Այդ շրջանակում հայտնված քաղաքական կուսակցություններից ու գործիչներից պետք է ձևավորվեին երկրի քաղաքական էլիտան, խորհրդարանը, կառավարությունը: Մերժողները որակվում էին հակաժողովրդավարներ, ազգայնամոլներ, ահաբեկիչներ, ենթարկվում հետապնդումների, հայտարարվում օրենքից դուրս:

Չնայած 1998 թ. այդ շրջանակի սահմանները խզվեցին, վերականգնվեցին Դաշնակցության իրավունքները, ակտիվացան կոմունիստները և այլք, սակայն վերնախավի կազմավորման սկզբունքները և քաղաքական դաշտում խաղի կանոնները հիմնականում պահպանվեցին: Ավելին՝ քաղաքական, պետահրավական և ֆինանսատնտեսական լծակների զգալի մասը մնաց նույն մարդկանց ձեռքում, որոնք սոսկ կուսակցական պատկանելիությունն էին փոխել: Այս երկու գործոններն էին, որ ապահովեցին նեոլիբերալների վերադարձը և հանգեցրին 2020 թ. աղետին:

Հարյուր տարի առաջ հայ բոլշևիկներն իրենց դավաճանությունն արդարացնում էին համաշխարհային հեղափոխության հաղթանակով, որը կվերացներ ազգային պետություններն ու սահմանները, կրոնը, ավանդական ընտանիքը, և շահագործումից ու իմպերիալիզմի լծից ազատագրված աշխատավորները, այդ թվում՝ հայերն ու թուրքերը, կեղբայրանային և կապրեին խաղաղ ու երջանիկ:

Այսօր հայ լիբերալներն իրենց դավաճանությունը քողարկում են համաշխարհային ժողովրդավարության և մարդու իրավունքների հաղթանակով, որը կվերացնի ազգային պետությունների միջև սահմանները, մշակութային և կրոնական տարբերությունները, ավանդական ընտանիքը, որից հետո կոռուպցիայից ազատագրված հպարտ քաղաքացիները, որոնց թվում՝ հայերն ու թուրքերը, կապրեն խաղաղ, հպարտ ու երջանիկ: Թե՛ հայ բոլշևիկները, թե՛ հայ լիբերալները զոհաբերեցին մեր պետականությունը, նսեմացրին մեր ազգային արժանապատվությունը՝ հանուն այդ գաղափարները մեզ պարտադրողների շահերի: Երկու դեպքում էլ մեր ժողովրդին օգտագործեցին, իսկ պետությունը դարձրին փորձադաշտ այդ գաղափարների կիրառման համար:

Մի խոսքով՝ ինչպես հարյուր տարի առաջ բոլշևիկյան Ռուսաստանին, այնպես էլ այսօր Արևմուտքին ու տարածաշրջանում նրա առաջամարտիկ Թուրքիային հաջողվեց Հայաստանում իշխանության վերադարձնել նեոլիբերալներին: Դրա համար բոլոր նախադրյալները 2018 թ. արդեն կային:

Դեռ 2008 թ. մարտի 1-ին ՀՀՇ-ի ռևանշի փորձից հետո դրա կազմակերպիչներին անպատիժ թողնելը, իսկ կատարողներին, տեղիք տալով նրանց հովանավորների ճնշմանը, կարճ ժամանակ անց բանտերից ու փողոցներից քաղաքական դաշտ ետ բերելը և խորհրդարանական աթոռներ տրամադրելը, երիտասարդների նոր խմբերի հավաքագրումը և վերապատրաստումը արևմտյան կենտրոններում, նրանց փորձարկումը փողոցային շարժումներում ու բողոքի գործողություններում, թրծված ՀՀՇ-ականների կողմից պետական ու քաղաքական գործիչների, ղարաբաղցիների մասին հմտորեն պատրաստված ու տարածվող կեղծիքի կամ, ինչպես այսօր ընդունված է ասել, ֆեյքերի միջոցով քաղաքացիների ուղեղների լվացումը նախապատրաստվող նոր ռևանշի ակնհայտ նշաններն էին: Դրան գումարենք հանրապետության ղեկավարության, մեղմ ասած, ոչ համարժեք կադրային նշանակումները կառավարությունում, բանակում և ոստիկանությունում, ինչպես նաև 2017 թ. մեր իրականությանը և մեր պետության առջև ծառացած հիմնահարցերին ոչ համահունչ Սահմանադրության ընդունումը, որոնք նախապատրաստեցին բոլոր պայմանները 2018 թ. լիբերալ ռևանշի հաղթանակի համար: Ճիշտ կլինի ասել՝ թավշյա բարձիկի վրա պետության բանալիները հանձնվեցին երիտլիբերալներին: Վերջինները եկան և իրենց տրված հանձնարարականներն իրականացրին՝ չհանդիպելով որևէ լուրջ դիմադրության թե՛ պետության օղակների, թե՛ քաղաքական կուսակցությունների ու գործիչների կողմից: Այնպես որ «թավշյա» կոչված հեղափոխությունը ոչ թե քաղաքացիների տարերային բողոքի ու ընդվզման հետևանք էր, այլ պետական հեղաշրջում գունավոր հեղափոխության միջոցով: Իսկ երեք տարվա ընթացքում պետության քայքայումը և կապիտուլյացիայի հասցնելը ոչ թե այդ ալիքի վրա իշխանության եկած փողոցային հեղափոխականների անփորձության և շիզոֆրենիկ վարքագծի հետևանքն էր, ինչպես ուզում են ներկայացնել «հեղափոխության» հովանավորները, այլ հենց վերջիններիս կողմից լավ հաշվարկված և տարբեր երկրներում բազմիցս փորձարկված ծրագրի իրականացման հետևանքը: Փողոցային հեղափոխականների քայլերն էլ մշակված ու ֆինանսավորված էին ըստ այդ ծրագրի: Հայաստանում իրականացված այս ծրագիրը մի փոքր դրվագն է այն սցենարի, որ բեմադրում են տարածաշրջանում իրենց շահերը հետապնդող խոշոր տերությունները: Այն Մերձավոր Արևելքում աշխարհաքաղաքական վերաձևումների շղթայի մեկ օղակն է, մարտավարական մեկ քայլն է՝ դրանք իրականացնելու համար:

«Թավշյա հեղափոխություն» կոչված այդ բեմադրությունում «ժողովրդի» դերում էր վերը նկարագրված հասարակական շերտը, որի ակտիվիստները հերետիկոսական մոլեռանդությամբ, կոապաշտական ծեսերով ու շռուներով բորբոքում էին զանգվածային հոգագարությունը, օժանդակում և արդարացնում հասարակության և պետության

հիմքերը քանդող իրենց կուռքին:

Քաղաքացիների շատ ավելի ստվար զանգվածը չէր միացել փողոցային խրախճանքներին, բայց հավատացել էր, որ այլևս հպարտ և երջանիկ «քաղաքացու» կարգավիճակ ունի, ապրելու է հաղթանակած ժողովրդավարության պայմաններում: Հավատացողների թվում էին ոչ միայն գյուղացիներն ու քաղքենիները, մանր վաճառականներն ու արհեստավորները, ուսուցիչներն ու բժիշկները, մտավորականներն ու արվեստագետները, այլև բանակային ու ոստիկանական սպաներն ու շարքայինները, պետական ծառայողները և նույնիսկ որոշ քաղաքական կուսակցություններ: Աստիճանաբար հավատը մարեց, աճեց հիասթափությունը, իսկ կապիտուլյացիան ստորագրելուց հետո նրանք հասկացան, որ իրենց խաբել են: Հասկացան, բայց մնացին պասիվ դիտորդի դերում, անտարբեր և անմասնակից երկրի գլխին կախված սպառնալիքը չեզոքացնելու համար մղվող պայքարին: Ահա այս շերտը ներկայացնող մարդկանց է հասցեագրված Կսիշչևի «պատմությունը կրկնվում է երիցս…» բնորոշումը:

«Թավշյա հեղափոխությունը» չափազանց ծանր հարված հասցրեց մեր պետականությանը, տարավ պարտության և նսեմացրեց վերջնագրով, հարցականի տակ դրեց մեր անկախությունը: Ինչևիցե, Հայաստանի Հանրապետությունը, բոնցքամարտի լեզվով ասած, ենթարկվեց նոկաուտի, և դժվար է ասել, մինչև տասը հաշվելը նա կկարողանա՞ ոտքի կանգնել ու շտկել մեջքը, թե ոչ: Հավատացած ենք, որ կկարողանա, որովհետև մեր հասարակության մեջ, բացի վերը նշված երկու հասարակական շերտերից, կա ևս մեկը՝ թվով սակավ, բայց բաղկացած մարդկանցից, որոնք ազգային ինքնասիրությունը չեն ստորադասում անձնական պահանջներին ու շահերին, չեն ենթարկվում օտարների թելադրած խաղի կանոններին: Այս մարդիկ են սերում և վերարտադրում ազգի հոգևոր ուժը, ծնում հերոսների և առաջնորդների, որոնք ընդունակ են համախմբելու ազգը, գտնելու անհրաժեշտ ռեսուրսները՝ ոտքի կանգնեցնելու պետությունը և վերականգնելու մեր պատմության ընթացքը:

Ազգային միասնականութիւնը. խոչընդոտներ եւ զանոնք յաղթահարելու միջոցներ

Վաչէ Բրուտեան

Ազգային միասնականութիւնը համայն ազգին համախոհութիւնը, համախմբումը և հետևաբար նաև միասնականութիւնն է ազգի ամբողջութեան առնչուող հիմնական խնդրի կամ խնդիրներու շուրջ: Միասնականութիւն, այսինքն՝ միացեալ, հաւաքական կամք: Այս կը նշանակէ, որ տուեալ հաւաքականութիւնը, ազգը պարտաւոր է ունենալ քաղաքական գիտակցութեան այնպիսի մակարդակ մը, որ անդրադառնայ, թէ ուր կը կայանան իր քաղաքական, ընկերային ու տնտեսական ընդհանրական շահերը: Ասի կը կոչուի քաղաքականացում: Այնպէս որ, և սա՝ ի միջի այլոց, քաղաքականացումը այն չէ, երբ ամէն մարդ քաղաքականութենէ կը խօսի…

Երբ թաղեցիները կամ տուեալ գիւղի մը բնակիչները կը հաւաքուին ու հաւաքաբար պահանջ կը դնեն իրենց թաղին կամ գիւղին աղբահանութեան, գիշերային լուսաւորման կամ նման խնդիրներու շուրջ, ատիկա ազգային միասնականութիւն չէ. ատիկա թաղային կամ գիւղական միասնականութիւն է: Հետևաբար ազգային միասնութիւնը կ՚առնչուի ազգի ապագային, անոր ճակատագրին, երկրին ու պետութեան ապահովութեան և գոյատևումին, անոր տնտեսական, ընկերային ու մշակութային համընդհանուր բարգաւաճումին:

Մէկ խօսքով՝ ազգային միասնականութեան նպատակն է՝ 1) պաշտպանել ամբողջ ժողովուրդին (մեր պարագային՝ հայրենաբնակ թէ սփիւռքաբնակ), ապահովել պետութեան ու այս ամբողջին՝ ազգին հաւաքական անվտանգութիւնը ընդդէմ ներքին կամ արտաքին վտանգներու, 2) պատերազմի կամ տագնապներու պարագային ունենալ այնպիսի ամուր ներքին ճակատ մը, որ զօրավիգ կանգնի իր պաշտպանական ուժային համակարգին, առաջին հերթին՝ բանակին, տուեալ տագնապը դիմագրաւող «առաջին գիծի» վրայ պայքարողներուն (օրինակ՝ բնական աղէտի մը պարագային):

Ազգային միասնականութիւնը կենսական ազդակ է յատկապէս մեր պարագային, որովհետև արտաքին սպառնալիքի կամ պատերազմի պարագային բանակը իր թիկունքը պէտք է ամուր ու անսասան զգայ: Եթէ բանակը զգայ, որ իր թիկունքը տարտղնուած է, միասնականութիւն չկայ, կամ դաւաճանութեան երևոյթներ կան, չի կրնար իրմէ սպասուած դերը խաղալ: Կը թուլնայ, կը բարոյալքուի, և հետևաբար ազգը կը պարտուի:

Մեր ազգային միասնականութեան սպառնացող ուժերը

Առաջին հերթին Թուրքիան և Ատրպէյճանն են մեր ազգային համերաշխութեան գլխաւոր թշնամիները:

Թուրքիոյ մտասևեռումն է ամէն գնով և ռազմավարական հարթութեան վրայ պարտութեան

մատնել Հայկական հարցը, որ մօտաւորապէս մէկուկէս դարէ ի վեր լուրջ «գլխացաւանք» է իր համար, իսկ հայութեան համար՝ արդարութեան վերահաստատման պայքար: Կ՚ըսենք ամէն գնով, որովհետև Անգարայի իշխանութիւնները ճիշդ ըմբռնած են, որ հայ-թրքական կնճիռի ամենալուրջ ու «ամենածանր» բաղադրիչը հողային ազդակն է: Հայկական հարցը ուրիշ բան չէ, եթէ ոչ հայ ժողովուրդի հողային, մշակութային ու տնտեսական կորուսեալ իրաւունքներու վերատիրացման խնդիրը: Հետևաբար զարմանալի չէ, որ պաշտօնական Երևանի (Փաշինեանի իշխանութեան) հետ երկխօսութեան Թուրքիոյ նախապայմանները առնչուած են ճիշդ այս՝ հողային հարցին: Այսինքն՝ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման և անոր հետևանքները դարմանելու կոչուած ճիգերէն հրաժարիլ, ներկայ «տը ֆաքթօ» սահմանը օրինականացնել (այսինքն՝ հրաժարիլ հողային որևէ պահանջէ): Եւ ուրեմն, պարզ է, որ Թուրքիա կ՚աշխատի ամէն գնով և ձևով պառակտում մտցնել հայկական ճամբարէն ներս, որպէսզի իր նկատմամբ չստեղծուի հայկական ազգային միասնականութիւն:

Նոյնը և Ատրպէյճանի պարագային՝ Արցախի պրիսմակով դիտուած: Ասկէ՝ Թուրքիա-Ատրպէյճան ռազմավարական մտերմութիւնը, որովհետև Անգարայի մէջ լաւ, շատ լաւ հասկցած էին, որ Ատրպէյճանէն Արցախի ազատագրումը Միացեալ Հայաստան ստեղծելու ճամբուն վրայ առաջին քայլն է, հետևաբար պէտք է խափանել Արցախի շուրջ ձևաւորուած հայկական ազգային միասնականութիւնը: Այս կէտին վրայ իրողութիւն-փաստը այն է, որ Թուրքիա-Ատրպէյճան զինակցութիւնը իր կողքին ունեցաւ… ՀՀ ՔՊ-ական իշխանութիւնը:

Որո՞նք օգնութեան եկան այս հակահայկական ճակատին: Բազմազգեան-անդրազգային (multinational, transnational) ընկերութիւնները, ինչպէս՝ քարիւղի «Շևրոն», «Էքսոն-Մոպիլ», գէնք-զինամթերքի, հանքարդիւնաբերութեան ու այլ բնագաւառներու մէջ գործող: Այս ընկերութիւններ աշխարհը կը նկատեն

մեծ շուկայ մը, ուր իրենք «ի վերուստ» սահմանուած են կողոպտելու տկար, խոցելի կամ փոքր երկիրներու բնական հարստութիւնները և միաժամանակ ամբողջական հակակշիռ հաստատելու ատոնց բաշխիչ գիծերուն վրայ (քարիւղատար, գազատար խողովակներ և այլն)։ Այդ բաշխիչ գիծերէն մէկն է նաև Պաքու-Թիֆլիս-Ճէյհան քարիւղատարը, որուն համար ՀՀ նախագահ Ս. Սարգսեանը տողատակի հասկցուց («Իսկանտէր»ի գործածութեան մասին իր ծանօթ յայտարարութեամբ՝ «Աչքս չեմ թարթելու…»), թէ ատիկա կը գտնուի հայկական բանակի հարուածի հասողութեան ծիրէն ներս։

Կարճ աւելցնենք նաև, որ այս ուժերը չեն ճանչնար ազգային շահեր, ազգային առանձնայատկութիւններ։ Անոնք կը ճանչնան միայն ֆինանսական շահեր ու, տրուած ըլլալով, որ Արևմուտքի քաղաքական ուժի կեդրոններուն վրայ գրեթէ ամբողջական հակակշիռ ունին (Ուաշինկթըն, Լոնտոն, Պրիւքսել-ԵՄ), իրենց դրամական շահերը պաշտպանելու համար չեն վարանիր արշաւելու այս կամ այն երկիրը (Լիպիա, Իրաք, Աֆղանիստան, Սուրիա և այլն)՝ կողոպտելու այդ երկիրներուն բնական հարստութիւնները։ Մէկ խօսքով՝ դրամատիրական պոլշևիզմի գաղափարախօսութեան հետևորդներ են այս ուժերը։

Այս նոյն շրջանակներուն համար ոչ մէկ արժէք ունի Արցախի հայապատկան բնոյթը կամ արդարութեան ի խնդիր հայ ժողովուրդին մղած պայքարը։ Արցախը անոնց համար ոչ միայն «անախորժութիւն» մըն է, այլ նաև վտանգ մը, որուն պատճառով կրնան խնդրոյ առարկայ դառնալ իրենց նիւթական շահերը, երբ հայկական վճռականութեան պատճառով վտանգուի Պաքու-Թիֆլիս-Ճէյհան գիծը կամ նոյնինքն Ատրպէյճանի քարիւղային բոլոր ենթակառոյցները։

Արևմուտքի քաղաքատնտեսական ուժերը կը տիրապետեն նաև «փափուկ ուժի» (soft power) բազմատեսակ զինանոցի՝ մամուլ-քարոզչութիւն (Fox News, CNN, BBC և այլն), ոչ կառավարական հանրային կազմակերպութիւններ (ՀԿներ)՝ մարդկային իրաւունքներու, կենսոլորտի, ընտանեկան խնդիրներու, կանանց իրաւունքներու, խաղաղապաշտութիւն քարոզող շրջանակներ (չմոռնանք՝ դրամը խաղաղութիւն և կայունութիւն «կը սիրէ»)։ Աւելին՝ մշակութային բնագաւառէ ներս՝ ֆիլմեր, տխմար սերիալներ և այլն՝ տարտղնելու համար տուեալ ժողովուրդներու ազգային ինքնութիւնը կամ հաւաքական կերպարը։ Անոնք կը տիրապետեն նաև տնտեսական լծակներու, ինչպէս՝ Համաշխարհային դրամատուն, ԱյԷմԷֆ, միջդրամատնային փոխանցումներու «ՍՈՒԻՖԹ» համակարգ, ամպարկոներ։ Այս «փափուկ ուժի»ն շնորհիւ էր, որ «գունաւոր յեղափոխութիւններ» տեղի ունեցան Վրաստանի, Ուքրանիոյ ու նաև Հայաստանի՛ մէջ (2018 թ.)։

Այս արտաքին երեք ուժերու (Թուրքիա, Ատրպէյճան և Արևմուտք՝ իր լծակից-գործակիցներով) շահերը նոյնացան ընդդէմ Արցախի հարցին ու Հայաստանին, և նոյն այս ուժերն էին (դերերու համապատասխան

Երևան. Արցախյան շարժում, 1988 թ.

բաշխումով), որոնք 2018 թ. իշխանափոխութիւն յառաջացուցին Հայաստանի մէջ՝ վերջնական թիրախ ունենալով Հայկական հարցը՝ հայ ժողովուրդի անժամանցելի իրաւունքները վերջնականապէս թաղելու համար։ Իսկ ՔՊն իր ղեկավարով ցարդ «փայլուն» կերպով կատարած է իրմէ ակնկալուածը՝ նախ խորտակելով Արցախի շուրջ գոյութիւն ունեցող հայկական համերաշխութիւնը, ապա քայքայելով պետական կառոյցները (վարչակառավարման, ուժային, ներառեալ բանակ և ապահովական սպասարկութիւններ) ու այս ձևով ճամբան հարթելով ատրպեճանա-թրքական նախայարձակումին 2020ի սեպտեմբեր 27ին։ Արևմուտքը այս բոլորին մէջ նաեւ ունէր իր թիրախը՝ նեղցնել օղակը Ռուսիոյ շուրջ ու զայն դուրս մղել Կովկասէն ընդհանրապէս։

Աւելին՝ քաղաքական Արևմուտքը համաձայն չէ Հայկական հարցի այնպիսի լուծումին, որ կը պարունակէ հողային հատուցման բաղադրիչը, նաեւ անոր համար, որ ինք օրին պատասխանատուութիւն-յանձնառութիւն ստանձնած է անոր նկատմամբ (Սևր, Ուիլսընեան սահմանագծում), ապա՝ հրաժարած անկէ։

Այնպէս որ, երբ կը խօսինք վերոնշեալ երեք ուժերու շահերու նոյնացումին մասին, այս տուեալներն է, որ նկատի ունինք։ Ասկէ՝ Արևմուտքին դերը 2018 թ. իշխանափոխութեան մէջ։

Ո՞վ և ինչպէ՞ս պիտի ստեղծէ ազգային միասնականութիւնը

Ազգային միասնականութիւն ստեղծելը ամէն բանէ առաջ պետութեան կողմէ և պետական մակարդակով կատարուելիք գործ է, որովհետև պետութեան ձեռքին են այն լծակները, որոնք այս իմաստով կրնան գործածուիլ։

Իսկ ի՞նչ են միջոցները։ Ամփոփ՝ ազգային դաստիարակութիւն՝ մանկապարտէզներէն սկսեալ, կրթական համակարգէն ներս համապատասխան հայեցակարգով ու մեթոտաբանութեամբ, ազգային հերոսի կերպարներու քարոզչութիւն,

այսինքն՝ այն անհատականութիւններուն, որոնք դերակատար եղած են ազգային կազմաւորումին, պետութեան ստեղծումին, ամրապնդումին ու պաշտպանութեան մէջ՝ հրամանատարներէն սկսեալ մինչև շարքային այն զինուորը, որ չվարանեցաւ ձեռնառումբին օղակը քաշել ու իր հետ խորտակել թշնամի զինուորներու կեանքը (օրինակները բազում են)։ Ապա՝ հեռատեսիլ՝ լրատուութեամբ, մեկնաբանութիւններով, ծրագիրներով, վաւերագրական ժապաւէններով. միաժամանակ պէտք է աղբը դուրս շպրտուի հեռատեսիլէն։ Աժան սիրային, գողական, ապականած բարքերու մասին անընդհատ շարունակուող սերիալները կը բթացնեն մեր ազգային գիտակցութիւնը, որ կենսական հիմքն է ազգային միասնականութեան։ Քանի մը տարի առաջ (արաբական երկիրներու մէջ, յատկապէս Սուրիա-Լիբանան ապրողները հաւանաբար գիտեն) սուրիական հեռատեսիլը արտադրեց շարք մը՝ «Պապ ըլ հարա» անունով («Թաղին դուռը»։ հին ատեն ոչ միայն քաղաքները, այլև թաղերը դուռներ կ՚ունենային)։ Այս սերիալը ուրիշ բան չէր, եթէ ոչ մարդկային, ընտանեկան ազնուագոյն արժէքներու և յարգանքի ու վստահութեան վրայ հիմնուած յարաբերութիւններու ընդգծումը՝ ի հակադրութիւն ընչաքաղցութեան, նիւթապաշտութեան և հետևաբար նաև դաւաճանութեան։ Այս ժխտական երևոյթներուն դիմաց փակ կը մնային տուեալ «թաղին դուռները»։ Եւ կամ՝ քանի մը տարի առաջ «Երկիր մեդիայի» ցուցադրած քորէական արտադրութեան սերիալ մը, որ զուտ ազգային-հայրենասիրական նիւթով էր։ Սակայն «Երկիր մեդիայի» ճիգը, գովելի ըլլալով հանդերձ, դժբախտաբար, պետական մակարդակով վարքագծային չեղաւ (անշուշտ, ոչ այս ալիքին մեղքով)։

Մէկ խօսքով՝ ազգային միասնականութիւն յառաջացնելը ամէնէն առաջ ՊԵՏԱԿԱ՛Ն մակարդակով կատարուելիք աշխատանք է. ինչքան ալ Դաշնակցութիւնը կամ այլ ուժեր տրամադիր ըլլան այդ ուղղութեամբ աշխատելու, ատիկա չի կրնար տալ ակնկալելի արդիւնքը։

Այսօր ճգնաժամային օրեր կ՚ապրինք, միաժամանակ՝ վճռական։ Վճռական ու ամենակարևորը՝ ոչ… անսխալնութաց։ Ներկայ դրութեամբ ունինք երկիր մը, որուն պետական կառոյցները կիսաքայքայուած վիճակի մէջ են։ Ունինք հայապատկան հողերու 25 տոկոսի կորուստ, իսկ Արցախի Հանրապետութեան պարագային՝ 75 տոկոսի։ Այս կորուստին հետ՝ տասնեակ հազարաւոր տեղահանուածներ, որոնք կը տուայտին անորոշութեան մէջ։

Ունինք աւելի քան 4 հազար նահատակներ մեր բանակէն։ Այո՛, այն նոյն բանակէն, որ Ապրիլեան քառօրեային քարուքանդ ըրած էր ատրպէճանական «Եաշմա» կոչուած յատուկ զօրախումբերը։

Աւելցնենք, որ ունինք իշխանութիւն մը, որ անհաղորդ է մեր ազգային շահերուն, անհաղորդ է մեր պատմութեան, մեր իդեաներուն և իտէալներուն։ Անոնք պարզապէս իրենց բոլշևիկ հոգեհայրերուն նման կտրուած են իրենց ազգային արմատներէն ու կը ծառայեն միայն ու միայն միջազգային դրամատիրական գաղափարախօսութեան, կը ծառայեն այդ գաղափարախօսութեան հետամուտ արտաքին ուժերուն, որու որ ըլլայ, միայն թէ պահեն իրենց իշխանութիւնը։

Կրնաք արդարօրէն հարցնել. «Լա՛ւ, եթէ այս է իրականութիւնը, մենք ինչպէ՞ս դէմ դնենք այս ուժերուն՝ ներքին և արտաքին»։

Նախ՝ այս հարցադրումը ինքնին պարտուողական է։ Եթէ Դաշնակցութեան հիմնադիրները այդպէս մտածէին, ինչպէ՞ս պիտի պայքարէին օսմանեան բռնատիրութեան դէմ, ինչպէ՞ս պիտի առաջնորդէին մեր ժողովուրդին ազգային-ազատագրական պայքարը, ինչպէ՞ս պիտի պետականութիւն ստեղծէին 1918 թ., ինչպէ՞ս պիտի պարտադրէին, որ մեծ պետութիւնները ճանչնային մեր դէմ գործուած ոճիրը, ինչպէ՞ս պիտի ազատագրէինք Արցախը։

Յանցեալին ևս նման ծանրագոյն պայմաններու մէջ եղած ենք։ Նոյնիսկ ասկէ շա՛տ աւելի ծանր։

1917 տարուան այս ամսուն էր մօտաւորապէս, որ Կովկասեան ճակատը սկսած էր քայքայուել՝ այդ օրերու կլոպալիստական ուժերու, այսինքն՝ Ռուսիոյ մէջ նոր իշխանութեան տիրացած բոլշևիկեան վարչակազմի որոշումով։ Այդ օրերուն ո՛չ պետութիւն ունէինք, ո՛չ կանոնաւոր բանակ, ո՛չ ալ համապատասխան կառոյցներ։ Բայց կար ուրիշ բան մը, որ այսօր չենք տեսներ մեր հայրենիքի պետական կառոյցներուն, յատկապէս գործադիր իշխանութեան մէջ. այդ օրերուն մենք ունէինք նուիրեալներ, նուիրեալներու փաղանգներ։ Այդ նուիրեալները ունէին գաղափարական համոզումներ։ Գաղափարապաշտ էին։ Զինուած էին ամէնէն ուժեղ զէնքով՝ գաղափարի՛ ու հաւատքի զէնքերով։

Փրկութիւնը եկաւ գաղափարներու աշխարհէն։ Փրկութիւնը եկաւ գաղափարի այդ աշխարհին մէջ թրծուած Արամ Մանուկեանի ու իր սերնդակից-գործակիցներուն տեսքով։ Անոնք սոսկական անհատներ չէին. անոնք գաղափարի հսկաներ էին՝ թրծուած Դաշնակցութեան գաղափարի ու գործի քուրային մէջ։ Այդ նոյն գաղափարական աշխարհէն ներշնչուելով՝ մենք գործեցինք Սփիւռքի մէջ տասնամեակներով, գործեցինք Արցախի ազատագրական պայքարին ընթացքին ու կը պայքարինք այսօր ևս, որպէսզի կարենանք դիմադրել մեր պետութեան ղեկը բռնագրաւած այս այլանդակ ու դաւաճանական խմբակին ու վոնտենք զանոնք իշխանական դիրքերէն։ Թրքահաճոյ իշխանութիւնները տեղ չունին մեր պետութեան ղեկին։ Անոնք գաղափարական ոչ մէկ կապ ունին մեր ժողովուրդի ստեղծած արժէքներուն հետ։ Անոնք ոչ մէկ կապ ունին մեր ժողովուրդի ստեղծած քաղաքական մտածողութեան հետ։ Անոնք ոչ միայն չեն կարդացած Ռուբէն Տէր-Մինասեանի ու անոր սերնդակիցներուն ստեղծած ռազմավարական միտքի հատորները, այլև չեն լսած այդ անուններն իսկ։

Այս գաղափարական աշխարհն է, որ հենքը պիտի հանդիսանայ ազգային միասնականութեան։

Իրանի տարածաշրջանային շահերն ու հայկական գործոնը

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

Սույն թվականի փետրվարի 6-ին Իրանի Իսլամական Հանրապետության դիվանագիտական շրջանակները տեղեկատվական արտահոսք են արել այն մասին, որ պաշտոնական Թեհրանը վերջնական որոշում ունի, այն է՝ Պարսից ծոցից Սև ծով ձգվող էներգետիկ միջանցքը գործարկելու համար Իրանը չի օգտագործելու Նախիջևանի տարածքը. Որոշվել է, որ այն պետք է անցնի ՀՀ տարածքով, մասնավորապես՝ Սյունիքի մարզով: Նշվում է նաև, որ Կապանում հյուպատոսարան հիմնելու Իրանի որոշումը նույնպես խոսում է տարածաշրջանի կարևորության մասին: «Երևանը Իրանի օրակարգից դուրս բերելու Բաքվի փորձերը դեռևս հաջողությամբ չեն պսակվել: Իրանը պահպանում է իր դիրքերը տարածաշրջանում և ձգտում է դառնալու Հարավային Կովկասի հիմնական խաղացողներից մեկը»[1],- նշված է հիշատակված տեքստում:

Իրանի նման որոշման մասին իմ գրառումը, ինչպես նաև մտորումներս այն մասին, թե ինչ օգուտներ և վնասներ կարող է ունենալ Հայաստանը այդ սցենարի իրագործման դեպքում, լայն արձագանք գտան հայկական մամուլում և փորձագիտական շրջանակներում: 2-3 օր շարունակ տարբեր պարբերականներ ու հեղինակներ գրում էին այն մասին, որ Պարսից ծոց-Սև ծով տարանցիկ միջանցքի գործարկման ծրագիրը, որի շուրջ բանակցությունները դեռևս ընթացքի մեջ են, ենթադրում է նաև Ադրբեջանի մասնակցություն այդ ծրագրին: Եվ սա բացարձակ ճշմարտություն է. Իրանի ղեկավարները բազմիցս են հայտարարել, որ իրենց համար կարևոր է համագործակցությունը թե՛ Հայաստանի և թե՛ Ադրբեջանի հետ: Ընդ որում, իրանական կողմն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում նաև Նախիջևանի տարածքով կոմունիկացիաներ գործարկելու հնարավորությանը: Եվ դա շատ հասկանալի է. Նախիջևանը Իրանի կողմից դիտարկվում է որպես արտաքին աշխարհ տանող կարևոր պատուհան, որտեղ թուրքական ազդեցությունը հավասարակշռելու համար պետք է լուրջ աշխատանք կատարել:

Բայց կարևոր երկու հանգամանք այնուամենայնիվ պետք է հաշվի առնել: Նախ՝ խոսվում է ոչ թե Նախիջևանի կոմունիկացիոն հնարավորություններից ամբողջապես հրաժարվելու Իրանի ցանկության, այլ գազի արտահանման մեկ այլ, մասնավորապես ՀՀ տարածքով անցնող ճանապարհների ընտրության մասին: Եվ երկրորդ՝ հայտնի փաստ է, որ Իրանի դիվանագետների հայտարարություններն ու նրանց իրական ծրագրերը կարող են շատ հակասական լինել: Լեզուն դիվանագետին տրված է մտքերը թաքցնելու

համար: Իրանի օրինակը, թերևս, այս մտքի՝ բոլոր ժամանակների լավագույն ապացույցն է: Ուստի Իսլամական Հանրապետության անելիքները հասկանալու համար անհրաժեշտ է առաջին հերթին ուշադրություն դարձնել ոչ թե նրա պաշտոնյաների հայտարարություններին, այլ երկրի իրական շահերին:

Իսկ ո՞րն է Իրանի շահը մեր տարածաշրջանում: Այս հարցն ունի կարճ և երկար պատասխաններ: Եթե կարճ, ապա Հարավային Կովկասն Իրանի համար առաջին հերթին դեպի Սև ծով, ապա նաև Եվրոպա և Ռուսաստան տանող կարևորագույն ճանապարհ է, որը կարող է տնտեսական և քաղաքական մեծ շահաբաժիններ բերել այդ երկրին: Մյուս կողմից՝ Հարավային Կովկասն աշխարհաքաղաքական մրցակցության այն հարթակն է, որտեղ Իրանի դիրքերի թուլացումը կարող է կենսական մակարդակի սպառնալիքներ ստեղծել այդ երկրի համար: Այն հնարավորությունների ու ռիսկերի տարածաշրջան է, որտեղ Իրանի մրցակիցները պարզապես անթիվ, անհամար են: Եվ բնական է, որ Թեհրանը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում մեր տարածաշրջանում ընթացող զարգացումները, փորձում տեղի և արտատարածաշրջանային ուժերի ազդեցությունները հավասարակշռող քաղաքականություն մշակել և մարտավարություններ կիրառել:

Վերոնշյալ հարցադրման երկար պատասխանը, ինչպես կարելի է կռահել, լայնածավալ հետազոտությունների թեմա է, և շատ կարևոր է, որ Հայաստանում նման գործունեություն ծավալող բավական պատրաստված մասնագետներ ունենք: Մենք պետք է հստակ հասկանանք, որ Իրանի ազդեցությունը մեր տարածաշրջանի և հատկապես մեր երկրի անվտանգության ու արտաքին քաղաքականության վրա եղել է ու լինելու է շատ վճռական: Եվ հիմա՝ 2020 թ. 44-օրյա պատերազմից

հետո, այդ իրողությունն ակնհայտ երևում է հարավկովկասյան զարգացումներում: Այսպես՝ մեկ տարի էլ չի անցել այն բանից, երբ ՀՀ տարածքների նկատմամբ Ադրբեջանի ագրեսիվ գործողությունների հետևանքով բոլորս դարձանք Իրանի հստակ և նպատակաուղղված քայլերի ականատեսը, երբ Իսլամական Հանրապետությունը լայնամասշտաբ զորավարժություններ սկսեց Ադրբեջանի և Արցախի օկուպացված տարածքների սահմանին՝ հստակ ցույց տալով, որ Սյունիքի դեմ թուրք-ադրբեջանական սպառնալիքների կյանքի կոչման փորձի պարագայում էլ իրենք կարող են պատերազմ սկսել Ադրբեջանի դեմ և կանխել նրանց այդ ծրագրերը[2]:

2021 թ. աշնանը Իրանի Իսլամական Հանրապետությունը փաստացի հանդես եկավ որպես Հայաստանի տարածքային ամբողջականության երաշխավոր՝ ակնարկելով, որ իրենց համար նման կարևոր խնդիրը Թեհրանը չի կարող վստահել միայն Ռուսաստանին: Այդ ժամանակահատվածում Իրանը շատ բաց էր խոսում իր շահերի, մտադրությունների ու ծրագրերի մասին: 2021 թ. հոկտեմբերին տեղի ունեցավ Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանի այցը Թեհրան[3], որտեղ վերջինս իրանական կողմից անվտանգության երաշխիքներ և երկկողմանի հարաբերությունները զարգացնելու խոստումներ ստացավ: Միևնույն ժամանակ պաշտոնական Թեհրանը դիվանագիտական բարդ բանակցություններ էր վարում Ռուսաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի հետ, որոնց հետևանքով լարվածությունը հայ-ադրբեջանական սահմանին և Արցախի օկուպացված տարածքների հատման կետում զգալիորեն թուլացավ:

Հարավային Կովկասում իր, այսպես կոչված, կարմիր գծերը գծելուց հետո իրանական կողմն առանց ժամանակ կորցնելու անցել է ռազմավարական նշանակություն ունեցող հաջորդ ծրագրի՝ դեպի Սև ծովի ավազան և Արևելյան Եվրոպա տանող կոմունիկացիոն միջանցքի ստեղծման աշխատանքներին: 2021 թ. մարտի 27-ին Իրանի և

Իրանի, Ադրբեջանի և Թուրքմենստանի նախագահները ստորագրեցին թուրքմենական գազի տարանցման մասին պայմանագիր

ՀՀ արտգործնախարար Արարատ Միրզոյանը Թեհրանում՝ Իրանի արտգործնախարար Հոսեյն Ամիր Աբդոլահիանի հետ հանդիպման ժամանակ

Չինաստանի միջև ստորագրվել է «Ռազմավարական համագործակցության մասին» համաձայնագիր[4], որը, ըստ մամուլի հաղորդած տեղեկությունների, առաջին հերթին վերաբերում է էներգետիկ սեկտորին և նոր ենթակառուցվածքների ստեղծմանը: Մի քանի ամիս անց՝ նոյեմբերի 29-ին, Իրանը հաջորդ կարևոր պայմանագիրն է ստորագրում, այս անգամ՝ Ադրբեջանի և Թուրքմենստանի հետ[5]: Ըստ այդ պայմանագրի, որն ուժի մեջ է մտել 2021 թ. դեկտեմբերի 2-ից, Իրանը Թուրքմենստանից տարեկան մինչև 2 միլիարդ խորանարդ մետր գազ է ստանալու, նույնչափ էլ փոխանցելու է Ադրբեջանին: Պարզ է, որ Ադրբեջանն էլ իր հերթին այդ գազը վաճառելու է երրորդ կողմին: Ստացվում է, որ Իրանը թուրքմենական գազն ադրբեջանական ենթակառուցվածքներով Եվրոպային վաճառելու միջնորդ երկիր է դարձել, ինչը միանշանակ փոխում է Կասպից ծովի ավազանի էներգակիրների արտահանման գործում Իրանի դերն ու նշանակությունը:

Ներկայումս պաշտոնական Թեհրանն ակտիվորեն աշխատում է Ադրբեջանի և Հայաստանի տարածքներով բեռնափոխադրումներ իրականացնելու հնարավորությունները մեծացնելու ուղղությամբ: Կառուցվում են նոր ճանապարհներ, երկաթուղային գծեր և կամուրջներ, վերազինվում սահմանային անցակետերը և այլն: Ավելին՝ իրանական կողմը դիտարկում է նաև Արցախի օկուպացված տարածքներում ներդրումներ անելու հնարավորությունը: Համատեղ համապարփակ աշխատանքների ծրագրի լիարժեք գործողության վերականգնման շուրջ Վիեննայում ներկա ժամանակահատվածում վարվող բանակցությունների հաջող ընթացքը թույլ է տալիս ենթադրել, որ շուտով Իրանը

կձերբազատվի նաև արևմտյան պատժամիջոցներից, ինչը լրացուցիչ ակտիվություն կհաղորդի Թեհրանի՝ մեր տարածաշրջանում իրականացվող գործողություններին: Պարզ է, որ այս իրավիճակում իրանական կողմն ամեն ինչ անելու է հարմար պահն օգտագործելու և իր դիրքերն ամրապնդելու համար: Մանավանդ որ խոսքը ոչ միայն իրանական ապրանքները նոր շուկաներ հանելու հրաշալի հնարավորության, այլև չինական «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» աշխարհատնտեսական հայտնի ծրագրի կարևոր հատվածում օպերատորի դեր ստանձնելու հնարավորության մասին է:

Միակ հարցը, որ կարող է խոչընդոտել Հարավային Կովկասում Իրանի ծրագրերի իրագործումը, Արցախի հակամարտության չկարգավորված լինելն է ու նոր պատերազմի հավանականությունը: Ահա այստեղ է, որ Թեհրանը մտածելու և արդյունավետ լուծումներ գտնելու խնդիր ունի: Բանն այն է, որ իրանական կողմը ցանկանում է առավելագույնս նվազեցնել թուրք-ադրբեջանական դաշինքի ազդեցությունը ոչ միայն իր կոմունիկացիոն հնարավորությունների վրա, այլև ընդհանրապես հարավկովկասյան տարածաշրջանում: Մյուս կողմից՝ ակնհայտ է, որ Հայաստանի աշխարհագրությունը, ենթակառուցվածքների վիճակն ու քաղաքական դրությունը չափազանց խնդրահարույց են մեր երկրի տարածքով նման խոշոր ծրագրեր իրագործելու համար: Ուստի Իրանը փորձում է միջանկյալ լուծումներ գտնել: Օրինակ՝ խոսվում է այն մասին, որ գազի արտահանման համար օգտագործվելու է ոչ թե Նախիջևանի, այլ Հայաստանի տարածքը: Բայց այս դեպքում էլ պարզ է, որ Նախիջևան դեռ չի նշանակում Ադրբեջան: Այսինքն՝ պարզ է, որ Պարսից ծոցից Սև ծով ձգվող էներգետիկ միջանցքում, միևնույն է, Իրանը հիմնական շեշտը դնելու է Ադրբեջանի վրա: Իսկ Հայաստանին լավագույն դեպքում որոշ փշուրներ են հասնելու, այն էլ՝ միայն նրա համար, որ մենք մեզ տարածաշրջանային այդ ծրագրերից դուրս չզգանք: Իսկ ավելի ճիշտ, որպեսզի ՀՀ իշխանությունները միշտ կարողանան «բացատրել», թե ինչու չի կարելի փորձել վերականգնել Արցախում մեր ունեցած կորուստները:

Ի մի բերելով այս ամենը՝ ցավոք գալիս ենք այն եզրահանգման, որ հարավկովկասյան աշխարհաքաղաքական ներկա զարգացումներում տարածաշրջանային բոլոր երկրները, բացի Հայաստանից, ունեն իրենց շահերի սպասարկման կայուն իրագործվող ծրագրեր, որոնց մի մասն էլ կյանքի է կոչվում ի հաշիվ մեր ազգային շահերի: Հայաստանն ունի բոլորի խաղաքարտերը խառնելու հնարավորություն: Բայց դա դժվար իրագործելի, վտանգավոր սցենար է, որը միանշանակ վեր է այս իշխանությունների կարողություններից: Ավելին՝ ՀՀ իշխանություններն աշխարհաքաղաքական այս բարդ իրավիճակում ստորադասել են հայկական պետությունների շահերն իրենց անձնական քաղաքական հետաքրքրություններին, իսկ հաճախ էլ սպասարկում են թուրք-ադրբեջանական դաշինքի շահերը: Այս ամենը հանգեցրել է նրան, որ հայ ժողովրդին առաջարկվում է բավարարվել իր հնարավորությունների չնչին մասով, չխանգարել այլ երկրների տարածաշրջանային ծրագրերին, չփորձել նույնիսկ մտածել կորցրածը վերականգնելու մասին, լինել գործիք այլոց ձեռքին և շարունակել պահպանել Նիկոլի իշխանությունը: ■

Իրանական զորքը Ադրբեջանի սահմանի մոտ

Հղումներ

1) Дневник иранского журналиста, https://t.me/khayalpressa313/3374, 06.02.2022:

2) Տես Army Ground Force to hold military drill in northwest Iran, https://en.mehrnews.com/news/179228/Army-Ground-Force-to-hold-military-drill-in-northwest-Iran, 30.09.2021:

3) Տես Հայաստանի ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հանդիպումը Իրանի ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի հետ, https://www.mfa.am/hy/press-releases/2021/10/04/meeting_FMs_Armenia_Iran/11112, 04.10.2021:

4) Տես Иран и Китай подписали соглашение о сотрудничестве сроком на 25 лет, https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/11010689, 27.03.2021:

5) Տես Иран, Азербайджан и Туркменистан подписали соглашение о своповых поставках газа, https://www.interfax.ru/world/805405, 28.11.2021:

Հայաստանի Հանրապետության եվրասիական ինտեգրման իրավական հենքը որպես ՀՀ անվտանգության բաղադրիչ

Արփի Աբրահամյան
ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության վարչության անդամ, քաղաքագիտության և ազգային անվտանգության մասնագետ



Անկախությունից ի վեր Հարավային Կովկասում անվտանգային միջավայրի ձևավորման, արտաքին մարտահրավերների կանխարգելման, ռազմաքաղաքական, տնտեսական անվտանգության, խաղաղության և կայունության ապահովման հարցերում Հայաստանն առավելապես դրսևորել է արտաքին քաղաքական ռուսական կողմնորոշում (ԵԱՏՄ, ՀԱՊԿ):

ՀՀ-ի և ՌԴ-ի միջև զարգացել են երկկողմ ռազմավարական դաշնակցային հարաբերություններ, որոնց շրջանակում առկա իրավապայմանագրային դաշտը (ռազմավարական նշանակության պայմանագրերն ու համաձայնագրերը)[1], համագործակցությունը առևտրատնտեսական, պաշտպանական և ռազմատեխնիկական ոլորտներում, էներգակիրների (բնական գազ, միջուկային վառելիք, վերամշակված նավթային արտադրանք) ձեռքբերումը առանցքային գործոններ են ՀՀ անվտանգության ապահովման գործում:

Դեռևս 2013 թ. սեպտեմբերի 3-ին Մոսկվայում տեղի ունեցած բանակցությունների ընթացքում ՀՀ-ՌԴ նախագահները հաստատում են Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության նպատակադրումը եվրասիական տարածքում տնտեսական ինտեգրման գործընթացների հետագա զարգացման վերաբերյալ[2]:

Հայաստանի Հանրապետության՝ ՄՄ-ին (Մաքսային միություն) և ՄՏՏ-ին (Միասնական տնտեսական տարածք) միանալու որոշումը ողջունվում է Մինսկի բարձրագույն խորհրդում 2013 թ. հոկտեմբերին: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նախաձեռնությամբ ստորագրվում է հուշագիր փոխգործակցության խորացման վերաբերյալ, ձևավորվում է աշխատանքային խումբ, և մշակվում «ճանապարհային քարտեզի» նախագիծ: 2013 թ. դեկտեմբերին այդ փաստաթուղթը հաստատվում է Բարձրագույն խորհրդի կողմից, ըստ որի՝ 2014 թ. Հայաստանը կարող էր մտնել ՄՄ և ԵՏՄ (Եվրասիական տնտեսական միություն):

Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը՝ մի կողմից, և Հայաստանի Հանրապետությունը՝ մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), 2014 թ. հոկտեմբերի 10-ին Բելառուսի Հանրապետության Մինսկ քաղաքում ստորագրեցին Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու պայմանագիրը[3]:

Պայմանագիրն ստորագրող կողմերն առաջնորդվել են եվրասիական ինտեգրման գործընթացին ՀՀ մասնակցության վերաբերյալ Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության ղեկավարների կողմից 2013 թ. հոկտեմբերի 24-ին արված հայտարարությամբ: Հաշվի է առնվել այն, որ Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային հիմքը հանդիսացող միջազգային պայմանագրերը դարձել են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թ. մայիսի 29-ի պայմանագրի հիմքը և փաստում են նշված միջազգային պայմանագրերով նախատեսված պարտավորությունները կատարելու ՀՀ պատրաստակամությունը: Կողմերը հաշվի են առել նաև Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության Մաքսային միությանն ու Միասնական տնտեսական տարածքին միանալու համար Հայաստանի Հանրապետության կողմից անհրաժեշտ միջոցառումների իրականացումը:

Համաձայն 1-ին հոդվածի՝ ՀՀ-ն միանում է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թ. մայիսի 29-ի պայմանագրին, ինչպես նաև Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային հիմքի ձևավորման շրջանակներում կնքված ու Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերի՝ սույն պայմանագրի 1-ին հավելվածով սահմանված ցանկին համապատասխան, և սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից դառնում է Եվրասիական տնտեսական միության անդամ:

Հավելենք, որ սույն պայմանագրի 1-ին հավելվածում ներկայացվում է Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային հիմքի ձևավորման շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերի ցանկը, որոնց միանում է Հայաստանի Հանրապետությունը: Այս առումով կարևորվում է 1-ին հավելվածի 18-րդ կետը՝ «Մաքսային միության մաքսային տարածքում ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիների և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի հետ կապված հարցերի վերաբերյալ» 2010 թ. հունիսի 18-ի համաձայնագիրը: Այդ համաձայնագրով նախատեսվում էր ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի քաղաքում «Սյունիք» ազատ տնտեսական գոտու ստեղծում[4]:

Եթե մինչև սույն պայմանագրի ուժի մեջ մտնելը ստորագրվի կամ ուժի մեջ մտնի Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության ու

Ռուսաստանի Դաշնության միջև կնքված՝ Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի գործունեությանն առնչվող հարցերով միջազգային պայմանագիր, որի մասին նշված չէ սույն պայմանագրի 1-ին հավելվածում, ապա ՀՀ-ն ստանձնում է առանձին արձանագրությամբ այդ միջազգային պայմանագրին միանալու պարտավորություն՝ վերջինիս ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ, սակայն ոչ շուտ, քան սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելը: Սա վկայում է ԵԱՏՄ-ի բաց լինելու մասին, ինչն էլ անդամ երկրների համար ապահովում է հնարավորություններ՝ ինքնուրույն զարգացնելու արտաքին տնտեսական փոխշահավետ հարաբերություններ ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երկրների հետ:

Հայաստանի Հանրապետությունը, անդամակցելով Եվրասիական միությանը, միաժամանակ զարգացնում է հարաբերությունները Եվրամիության հետ նոր ձևաչափով (2017 թ. նոյեմբերի 24, Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր[5]):

Համաձայն 2-րդ հոդվածի՝ սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից ԵԱՏՄ մարմինների ակտերը, ինչպես նաև Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումները, որոնք գործադրվելու են սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից, ենթակա են կիրառման ՀՀ տարածքում՝ հաշվի առնելով սույն պայմանագրի 3-րդ հավելվածով սահմանված դրույթները:

ՀՀ անվտանգության, հատկապես ռազմական անվտանգության երաշխավորման ու ռազմական ներուժի զարգացման, ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման տեսանկյունից առանձնակի կարևորություն ունեն 3-րդ հավելվածի 44-րդ կետի 1-ին և 3-րդ դրույթները:

Համաձայն 1-ին դրույթի՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ներմուծման մաքսատուրքերից ազատվում են ռազմական նշանակության ապրանքները, որոնք ՀՀ 2015-2022 թթ. ներմուծվել են ՀՀ զինված ուժերի կարիքների բավարարման համար և չեն արտադրվում Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետություններում:

Համաձայն 3-րդ դրույթի՝ սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ներմուծման մաքսատուրքերից ազատվում են այն ապրանքները, որոնք Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք են ներմուծվում ՀՀ տարածքում ատոմային էլեկտրակայանի շինարարության և արդիականացման ու երաշխիքային ժամկետում շահագործման նպատակներով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թ. մարտի 19-ի թիվ 9 որոշմամբ հաստատված՝ երաշխիքային ժամկետում ատոմային էլեկտրակայանի շինարարության և դրա շահագործման նպատակներով Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների ցանկին համապատասխան:

Հայաստանի համար ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման հսկողության, անվտանգության պահպանման առումով առանձնապես կարևոր են 5-րդ հավելվածի 4-րդ և 8-րդ կետերի դրույթները (ՀՀ ներկայիս իրավիճակով պայմանավորված):

Համաձայն 4-րդ դրույթի՝ օտարերկրյա պետությունների տարածքներով Միության մաքսային տարածքից դեպի Միության մաքսային տարածք Եվրասիական տնտեսական միության ապրանքների տեղափոխումն իրականացվում է Մաքսային միության մաքսային օրենսգրքի, Միության իրավունքի մաս կազմող՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող այլ միջազգային պայմանագրերի և ակտերի համաձայն՝ հաշվի առնելով սույն արձանագրությամբ սահմանված առանձնահատկությունները:

Համաձայն 8-րդ դրույթի՝ օտարերկրյա պետությունների տարածքներով Միության մաքսային տարածքից դեպի Միության մաքսային տարածք ապրանքների տեղափոխման նկատմամբ հսկողությունն իրականացվում է անդամ պետությունների մաքսային մարմինների տեղեկատվական փոխգործակցության տեխնոլոգիայի կիրառմամբ:

Համաձայն 5-րդ հոդվածի՝ սույն պայմանագրի դրույթների մեկնաբանման և (կամ) կիրառման առումով ծագած վեճերը կարգավորվում են ըստ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թ. մայիսի 29-ի պայմանագրի 112-րդ հոդվածի, այն է՝ խորհրդակցությունների ու բանակցությունների միջոցով:

Համաձայն ԵԱՏՄ պայմանագրի 112-րդ հոդվածի՝ խորհրդակցությունների ու բանակցությունների անցկացման վերաբերյալ վեճի մի կողմից մյուս կողմին հասցեագրված պաշտոնական գրավոր դիմումը ներկայացնելու օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում, համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում, եթե Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտով (սույն պայմանագրի 2-րդ հավելված) այլ ժամկետ նախատեսված չէ, վեճի կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ հարցը հանձնել ԵՏՄ դատարանի քննությանը, եթե հարցի կարգավորման եղանակների վերաբերյալ կողմերի միջև այլ պայմանավորվածություն ձեռք չի բերվել[6]:

Համաձայն 6-րդ հոդվածի՝ սույն պայմանագիրը դառնում է ԵԱՏՄ իրավունքի մաս, ենթակա է վավերացման և ուժի մեջ է մտնում դրա համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի՝ Կողմերի կողմից կատարման մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի՝ դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից, բայց ոչ շուտ, քան «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թ. մայիսի 29-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվա հաջորդ օրը:

Սույն պայմանագրի բնօրինակը (կազմված է մեկ օրինակից ռուսերենով) պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում (Մոսկվա), որը՝ որպես սույն պայմանագրի ավանդապահ, կողմերից յուրաքանչյուրին ուղարկում է դրա հաստատված պատճենը:

Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրին միանալու պայմանագիրն ուժի մեջ է մտել 2015 թ. հունվարի 2-ին[7]:

2015 թ. Եվրասիական բարձրագույն տնտեսական խորհրդի կողմից որոշվել են մինչև 2030 թվականը ԵԱՏՄ տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները, սահմանվել են զարգացման գերակայությունները[8], համաձայն որոնց՝ Հայաստանի անդամակցումը ԵՏՄ-ին նախատեսում է էլեկտրաէներգիայի միասնական շուկայի ձևավորում՝ նվազեցնելով ՀՀ-ի համար էներգետիկ ռեսուրսների արժեքը: Սա

հնարավորություն է ՀՀ էլեկտրաէներգետիկ ընկերությունների համար մրցունակ մասնակիցներ դառնալու ԵԱՏՄ ընդհանուր շուկայում և իրացնելու տարանցման ու արտահանման ոլորտներում եղած ներուժը:

ԵԱՏՄ շուկաներ և երրորդ երկրներ արտահանման ծավալների աճ, արտաքին առևտրի քաղաքականության հետևողականություն, մասնավորապես՝ արտաքին առևտրի ընդլայնում, հայրենական արտադրողների պաշտպանություն, տրանսպորտային ուղիների ապաշրջափակում և տրանսպորտային համակարգի բարելավում:

Հայաստանի համար առավել կարևոր և անհետաձգելի խնդիրներ են տրանսպորտային համակարգի դիվերսիֆիկացումը, ենթակառուցվածքների կատարելագործումը, ինչը թույլ է տալիս ինտեգրվել տարածաշրջանային առևտրին (ազատ տնտեսական գոտու ստեղծում): Այս համատեքստում բացառիկ նշանակություն է ձեռք բերում ՌԴ-ի հետ երկաթուղային հաղորդակցության վերականգնումը: Այդ առումով կարևոր է ՀՀ-ԵԱՏՄ շրջանակներում երկու խոշոր նախագծերի իրականացումը՝ Հայաստան-Իրան երկաթուղու կառուցումը և Իրանի հետ սահմանին ազատ տնտեսական գոտու ստեղծումը:

ՀՀ-ի համար առևտրատնտեսական հարաբերությունների սերտացումը Իրանի և տարածաշրջանի այլ երկրների հետ նշանակում է օտարերկրյա ներդրումների ձեռքբերում, աշխատատեղերի ստեղծում, բարձր տեխնոլոգիական արտադրանքի տեսակարար կշռի աճ, ընդգծում է ՀՀ-ի դերը որպես կամուրջ ԵԱՏՄ-ի և Վրաստանի և, որ ամենակարևորն է, ԵԱՏՄ-ի և ԵՄ-ի միջև: ԵԱՏՄ երկրների համար սա նաև Իրանի, Վրաստանի, ԵՄ-ի և մի շարք այլ պետությունների շուկաներ մուտք գործելու հնարավորության պատուհան է: Սա Հայաստանի համար ոչ միայն տարածաշրջանային, այլև միջազգային տնտեսական ինտեգրացիայի ռազմավարական կարևորագույն ուղղություն է: Այսինքն՝ Հայաստանի անդամակցումը ԵԱՏՄ միջազգային ինտեգրացիոն միավորմանը հնարավորություն է ՀՀ բազմավեկտոր արտաքին առևտրի քաղաքականության իրականացման, առաջին հերթին՝ ԵՄ-ի, Իրանի և հարևան այլ երկրների հետ: Սա բխում է Հայաստանի ազգային և պետական շահերից, բարձրացնում ՀՀ անվտանգությունը:

2020 թ. արցախյան պատերազմի հետևանքները կասեցրին վերոնշյալ նպատակային ծրագրերի իրագործումը, փոխվեց ռազմաքաղաքական հավասարակշռությունը Հարավային Կովկասում: Տարածաշրջանը հայտնվեց աշխարհաքաղաքական նոր վերաձևումների հորձանուտում:

Հայաստանի իշխանությունների պարտվողական քաղաքականությունը հանգեցրեց Արցախի և Հայաստանի հողերի, ռազմավարական ճանապարհների կորստյան, հայ-իրանական հարաբերությունների վատթարացման (Գորիս-Կապան ճանապարհի մի մասի հանձնումը թշնամուն, ադրբեջանական մաքսակետի տեղադրումը), հայ-ռուսական հարաբերությունների անկայունության (ՀՀ ազգային անվտանգության նոր ռազմավարությունում[9] ռուսական գործոնի կարևորությունը լիարժեքորեն հաշվի չի առնվել):

Թուրք-ադրբեջանական սպառնալիքը ենթադրում է նոր մարտահրավերներ ԵԱՏՄ անդամ երկիր Հայաստանի Հանրապետության համար:

Թուրքիայի առաջնորդությամբ Թուրքալեզու ազգերի միության (Թուրքիա, Ադրբեջան, Ղազախստան, Ուզբեկստան, Ղրղզստան) կողմից պարբերաբար բարձրացվում է եվրասիական տարածաշրջանում տնտեսական ինտեգրացիայի նոր միավորում, ազատ առևտրի գոտի ստեղծելու հարցը:

Նշենք, որ Թուրքալեզու ազգերի միությունը 2009 թ. Նախիջևանում հիմնված «Թյուրքական խորհուրդ» միջազգային կազմակերպությունն է, որի առանցքային նպատակը թուրքալեզու ազգերի միավորումն է, համաթուրանական բանակի կազմավորումը[10]: Սա ենթադրում է անվտանգության լրջագույն խնդիրներ ոչ միայն Հայաստանի, այլև Ռուսաստանի համար:

Ռուսաստանի Դաշնության համար Հարավային Կովկասը ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող տարածաշրջան է: Արտաքին բախումների հնարավորությունը գիտակցելով, առաջնորդվելով աշխարհաքաղաքական սեփական շահերով՝ Ռուսաստանը վարում է ակտիվ քաղաքականություն տարածաշրջանում (ռուս-թուրքական, ռուս-ադրբեջանական հարաբերություններ), ամրապնդում իր քաղաքական ներկայությունը, մյուս կողմից՝ ապահովում սեփական անվտանգությունը: Այդ առումով Հարավային Կովկասում ռազմաքաղաքական տեսանկյունից որպես ռազմավարական դաշնակից ՌԴ-ի համար կարևորվում է Հայաստանը:

Կարծում եմ, Արևմուտք-Ռուսաստան հակամարտության առանցքում խորացող թուրք-ադրբեջանա-ուկրաինական համագործակցությունը կնպաստի Ռուսաստանին հստակեցնել հարաբերությունները արտաքին գործընկերների հետ: Այդ առանցքում ունենք ընդհանուր շահեր:

Այսպիսով, ՀՀ աշխարհաքաղաքական առանձնահատկություններով պայմանավորված, Հայաստանի քաղաքական, սոցիալ-տնտեսական ներկայիս անկայուն դրությունը թելադրում է լրջորեն գնահատել հայ-ռուսական հարաբերությունները, ամրապնդել փոխշահավետ համագործակցությունը ռազմավարական գործընկերոջ հետ՝ լուծելով ՀՀ թե՛ ռազմական (ՀԱՊԿ), թե՛ տնտեսական (ԵԱՏՄ) անվտանգության մի շարք խնդիրներ, շարունակել ինտեգրացիոն գործընթացը Եվրասիական տնտեսական միության շրջանակներում:

Հղումներ

1- Տես «Դրոշակ», հուլիս, 2021, թիվ 7, https://www.arfd.am/wp-content/uploads/2021/07/Դրոշակ-թիվ-7-2021թ.pdf:
2- Տես https://www.president.am/hy/press-release/item/2013/09/03
3- Տես Պայմանագիր ՀՀ-ի՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին,
4- https://bit.ly/35Wi17J
5- Տես նույն տեղում:
6- Տես Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր, https://bit.ly/3IeqiaJ
7- Տես ԵԱՏՄ պայմանագիր,https://bit.ly/3IbEvFz:
8- Տես https://www.mfa.am/hy/international-organisations/6:
9- Տես Основные направления экономического развития ЕАЭС до 2030 года, https://bit.ly/3i8PtkF:
10- Տես ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, https://www.prime-minister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf:
11- Տես https://bit.ly/3t8yfdg:

Քուէէն անդին
Կարելի՞ է ժողովրդավարութիւնը ապահովագրել ամբոխավարական փորձանքներու դէմ

Վիգէն Աբրահամեան
«Հորիզոն» թերթի անգլերեն, Ֆրանսերեն հավելվածների և «Հորիզոն գրական» հավելվածի խմբագիր

Նախորդ յօդուածով («Դրօշակ», յունիս, 2021) քննարկեցինք քուէարկութեան՝ որպէս ժողովրդավարութեան հիմնական միջոցի դժուարութիւններն ու նաեւ անհեթեթութիւնները, թէ ինչպէս երբեմն ժողովրդական քուէարկութիւնը կը նմանի այն հին օրերու սովորութիւններուն, երբ խորհրդային անծայրածիր երկրի մէկ անկիւնը ծուարած աւանի մը կոլխոզականներու ժողովը բանաձեւեր կը քուէարկէր Մոզամպիքի մարտնչող ժողովուրդին ի զօրակցութիւն՝ հազիւ իմանալով Մոզամպիքի տեղը քարտէսին վրայ: Քաղաքացիին կը ճնշեն, անոր քաղաքացիական գիտակցութեան կը դիմեն, կը ստիպեն, որ արտայայտուի հարցերու մասին, որոնցմէ ան ընդհանրապէս տեղեակ չէ, եւ ապա, անոր քուէն ստանալով, անոր անունով կը կատարեն քայլեր, որոնց դժուար թէ ան իր համաձայնութիւնը տուած ըլլար: Եւ մի քանի անգամ այդպէս խաբուելէ ետք քաղաքացիին հիասթափութիւնը կ՚արտայայտուի, բախտաւոր պարագային՝ քաղաքական թմբիրով, անտարբերութեամբ, «ապաթիայով» պիտի ըսէին օտար բառերու սիրահար մեր վերլուծաբանները: Կամ, զզուած այդ խաղէն, քաղաքացին քուէատուփ կը նետէ իր բողոքի քուէն եւ իր ձայնը կու տայ բոլորովին անսպասելի թեկնածուներու:

Տասնամեակ մը առաջ՝ 2011 թ., Գանատայի մէջ կայացան դաշնակցային խորհրդարանի ընտրութիւններ: «Նոր ժողովրդավար կուսակցութիւնը» (ՆԺԿ), որ Քեպէկ նահանգէն իր ամբողջ պատմութեան ընթացքին կրցած էր միայն երկու երեսփոխան հասցնել խորհրդարան, ստացաւ նահանգի 75 աթոռներէն 59ը: Ըստ ընկալեալ սովորութեան՝ կուսակցութիւնը թեկնածուներ նշանակած էր բոլոր, նոյնիսկ անյոյս համարուող ընտրատարածքներուն մէջ (Գանատայի ընտրական համակարգը պարզ մեծամասնական է՝ իւրաքանչիւր ընտրատարածքէ մէկ ընտրեալ): Ծախսերը նուազագոյնի հասցնելու նպատակով նոյնիսկ թեկնածուներուն համար առանձին պաստառներ չէին պատրաստած, այլ սահմանափակ թիւով ընդհանուր քարոզչական պաստառներ՝ կուսակցութեան ղեկավար Ճաք Լէյթընի նկարով: Մեծ էր թիւը համալսարանական ուսանող թեկնածուներուն, որոնք իրենց անունը տրամադրած էին որպէս թեկնածու՝ առանց իսկ ընտրարշաւ կատարելու ձանձրոյթը կրելու: Եւ ընտրուեցան: Ընտրեալներէն մէկը նոյնիսկ երկրէն դուրս էր՝ արձակուրդի, եւ ընտրութենէն մի քանի օր անց տեղեկացաւ իր յաջողութեան մասին: ՆԺԿի որդեգրած գոյնին պատճառով երեւոյթը կոչուեցաւ «Նարնջագոյն ալիք»: Յաջորդ ընտրութիւններուն՝

2015 թ., այդ նոյն կուսակցութիւնը Քեպէկ նահանգին մէջ կրցաւ պահել միայն 16 աթոռ: Իսկ 2019 թ. ընտրութիւններուն «Նարնջագոյն ալիք»էն մնացած էր հազիւ ալեակ մը՝ 1 աթոռ... Նոյնպիսի բողոքի ալիք մը 2016 թ., այս անգամ՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ, ճարպկօրէն օգտագործեց նարնջագոյն մազերով յայտնի հանրային դէմք մը, եւ զինք վայելեցինք չորս տարի շարունակ աշխարհի բոլոր պաստառներէն՝ մեծ, փոքր եւ մասամբ նորին: Չեմ կարծեր, թէ նարնջագոյն երանգն էր այդ յաջողութիւններու պատճառը:

Ժողովրդավարութեան գորդեան հանգոյցը

Գանատայի կամ ԱՄՆի նման երկիրներու քաղաքացիները կրնան երբեմն-երբեմն խաղալ հեքեաթի իշխանուհիին զզուած հօր դերը եւ, իրենց քաղաքական վերնախաւէն զզուած, որոշել վստահիլ բախտի քմահաճոյքին եւ աղջիկը կնութեան տալ դուռը առաջինը թակողին: Բայց քանի որ մենք հայ ենք, եւ մերը, ինչպէս միշտ, «հայի բախտ է», մեր դուռը առաջինը թակողը ընդհանրապէս կ՚ըլլայ ոչ թէ ծպտեալ, այլ իսկական մուրացիկ մը: Իսկ Հայաստանի աշխարհագրութիւնն ու չափերը նման մարզանքներու համար շատ անյարմար են. արդիւնքը կ՚ըլլայ ճակատագրական, ինչպէս եղաւ 2018 թ.:

Արդեօք կա՞յ ձեւը՝ ժողովրդավարութեան այս թերութիւնը սրբագրելու: Արդեօք կա՞յ ձեւ մը՝ ժողովրդավարութեան գորդեան հանգոյցը լուծելու, թէ որպէս Աւետարանի պատգամ պիտի ընդունինք Չըրչիլի թեւաւոր խօսքը, որ «ժողովրդավարութիւնը կառավարման վատագոյն ձեւն է՝ բացի բոլոր այն ձեւերէն, որոնք ատեն-ատեն փորձուած են»[1], եւ համակերպինք այդ թերութեան եւ անոր հետեւանքներուն:

Անշուշտ, լուծում մը կայ, այլապէս իմ եւ ընթերցողիս ժամանակը կը խնայէի եւ այս յօդուածը չէի գրեր: Կարելի՛ է ժողովրդավարութիւնը ապահովագրել ամբոխավարական փորձանքներու դէմ:

Օրինակ. արդի ժողովրդավարութիւններու առաջին նմոյշին՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու հիմնադիրները որդեգրեցին օրէնսդրական երկպալատ դրութիւնը, նաեւ գործադիր եւ դատական իշխանութիւններու ըստ հնարաւորին անկախութիւնը օրէնսդիրէն, որպէսզի համակարգին տան ծանրաշարժութիւն՝ պատահական ալիքներու տատանումներէն զայն ապահովագրելու միտումով: ԱՄՆն նոր անկախացած էր բրիտանական գահէն, եւ անոնց գլխաւոր մտասեւեռումը իշխանութեան՝ մէկ կէտի վրայ կեդրոնացման առաջքը առնելն էր: Նոյնիսկ նախագահական ընտրութեան ձեւը՝ Ընտրողներու հաւաքի միջոցով (Electoral College), որ երբեմն խոտոր կը համեմատի «արդիական» ժողովրդավարութեան հետ, որդեգրուած էր այդ նպատակով, թէեւ հետագային զայն ձեւախեղեցին ու վերածեցին այսօրուան ինքնաշխատ մեքենային: Իր նախնական դրուածքով, Ընտրողներու հաւաքը պիտի գումարուէր առանց կանխակալ կողմնորոշումի, այսինքն՝ նախ քուէարկողները պիտի ընտրուէին, յետոյ թեկնածուները առաջ գային, եւ հաւաքը անոնցմէ ընտրէր յարմարագոյն նախագահն ու փոխնախագահը. նոյնիսկ փոխնախագահի պաշտօնին համար առանձին ընտրութիւն ընելը աւելորդ համարուած էր, այլ պարզապէս այդ պաշտօնը պիտի տրուէր նախագահական ընտրութեան երկրորդ տեղը գրաւած թեկնածուին:

Ամբոխավարութիւնը միշտ եղած է ու կը մնայ ժողովրդավարութեան գլխաւոր թշնամին:

Ժողովրդավարութեան գորդեան հանգոյցի լուծումը երկու պայման ունի, եւ անոր յաջողութիւնը կ՚ենթադրէ այդ երկուքի համատեղ կիրարկումը:

ա. Առողջ ժողովրդավարութեան առաջին պայմանը համակարգի ապակեդրոնացումն է:

Ապակեդրոն կառոյցները նուազ ենթակայ են ամբողջ իշխանութեան՝ մէկ կէտի վրայ կեդրոնանալու վտանգին եւ հետեւաբար միշտ ալ հնարաւորութիւն կու տան զսպելու այս կամ այն պատահականութեամբ բուրգի գագաթին յայտնուած բախտախնդիրներու ախորժակները՝ առանց այն մեծ ցնցումներուն, որոնք անխուսափելի են կեդրոնաձիգ կառոյցներու պարագային: Կեդրոնաձիգ պետականութեան հիմնադիր Ֆրանսայի օրինակը ուսանելի է, թէ ինչպէս արքայական կեդրոնաձիգ համակարգը վերածուեցաւ կեդրոնաձիգ հանրապետութեան, ապա՝ կայսրութեան. 1848 թ. Բ. հանրապետութիւնը մի քանի տարիէն վերածուեցաւ Բ. կայսրութեան, իսկ այսօր Ֆրանսան հասած է Ե. հանրապետութեան ու լրջօրէն կը մտածէ վեցերորդի մը մասին:

Իսկական ապակեդրոնացումը կ՚ենթադրէ, թէ ատեանի մը լիազօրութիւնները, հետեւաբար իշխանութիւնը, պիտի մնան յստակօրէն թուարկուած եւ ստորին ատեաններուն կողմէ կազմուած ցանկի մը սահմաններուն մէջ՝ առանց անորոշ կէտերու. եթէ տուեալ իշխանութեան լիազօրութիւններու ցանկին մէջ չկայ այս կամ այն իրաւունքը, ան չի կիրարկուիր եւ վերջ: Ապակեդրոնացումը իշխանութեան վերին մակարդակներուն անորոշ լիազօրութիւններ չի տար, «carte blanche» չի թոյլատրեր՝ ի տարբերութիւն կեդրոնաձիգ կառոյցներուն, որոնց պարագային իշխանութեան բոլոր իրաւունքներն ու լիազօրութիւնները՝ անցեալ, ներկայ եւ հազար տարի յետոյ որոշուելիք, կը կեդրոնանան վերին մակարդակին վրայ, եւ միայն մասնակի բաժիններ են, որ կը շնորհուին ստորին մակարդակներուն (եւ որպէս շնորհ կրնան ետ վերցուիլ վերադասի քմահաճոյքով):

Օրինակ. աշխարհի ամենաապակեդրոն պետութեան՝ Զուիցերիոյ Սահմանադրութիւնը յստակօրէն կը բանաձեւէ, թէ՝

— *քանթոնները ինքնիշխան են այնքանով, որ իրենց ինքնիշխանութիւնը չէ սահմանափակուած սոյն Սահմանադրութեամբ եւ կը կիրարկեն բոլոր իրաւունքները, որոնք չեն պարտադրուած համադաշնութեան* (յօդուած 3)[2],

— *համադաշնութիւնը կը կատարէ այն աշխատանքները, զոր Սահմանադրութիւնը կը նշանակէ իր համար (յօդուած 42)*[3], որուն անմիջապէս կը յաջորդէ 43-րդ յօդուածը, որուն մէջ յստակօրէն կը սահմանուի նահանգներու եւ կեդրոնական իշխանութեան իրաւասութիւններու եւ պարտաւորութիւններու շրջագիծը,

— քանթոնները կը սահմանեն այն աշխատանքները, զորս կը կատարեն իրենց լիազօրութիւններու շրջանակին մէջ [4] (այսինքն՝ ի վերուստ չի սահմանուիր քանթոններու աշխատանքային շրջագիծը):

Այս յօդուածին վրայ, որպէս յաւելեալ յստակեցում, 2004 թ. կ՚աւելնար յօդուած մը՝ 43-ա՝ *«Պետական աշխատանքներու բաշխման եւ կատարման ընթացքին գործադրուելիք սկզբունքներ»* վերնագրեալ, որուն առաջին իսկ կէտը կը ճշդէ, թէ *համադաշնութիւնը կը սրանձնէ միայն այն աշխատանքները, որոնք կը գերազանցեն քանթոններու հնարաւորութիւնները կամ կը պահանջեն համադաշնութեան տարածքին*

միօրինակ կանոնակարգում[5], եւ անոր կը հետեւին չորս այլ կէտեր՝ այդ բանաձեւումը աւելի յստակեցնող:

բ. Երկրորդ պայմանը քուէարկութեան արդարացիութիւնն է:

Խօսքս չի վերաբերիր քուէարկութեան անխարդախութեան, այլ արդարացիութեան. քուէարկողէն պահանջել պատասխանել հարցումի մը, որուն մասին շատ տարտամ պատկերացումներ ունի՝ աջէն ու ձախէն լսած, կամ որոշել, թէ տուեալ գործին ով աւելի ատակ է, երբ գործին բնոյթն ու տարողութիւնը չի գիտեր, պարզապէս արդար չէ, ինչպէս որ արդար պիտի չըլլար նախակրթարանի աշակերտներէն պահանջել համալսարանական մակարդակի գիտելիքներ: Կրնայ քուէարկութիւնը շատ մաքուր ընթացած ըլլալ, կրնայ ոչ մէկ խարդախութիւն տեղի ունեցած ըլլալ, կրնան տեղական, ազգային, միջազգային ու համամարդկային բոլոր կանոնները յարգուած ըլլալ, սակայն քուէարկութիւնը անարդարացի է, եթէ քաղաքացիին հարցուած հարցումին պատասխանը իր ըմբռնումներէն դուրս է, ինչպէս որ անարդար պիտի ըլլար Ամազոնի անտառներուն խորքը ապրող ցեղախումբի անդամներէն ակնկալել, որ մտածուած պատասխաններ տան Օսքարներու վերջին մրցանակաբաշխութեան մասին հարցումներուն:

Արդար չէ նաեւ միջին քաղաքացին պատասխանատու համարել իր քուէարկութեան արդիւնքով իշխանութեան հասած այս կամ այն խեղկատակի ձախաւերութիւններուն, որովհետեւ քուէարկութիւնը այնպէս, ինչպէս Արեւմուտքը կը պարտադրէ աշխարհին որպէս ժողովրդավարութեան գլխաւոր չափանիշ, **անարդարացի** է: Լաւագոյն պարագային միջին քաղաքացին կրնայ յստակ կարծիք ունենալ իր անմիջական շրջապատին մասին, թէ որոնք են իր գիւղի կամ թաղի անմիջական եւ ապագայ կարիքները, գիտնալ, թէ ով ինչ կարողութիւններ ունի, իր համագիւղացին է կամ թաղեցին, որուն հետ անմիջական ծանօթութիւն ունի, որուն կենսագրութեան քիչ թէ շատ ծանօթ է, եւ ըստ այնմ կողմնորոշուիլ, թէ որուն տայ իր քուէն՝ բնակավայրային իշխանութիւն կազմելու համար: Մնացեալ բոլոր հարցերուն համար ան ո՛չ կարողութիւնը, ո՛չ ալ ժամանակը ունի նստելու, երկար ու բարակ քննելու, ապա միայն իր կարծիքը յայտնելու, իր քուէն Մարկոսին կամ Կիրակոսին տալու վճիռը կայացնելու ամենայն գիտակցութեամբ: Միակ բանը, որ քաղաքացին կրնայ ընել ճիշդ կողմնորոշուելու համար, ընտրապայքարի մէջ նետուած ուժերու ծրագիրներուն ու կարգախօսներուն մօտէն հետեւիլն է: Սակայն ամենափայլուն ծրագիրներն ու կարգախօսները ընդհանրապէս հակուած են մնալու թուղթի վրայ. անոնք պարզապէս առեւտրական գովազդներու կատարելագործուած ձեւեր են եւ ընդհանրապէս չեն ցոլացներ զիրենք կրողի իսկական նպատակները, յատկապէս երբ ան նորաթուխ կազմակերպութիւն մըն է՝ գոյացած բացառապէս ընտրական նպատակներով, եւ շատ հաւանաբար չդիմանայ իսկ մինչեւ յաջորդ ընտրութիւնները, կամ ամերիկեան ոճի կուսակցութիւններ են, որոնց գաղափարախօսութիւնը կրնայ աջ կամ ձախ թեքիլ ըստ օրուան հարցախոյզային քամիներու ուղղութեան: Մինչեւ քաղաքացին անդրադառնայ, թէ ընտրեալը ընդհանրապէս նպատակ չունի իր խոստումները կատարելու, արդէն իսկ ուշ կ՚ըլլայ. կարելի չէ ժամանակը կասեցնել, ոչ ալ ընտրութիւններուն արդիւնքները յետադարձով չեղեալ համարել: Ամբողջ վնասը կը մնայ քաղաքացիի ուսերուն, ինչպէս երբեմն կերուխումէն ետք ճարպիկները կը փախչին, եւ հաշուեցոյցը կը մնայ միամիտներուն վրայ…

Ինչպէ՞ս խուսափիլ ամբոխավարական թակարդէն

Այս երկար նախաբանէն ետք գանք բուն հարցին. ինչպէ՞ս ընենք, որ մեր պետականութիւնը համապատասխանէ վերոնշեալ պայմաններուն:

Շատ գեղեցիկ է սպիտակ թուղթի վրայ նոր նախագիծ յօրինել եւ զայն գործադրութեան դնել: Դժբախտաբար, այդպիսի առիթները շատ հազուագիւտ են. մենք չունինք սպիտակ թուղթ, այլ ունինք բազմիցս մրոտուած, ջնջուած ու նորէն գծուած խաւաքարտի կտոր մը, որ կը կրէ մեր պատմութեան երեք հազարամեակներու խորունկ հետքերը: Հոն կը գտնենք հետքեր՝ հազիւ նշմարուող, որոնք կու գան մեր պատմութեան խորքէն՝ Ուրարտուէն ու Երուանդունիներէն, Արտաշիսեաններէն... որոնք իրենց նստուածքը ձգած են մեր հաւաքական ենթագիտակցութեան վրայ: Որքան մօտենանք մեր օրերուն, այնքան այդ հետքերը աւելի ու աւելի կ՚ընդգծուին եւ կը յստականան, եւ չենք կրնար առանց այդ հետքերը նկատի ունենալու որեւէ նախագիծ դնել այդ խաւաքարտին վրայ: Այդ հետքերը ունին բաժիններ, որոնք օգտագործելի են նախագիծին համար, ունին նաեւ բաժիններ, որոնք վնասակար են, եւ պէտք է յաւելեալ ճիգ թափել զանոնք մաքրելու

համար, որպէսզի չփճացնեն նոր նախագիծը:

Այսօր ունինք Սահմանադրութիւն կոչուած կանոնագրութիւն մը, որով կը կառավարուի Հայաստանի Հանրապետութիւնը, հատ մըն ալ ունի Արցախը կամ այն, ինչ որ մնաց Արցախէն: Իսկ հայութեան երկու երրորդը կ'ապրի այդ երկու կանոնագրութիւններէն դուրս, այլ կանոններով: Մէկ մասը նաեւ, տեղական՝ օտար կանոններուն կողքին, կը հետեւի նաեւ ներքին կանոնագրութիւններու, որոնք ներշնչուած են 1860 թ. Ազգային սահմանադրութենէն: Այս ամէնը առկայ է այսօր եւ շատ թարմ մեր հաւաքական յիշողութեան մէջ:

Մեր հաւաքական յիշողութիւնը նաեւ կը պարունակէ վերջին 100-ամեակի պատմութեան հետքերը. այսօրուան փորձը՝ նախագահականէն խորհրդարանական վարչաձեւի անցնելու, առաւելաբար արդիւնքն էր անոր, որ 1918 թ., երբ Հայաստան ի վերջոյ վերագտաւ իր անկախութիւնը, որդեգրուած ձեւը խորհրդարանական կառավարումն էր, եւ յոյս կար, որ անոր վերադառնալով հնարաւոր պիտի ըլլայ քիչ մը ապակեդրոնացնել իշխանութիւնը: Ի հարկէ, 100 տարի կեդրոնաձիգէն բացի այլ ձեւ չտեսած երկրի մը համար այդ փորձը ձախողեցաւ, որովհետեւ սահմանադրական փոփոխութիւնը, որուն հիմամբ որդեգրուեցաւ վարչապետական համակարգը, մոռցաւ ամրապնդել ապակեդրոնացման հիմքը հանդիսացող ստորին մակարդակները եւ զանոնք նկատեց պարզապէս ածանցեալներ կեդրոնական իշխանութեան, վկայ՝ տեղական ինքնակառավարման մարմիններու մակարդակին՝ վերջին տարուան քաշքշուքները:

Միւս կարեւոր հետքերը, որ կը կրէ մեր հաւաքական յիշողութիւնը, մանաւանդ այսօրուան ՀՀ սահմաններէն ներս, Խորհրդային Հայաստանի պետական կառոյցն է, խորհուրդներով կառավարուելու ձեւը, որ իր օրին իսկ չկրցաւ լիարժէքօրէն աշխատիլ Կոմկուսի ծայրայեղ կեդրոնաձիգ զսպաշապիկին պատճառով, ոչ ալ փորձ եղաւ զայն աշխատցնելու, երբ ի վերջոյ Կոմկուսի բռնատիրութիւնը վերջ գտաւ: Բայց անոր հետքերը տակաւին առկայ են ՀՀ քաղաքացիներէն շատերու մտքերուն ու յիշատակներուն մէջ:

Համայնքը որպէս պետականութեան հիմնաքար

Ինչպէս վերը նշեցինք, առաջին պայմանը, որ պէտք է նախագիծը լրացնէ, ապակեդրոնացումն է՝ իր ամենաիսկական իմաստով:

Որպէս ամենաանհրաժեշտ առաջին քայլ պէտք է անյապաղ վերացնել մարզպետական համակարգը, որ գոյութիւն իսկ չունէր յետխորհրդային սահմանադրութեան 1995 թ. տարբերակին մէջ: Ան ընդօրինակութիւնն է ֆրանսական Préfecture-ներու համակարգին, որ Նափոլէոն Ա. հաստատեց իր իշխանութիւնը մինչեւ երկրի ամենայետին գիւղերը հասցնելու համար, այն տարբերութեամբ, որ ֆրանսական համակարգը կը յենի կադրային պաշտօնէութեան վրայ, եւ préfet-ը քիչ թէ շատ մասնագիտական պաշտօն է՝ բանակի կամ ոստիկանութեան սպայութեան նման աստիճանակարգումով, իսկ Հայաստանի մարզպետներուն պաշտօնները, ինչպէս պետական բարձր պաշտօններուն մեծ մասը, կը համալրուին տխրահռչակ ԽԾԲ միջոցներով:

Ի դէպ, «մարզ» անուանումի որդեգրումն իսկ կը յուշէ զայն հաստատողներու միտումը. «մարզ» բառը կու գայ պահլաւերէնէն եւ կը նշանակէ «ծայրագաւառ», այսինքն՝ կեդրոնէն հեռու ինկած շրջան մը, ուր կեդրոնը կ'առաքէ լայն լիազօրութիւններով օժտուած «մարզպան» մը՝ որպէս կառավարիչ եւ կեդրոնի ներկայացուցիչ: Չեմ կարծեր, թէ Մատենադարանի աւագ գիտաշխատող Լեւոն Տէր-Պետրոսեան անտեղեակ էր բառին իմաստէն. թող ի՛նք բացատրէ, թէ ինչու զայն նախընտրեց «նահանգ», «գաւառ» կամ թէկուզ «շրջան» անուանումներէն:

Մարզպետներն ու մարզպետարանները պէտք է անմիջապէս ջնջել, իսկ անոնց փոխարէն ժամանակաւորապէս՝ մինչեւ վերջնական համակարգի մը մասին որոշում մը, մարզերու ներկայ սահմաններու հիման վրայ հաստատել գաւառներ եւ կազմել գաւառական խորհուրդներ՝ բաղկացած մարզերու տեղական ինքնակառավարման մարմիններուն կողմէ նշանակուած ներկայացուցիչներէ, որոնք իրենց հերթին կ'ընտրեն գործադիր մարմիններ՝ ընթացիկ աշխատանքները շարունակելու համար:

Երկրորդ քայլը բազմաստիճան նոր սահմանադրութեան մը մշակումն ու որդեգրումն է ոչ թէ ներկայ ընթացակարգով, այլ սահմանադիր ընդարձակ ժողովի մը ճամբով:

Հայկական պետականութեան որպէս հիմք պէտք է յայտարարուի **համայնքը**, որպէսզի հնարաւոր ըլլայ բարձրացնել ապակեդրոն պետականութեան համահայկական շէնքը՝ փոխանակ գեղարուեստաթատերական ներկայ բանաձեւումին.

Յօդուած 2. Հայաստանի Հանրապետութիւնում



իշխանութիւնը պատկանում է ժողովրդին:

Ժողովուրդն իր իշխանութիւնն իրականացնում է ազատ ընտրութիւնների, հանրաքուէների, ինչպէս նաեւ Սահմանադրութեամբ նախատեսուած պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտօնատար անձանց միջոցով:

Իշխանութեան իրացումը որեւէ կազմակերպութեան կամ անհատի կողմից յանցագործութիւն է:

Այս գրութեան սկիզբը բաւական խօսեցանք ժողովուրդի կամարտայայտութեան ձեւախեղման եւ ընդհանրապէս անտեսման տարբեր մեքենայականութիւններուն մասին, որ ամբոխավարները կը կիրարկեն: Հետեւաբար *«իշխանութիւնը պատկանում է ժողովրդին»* արտայայտութիւնը կ'արժէ այն, ինչ կ'արժէ, եւ փաստօրէն արժեց այն, ինչ արժեց: Ուստի մեր Սահմանադրութիւնը պէտք է գրուի գլխիվար. նախ պէտք է սահմանուի համայնքը որպէս հայկական պետականութեան հիմնական միաւոր, ամրագրուի, որ **իշխանութիւնը կը պատկանի համայնքներուն, եւ հայ անհատի կամքը կ'արտայայտուի իր համայնքին ճամբով,** եւ ամբողջ պետականութեան շէնքը բարձրացուի աստիճան առ աստիճան որպէս **հայկական համայնքներու համախմբում:** Այս մասին աւելի մանրամասն կարդալ «Համահայկական տեսլականի տագնապը» յօդուածիս մէջ, որ երկու մասով լոյս տեսաւ «Դրօշակ»ի 2020 թ. յունիսի եւ սեպտեմբերի թիւերով:

Երբ սահմանենք համայնքը որպէս մեր պետականութեան հիմնաքար, ան իր մէջ կը խտացնէ պետականութեան բոլոր յատկանիշները այն աստիճան, որ պիտի կարենայ ինքնուրոյն գոյատեւել որպէս պետականութիւն, նոյնիսկ երբ վերադաս մակարդակները այս կամ այն պատճառով անգործունեայ ըլլան: Հետեւաբար համայնքը չի կրնար վերադասի քմահաճոյքով յառաջացած կառոյց ըլլալ, այլ իր անդամներուն կողմէ գոյացած պետական միաւոր. նոյնիսկ անոր սահմանները պէտք է գծուին սահմանակից համայնքներու հետ բանակցութիւններու ճամբով եւ հաստատուին շահագրգիռ համայնքներու անդամներուն կողմէ: Վերադաս մակարդակը, ըլլայ ան գաւառ թէ աւելի բարձր, պէտք չէ ունենայ ըստ իր քմահաճոյքին համայնք ձեւաւորելու, տրոհելու, միաւորելու իրաւունքը:

Մեր Սահմանադրութիւնը պէտք է որ Հայաստանի պետական կառոյցը սահմանէ որպէս համայնքներու համաձայնութեամբ գոյացած գաւառներու դաշնութիւն, ուր «հանրապետական» իշխանութիւնը ոչ թէ ամենազօր է, այլ պարզապէս կը կատարէ այն մի քանի պարտականութիւնները, որոնք իրեն վստահուած են գաւառներուն կողմէ՝ սահմաններու ապահովութիւն, արտաքին յարաբերութիւններ, դրամաշրջանառութիւն եւ այլն, պետական պարտականութիւններ, որոնք դժուար է կատարել գաւառային մակարդակին, որոնց վերահսկման համար գաւառներու ներկայացուցիչներէն կը կազմուի խորհրդարան մը, իսկ կատարումը կը յանձնուի այդ խորհրդարանի կազմած գործադիրին: Մնացեալ հարցերը կը մնան համայնքներու եւ գաւառներու մակարդակին, իսկ համահայկական հնչեղութեամբ մի քանի պարտականութիւններ ալ, ինչպէս, օրինակ, հայերէնին վերաբերող որոշումներու կայացումը, կարելի է բարձրացնել **համահայկական ատեան**ի մը մակարդակին՝ կազմուած ամբողջ աշխարհի հայկական համայնքներու ներկայացուցիչներէն, համայնքներ, որոնք պէտք է լրացնեն մայր օրէնքով սահմանուած համայնքի կազմաւորման պայմանները:

Յղումներ

1) "...democracy is the worst form of Government except for all those other forms that have been tried from time to time" (in a speech to the House of Commons in 1947).

2) Les cantons sont souverains en tant que leur souveraineté n'est pas limitée par la Constitution fédérale et exercent tous les droits qui ne sont pas délégués à la Confédération (Article 3).

3) La Confédération accomplit les tâches que lui attribue la Constitution (Article 42).

4) Les cantons définissent les tâches qu'ils accomplissent dans le cadre de leurs compétences (Article 43).

5) Art. 43a — Principes applicables lors de l'attribution et de l'accomplissement des tâches étatiques.

1 — La Confédération n'assume que les tâches qui excèdent les possibilités des cantons ou qui nécessitent une réglementation uniforme par la Confédération.

Հայաստանի քաղաքական կողմնորոշման (օրիենտացիայի) հարցը Ռ. Տեր-Մինասյանի դիտարկմամբ

Արարատ Հակոբյան
Պատմ. գիտ. դոկտոր, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող

Նախ արձանագրենք, որ Հայաստանի առաջին հանրապետության ամենաականավոր դեմքերից է ՀՅԴ Բյուրոյի անդամ, խորհրդարանի զինվորական ու ներքին գործերի հանձնաժողովի նախագահ, ՀՀ Բյուրո-կառավարության կազմում զինվորական ու ՆԳ նախարար **Ռուբեն Տեր-Մինասյանը (Ռուբեն):** Փաստ է, որ, իր հայդուկային տարիներից սկսած, Ռուբեն փաշան վայելում էր մեծ ժողովրդականություն: Եթե անգամ մի կողմ թողնենք Արևմտահայաստանում ծավալված ազգային-ազատագրական պայքարի օրերին որպես հանդուգն հայդուկապետի՝ նրա մեծ ծառայությունները, անուրանալի է հանրապետության կարճատև գոյության շրջանում հայրենի տարածքների հայացման, այսինքն՝ գաղթականության ներգաղթի կազմակերպման և մահմեդական խռովարար տարրերին հատկապես Արարատյան դաշտից վտարման հարցերում ունեցած դերակատարությունը: Գնահատանքի է արժանի նաև 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի շրջանում ռազմավարական նշանակության այն դրվագը, երբ Սարդարապատի մայիսվերջյան ճակատամարտի նախօրյակին հայկական զինուժի թիկունքը պահելու համար նրա մտահղացմամբ ու նախաձեռնությամբ գրավվեց թշնամական տարրերով լցված Թալինի ամրոցը:

Տեղին է հիշեցնել, որ ՀՅԴ կուսակցության ճանաչված գործիչ, Ալեքսանդրապոլի նահանգապետ Կարո Սասունին դրվատանքով է խոսում Ռուբենի՝ իբրև մտածող, խորհող ու արարող գործչի մասին. «Մտածող և ծրագրող էր Ռուբէն,- ընդգծում էր Կ. Սասունին,- մտածման և վերլուծման ճախարակ մը կար անոր գլխի մէջ, ամենէն բանիմացն էր»[1]: ՀՀ արդարադատության նախարար և «Յառաջ» պաշտոնաթերթի երբեմնի խմբագիր Ռ. Դարբինյանը (Արտ. Չիլինգարյանը) հայ ազատամարտի և պետականակերտ մեծագույն գործիչ, երբեմնի հայդուկապետ և Առաջին հանրապետության հիմնադիր անդամ Ռուբենի հիշողությունների բազմահատորյակի առաջաբանում վերջինիս վաստակի մասին հետևյալն է գրում. «Կարելի է համարձակօրէն ըսել, թէ Արամէն յետոյ ոչ ոք այնքան բախտորոշ դեր կատարեց Հայաստանի Հանրապետութեան կենդանի իրականութիւն դառնալուն մէջ, որքան Ռուբէնը»[2]:

Ի հավելումն վերն ասվածի՝ սույն հրապարակման մեջ հարկ ենք համարում անդրադարձ կատարել Առաջին հանրապետության շրջանում Հայաստանի ու հայ ժողովրդի քաղաքական դիրքորոշումների վերաբերյալ Ռուբեն հասարակական-քաղաքական ու պետական բազմահմուտ գործչի գնահատական-ներին, որոնք արդիական և ուսանելի են նաև մեր այս բարդ ժամանակների համար: Սույն հրապարակումը

ընդգծում է նաև Ռուբենի քաղաքական մտքի վերլուծական կարողունակությունը:

***

Հասկանալի է, որ ինչպես Ռուբենի ապրած ու գործած ճակատագրական ժամանակաշրջանում, այնպես էլ մեր աշխարհաքաղաքական բազմաբարդ տարածաշրջանում մասնավորապես 44-օրյա ձախողված պատերազմից հետո Երրորդ հանրապետության ու Արցախի հիմնախնդրի շուրջ ստեղծված ոչ պակաս բարդ պայմաններում, բնականաբար, շատ է կարևորվում պետական քաղաքականության տեսլականը, այդ թվում՝ հարաբերությունների ճիշտ կառուցումը մեր հեռու և մոտիկ հարևանների հետ: Ուստի, սեփական ուժերին ու ռեսուրսներին ապավինելուց զատ, կամա թե ակամա, ինչպես ավելի քան մեկ դար առաջ՝ Ռուբենի ժամանակներում, այնպես էլ մեր օրերում առաջին պլան է մղվում Հայաստանի **քաղաքական կողմնորոշման** խնդիրը: Այդ հարցի վերաբերյալ հայ հասարակական-քաղաքական մտքի ու ռազմական գործի նշանավոր այրերից Ռ. Տեր-Մինասյանն իր հուշերում փորձել է հետին կարգով ներկայացնել պետական, հասարակական-քաղաքական շրջանակների և ընդհանրապես հայ հանրության մոտեցումների ու դիրքորոշումների ներկապնակը 1920 թ. աշնան թուրք-հայկական պատերազմի նախօրյակին: Այդ իմաստով Ռուբենը առանձնացնում էր երեք հիմնական հոսանք: Նրա դիտարկմամբ՝ առաջին հոսանքին էր հարում հայ պետական, հասարակական-քաղաքական, հանրային, զինվորական և այլ շերտերի այն մեծ հատվածը, որը գտնում էր, որ հայոց անկախ պետականության հաստատման և ՀՀ տարածքային ու անվտանգության խնդիրները հնարավոր է լուծել հիմնականում **արտաքին օժանդակության** միջոցով: Նա այդ

Ռուբեն Տեր-Մինասյան

հոսանքն իր հերթին բաժանում էր **երկու խմբի** (թևի): Առաջին խումբը, որում ընդգրկված էր հայ հանրության մեծագույն մասը, Հայաստանի փրկության հույսը, նրա առջև ծառացած ռազմաքաղաքական, անվտանգության ու տնտեսական հարցերի լուծումը մեծապես կապում էր Ռուսաստանի (անկախ նրա սոցիալ-քաղաքական գույնից) հետ՝ իհարկե գտնելով, որ պետք է միաժամանակ պահպանվի Հայաստանի քաղաքական անկախությունը: Եվ այս մտայնության շեշտված առաջնորդը համարվում էր Դրոն (Դրաստամատ Կանայան): Հարկ է նկատել, որ այն ժամանակներում հայ հանրության ճնշող մեծամասնությունը, բնականաբար նաև զինվորականությունը՝ բարձր հրամկազմը, սպայակազմն ու շարքայինները, ունեին ռուսական քաղաքական կողմնորոշում և Հայաստանի փրկությունը մեծապես կապում էին Ռուսաստանի օգնության հետ: Զիննախարար Ռուբենի դիտարկմամբ՝ այդ հոսանքի ամենավառ ներկայացուցիչը Դրոն էր[3]: Եվ պատահական չէ, որ այն ժամանակ Հայաստանի նորաստեղծ բանակը, կարելի է ասել, գրեթե բոլոր առումներով՝ զինական, ուսումնակրթական, մարտական, մարտավարական, հոգեբանական, անգամ բանակային նիստուկացով, մշակույթով և այլն, ծնունդ էր առել ռուսական բանակից:

Ըստ Ռուբենի՝ արտաքին ուժերի հետ հույսեր կապող այս **առաջին հոսանքի երկրորդ խմբում** կարելի է դասել այն մարդկանց և անհատ գործիչների, մի ոչ մեծ հատվածի, որոնք ունեին **արևմտյան** կողմնորոշում և Հայաստանի անկախության, անվտանգության, տնտեսական բարգավաճման խնդիրների լուծումը մեծապես կապում էին Անտանտի երկրների և ԱՄՆ-ի ռազմաքաղաքական ու ֆինանսատնտեսական օգնության ու աջակցության հետ: Նրանք, մեր կարծիքով նույնպես, Արևմուտքի երկրներից վտանգ չէին տեսնում Հայաստանի անկախ պետականության համար: Ավելին՝ այս խմբի ներկայացուցիչները հատկապես այդ շրջանում մեծ հույսեր էին փայփայում Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի նյութականացման առումով, մանավանդ որ արդեն 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրվել էր Սևրի պայմանագիրը Միացյալ և Անկախ Հայաստանի վերաբերյալ, և առաջիկայում էլ սպասվում էր ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի նոյեմբերի 22-ի իրավարար (Arbitrage) վճիռը՝ համապատասխան քարտեզով, Արևմտյան Հայաստանի չորս նահանգների և հայ-թուրքական սահմանների վերաբերյալ[4]: Բայց հետագա ռազմաքաղաքական իրադարձությունները ավելի ու ավելի անիրատեսական էին դարձնում այս խմբի ներկայացուցիչների գաղափարների նյութականացումը: Այս խմբի առավել վառ ներկայացուցիչներից էին ՀՀ երկու վարչապետներ՝ **Հ. Քաջազնունին և Ալ. Խատիսյանը:**

Ըստ Ռուբենի՝ 1920 թ. կեսերին՝ Հայաստանի ու հայ ժողովրդի համար ճակատագրական այդ ժամանակահատվածում, հայ հասարակական-քաղաքական կյանքում կար նաև մի երկրորդ հոսանք: Այդ հոսանքին բնորոշ էր այն, որ նրա ներկայացուցիչները, կողմնակից լինելով Հայաստանի, հատկապես Կովկասահայաստանի անկախությանը, նրա բաժան-բաժան մասերի միավորմանը և սահմանների ամրապնդմանը, որքան էլ զարմանալի լինի, դեմ էին այդ հարցերի՝ ուժի միջոցով լուծմանը և գտնում էին, որ դրանք հնարավոր է լուծել հարևանների հետ համակեցության ինչ-որ ձևեր ստեղծելով, փոխադարձ սիրով և առանց

Կարո Սասունի

արյունահեղության: Այդ հոսանքը, ըստ Ռուբենի, կտրված էր իրականությունից և առաջնորդվում էր ռոմանտիկ վարդապետությամբ[5]: Դժվար չէ նկատել, որ նման մտայնություն առկա է նաև մեր ժամանակներում, տվյալ դեպքում՝ հայաստանյան ներկայիս իշխանությունների քաղաքական ծրագրում ու գործելակերպում:

Եվ վերջապես, այն ժամանակներում եղել է մի երրորդ, մեր կարծիքով՝ ավելի հուսալի և իրատես հոսանք, որը, դարձյալ ջատագովը լինելով Հայաստանի անկախության, չէր հավատում ռուսների օգնությանը և հայոց պետականության կայացման հարցում հույսը կապում էր սեփական ֆիզիկական ուժին ու կարողունակությանն ապավինելու, ներքին ռեսուրսներով երկրում առկա անիշխանական երևույթները հաղթահարելու, ինքնակազմակերպվելու հետ[6]: Թեև Ռուբենը չի նշում այդ հոսանքը ներկայացնող գաղափարակիր անհատի անուն, սակայն, մեր կարծիքով, այդ հոսանքին հարող

գործիչների շարքին պետք է դասել Հայաստանի առաջին հանրապետության 3-րդ վարչապետ Համազասպ Օհանջանյանին, հենց Ռուբեն Տեր-Մինասյանին, Վահան Նավասարդյանին, Ռուբեն Դարբինյանին և այլոց:

Այսպիսով՝ նշված հոսանքների վերաբերյալ Ռուբենի հուշերից վերցված փաստը ցույց է տալիս, որ Հայաստանի համար ճակատագրական փուլում հայ պետական ղեկավար, ինչպես և հասարակական-քաղաքական լայն շրջանակներում, անգամ հիմնական կառավարող ուժի՝ ՀՅԴ բարձրագույն ղեկավար մարմնի՝ Բյուրոյի ներսում եղել է կարծիքների բազմազանություն Հայաստանի թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության հարցերում, ինչն էլ բնականաբար անդրադառնում էր հանրապետությունում գործադրվող քաղաքականության վրա: Հարկ է նշել, որ ՀՅԴ-ն, որպես հիմնական կառավարող կուսակցությունն, իր վարած արտաքին ու ներքին քաղաքականության ասպարեզում, ըստ իրավիճակի և հանգամանքների, ավել կամ պակաս չափով երեք հոսանքներին էլ տեղ է տվել: Այսպես, օրինակ, 1919 թ. աշնանը Երևանում գումարված ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովում Հայաստանի արտաքին քաղաքականության վերաբերյալ ընդունված որոշումներից մեկով Հայաստանի կառավարությանը հրահանգվում էր «աշխատել բարիդրացիական յարաբերութիւններ պահպանել անոր (խոսքը Ադրբեջանի մասին է – Ա. Հ.) հետ»[7]: Սակայն արդեն 1920 թ. աշնանը՝ թուրք-հայկական պատերազմում Հայաստանի պարտության և անկախության կորստի փուլում, իշխանություններն ու ժողովուրդը, ելնելով ստեղծված իրավիճակից, ճնշող մեծամասնությամբ հարկադրված նախապատվությունը տվեցին առաջին հոսանքի՝ **Հայաստանի ռուսական կողմնորոշման ընտրանքին**՝ կարևորություն չտալով անգամ այնտեղ գործող բոլշևիկյան վարչակարգին: Եվ այդ դիրքորոշման դրոշակակիրը դարձավ, ինչպես արդեն ասվել է, 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանի Դրո-Լեգրան համաձայնագրով խորհրդայնացած Հայաստանի դիկտատոր և զիննախարար դարձած Դրոն[8]:

Այս առնչությամբ եթե պատմական համեմատական էքսկուրս կատարենք դեպի քաղաքական կողմնորոշման առումով տակավին անորոշ մեր ժամանակները կարող է հարց ծագել, թե այս անցած մեկ դարում քաղաքական կողմնորոշման առումով Հայաստանն ու հայ հանրույթն իրենց գործելակերպով ու հոգեբանությամբ որքանով են փոխվել ու քաղաքականապես հասունացել, և ինչպես կարող ենք մեր պետության ու հայրենիքի առջև ծառացած խնդիրները ինքնուրույն, սեփական ուժերին ապավինելով լուծել:

Մեկդարյա փորձը կրկին եկավ վերահաստատելու Ռուբենի պատկերած 2-րդ հոսանքի ներկայացուցիչների առաջ քաշած՝ թուրք-թաթար դրկիցների հետ լեզու գտնելու, հաշտ լինելու, ծագած հարցերը խաղաղությամբ

Ռուբեն Դարբինյան

լուծելու քաղաքականության անհիրատեսությունը: Պատմական և ռազմաքաղաքական ժամանակակից իրադարձությունները ցույց են տալիս, որ կողմերի միջև առայժմ հաշտեցման եզրեր չեն նշմարվում, և չի կարելի տարվել երազատեսությամբ:

Վերջին մեկ-երկու տարում Արցախում և Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած իրադարձությունները և դրանց հիման վրա արձանագրված տխուր պատկերը ցույց են տալիս, որ անցած 100 տարում մեր մտածելակերպում ու գործելակերպում քիչ բան է փոխվել, այդ թվում՝ քաղաքական կողմնորոշումների առումով: Պետք է նկատի ունենալ, որ մեր հարևանները ևս չեն փոխվել, նրանք նույնն են, գրեթե նույնն են նաև տարածաշրջանում սեփական ծավալապաշտական, մեծապետական շահերը հետապնդող հեռու և մոտիկ տերությունների քաղաքականությունն ու նպատակները: Հայաստանի ու հայ ժողովրդի աշխարհաքաղաքական կարգավիճակով պայմանավորված՝ անցած մեկ դարում, կարծես մեզանում, սեփական ուժերին ապավինելուց զատ, իր տեսակարար կշռով իբրև ամենավստահելի երաշխիք շարունակում է անփոփոխ մնալ նաև արժեքային մի համակարգ՝ ռուսական քաղաքական կողմնորոշումը, չնայած մեր մտածելակերպում ու գործելակերպում կարծես հաստատուն տեղ գտած այդ կողմնորոշումից ժամանակ առ ժամանակ ազգովի շատ ենք տուժում, ինչը փաստեց նաև Արցախյան 44-օրյա պատերազմը: Ուստի կարծում ենք՝ պետական ու հանրային մակարդակներում խորհելու, խորհրդակցելու շատ բաներ և կենսափորձն իմաստավորելու ու կյանքի կոչելու հարցում դեռ շատ անելիքներ կան: ■

Հղումներ

1- Սասունի Կ., Հայ-թրքական պատերազմը (1920-ին), Պէյրութ, 1969, էջ 9:
2- Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Ա, Թեհրան, 1982, էջ 19:
3- Տես Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Է, մաս 2, Լոս Անճելըս, 1952, էջ 214:
4- Այդ մասին հանգամանորեն տես Հակոբյան Ա., Միացյալ և Անկախ Հայաստանը Հայոց պատմության հոլովույթում, Եր., 2020:
5- Տես Ռուբէն, նշվ. աշխ., հ. Է, մաս 2 էջ 215:
6- Տես նույն տեղում, էջ 216:
7- Քաղվածներ Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհ. ժողովի որոշումներից, Եր., 1920, էջ 6:
8- Տես Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2000, էջ 383-384:

Հայկական վրիժառությունը պատմության մեջ

Անի Մելքոնյան
Պատմաբան

Մարտը հայոց պատմության մեջ նշանավորվում է «Նեմեսիս» վրիժառուական ամենահայտնի գործողությամբ՝ երիտթուրք պարագլուխ, հայ ժողովրդի դահիճ Թալեաթի ահաբեկմամբ:

Նախ՝ փոքր-ինչ հայկական վրիժառուական ավանդույթների մասին: Տարածված տեսակետ է, որ վրիժառությունը բնորոշ է թույլերին: Մեր կարծիքով, սակայն, վրիժառությունը հատուկ է թուլությունը հաղթահարած ուժեղներին: Դարեր շարունակ հայերի համար վրիժառությունը եղել է արդարության վերականգնման, թշնամուն պատժելու, նաև սեփական իրավունքների համար պայքարի միջոցներից մեկը: Հայկական վրիժառության մասին հիշատակություններ կան դեռևս հայ պատմիչների երկերում: Փավստոս Բուզանդն իր «Հայոց պատմության» մեջ գրում է, թե ինչպես պարսից Շապուհ 2-րդ արքան խաբեությամբ իր մոտ է կանչում հայոց Արշակ 2-րդ արքային ու սպարապետ Վասակ Մամիկոնյանին և հրամայում Արշակ արքային բանտարկել Անհուշ բերդում, իսկ Վասակ Մամիկոնյանին մորթազերծ անել, մաշկի մեջ հարդ լցնել ու մշտապես դնել սպարապետին այնքան սիրող շղթայված արքայի դիմաց: Վասակի որդին՝ Մուշեղ Մամիկոնյանը, ճակատամարտում հաղթելով պարսիկներին, մորթազերծ անել է տալիս պարսիկ մեծամեծներին ու, հարդ լցնելով նրանց մաշկերի մեջ, նվեր ուղարկում Շապուհին՝ նման ձևով վրեժ լուծելով Շապուհից հոր սպանության և Արշակ արքայի խոշտանգման համար:

Բագրատունյաց Հայաստանի վերջին արքա Գագիկ 2-րդի (1043-1045 թթ.) սպանությունն իրականացրին հույն Մանդալե եղբայրները՝ կախելով հայոց արքային ամրոցի պարսպից 1079 թ.: Նրա սպանության վրեժը 1112 թ. լուծեց Կիլիկյան Հայաստանի իշխան Թորոս 1-ինը, որի հրամանով Մանդալե եղբայրները մահապատժի ենթարկվեցին:

Հայոց մեջ, և ոչ միայն, սրբազան վրեժը անժամանցելի է համարվել: 500-ամյա հեռավորությունից վրիժառության մի օրինակ է տալիս Զաքարե Զաքարյան իշխանը: Այսպես՝ 705 թ., Արաբական խալիֆայության հանձնարարությամբ, արաբ ոստիկանը, հայ ազնվականությանը ոչնչացնելու մտադրությամբ, խաբեությամբ իրենց մոտ է հրավիրում մի քանի հարյուր հայ նախարարների, զորականների ու սեպուհների, որոնց փակում են Նախիջևանի (մոտ 800 հոգու) և Խրամ գյուղի (մոտ 400 հոգու) եկեղեցիներում ու ողջ-ողջ այրում: 1209 թ. հայոց իշխանապետ, սպարապետ Զաքարե Զաքարյանը, գրավելով Արդաբիլը, նախնյաց սրբազան վրեժն առնելու նպատակով հրամայեց այրել այն մզկիթը, որտեղ պատսպարվել էին քաղաքի մեծամեծները՝ ասելով. «Իշխանք՝ փոխանակ իշխանացն հայոց, զոր այրեցին այլազգիք ի Նախճուանի»[1]:

Վրիժառությունն առավել տարածվեց հայերի

շրջանում հատկապես ազգային-ազատագրական պայքարի ժամանակ, երբ թուրք և քուրդ հարստահարիչներին կամ ցարական հակահայ պաշտոնյաներին պատժելու համար հայ ազգային-քաղաքական կուսակցությունները դիմում էին անհատական «ահաբեկչությամբ» վրեժ լուծելու մեթոդին: Վրիժառությունից չեն խուսափել նաև հայ դավաճաններն ու մատնիչները:

19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայոց պատմությունը լի է վրիժառուական հերոսական գործողություններով: Այդպիսի գործողություններից էր ազատագրական պայքարի ամենահերոսական դրվագներից մեկը համարվող Խանասորի արշավանքը, որի նպատակն էր վրեժխնդիր լինել քրդական մազրիկ ցեղից 1896 թ. Վանի ինքնապաշտպանությունից հետո դեպի Պարսկաստան հեռացող հայ մարտիկների սպանության համար: Գործողության գաղափարը հղացել էր Նիկոլ Դումանը, հրամանատարն էր Սարգիս Մեհրաբյանը, որը գործողությունից հետո ստացավ Խանասորա Վարդան պատվանունը:

Ազգային-ազատագրական պայքարի շրջանում վրիժառուի դերում հանդես էին գալիս հիմնականում հայ ֆիդայիները, որոնք հավասարապես պատժում էին ինչպես թուրք և քուրդ պաշտոնյաներին, այնպես էլ հայ դավաճաններին: Այդպիսի մի ձեռնարկ էր Աղբյուր Սերոբի դավադիր սպանության համար հայ ֆիդայիների վրիժառուական գործողությունը: Մեծահռչակ ֆիդայապետ Աղբյուր Սերոբը մեծ անհանգստություն էր պատճառում քուրդ բեկերին և թուրքական իշխանություններին, որոնք էլ Սերոբի գլխի համար մատնիչներին խոստանում էին պարգևատրումներ ու արտոնություններ, և ի վերջո գտնվեց նյութին ու փողին խիղճն ու հոգին ծախած

մի հայ՝ Գեղաշենի ռես Ավոն, որը պետք է գործեր համաձայն մշակված ծրագրի. «….թունաւորել Սերոբը և իր մարդիկը: Ոչ ոք կը կասկածէր Աւոյին: Պարկեշտ, բարեխիղճ և հայրենասէր մարդու անուն ունէր գիւղին մէջ և շրջակայքը»[2],- գրում է զորավար Սմբատը (Մախլուտո) իր հուշերում: Մշակված ծրագրի համաձայն՝ 1899 թ. նոյեմբերի 24-ին ռես Ավոն ծխախոտի միջոցով թունավորում է Սերոբին և այդ մասին հայտնում Բշարե Խալիլին: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 25-ին, թուրքական ու քրդական հրոսակախմբերը Խալիլի գլխավորությամբ շարժվում են Սասուն և պաշարում Գելիեգուզան գյուղը: Թունավորումից ջլատված հայդուկապետը չի կարողանում ոտքի կանգնել և կռվել: Բշարե Խալիլը գլխատում է մահամերձ Սերոբին, որի գլուխը ցցի վրա ցուցադրում էին Մուշի և Բաղեշի (Բիթլիս) փողոցներում՝ հայերին վախեցնելու և ընկճելու նպատակով: Սերոբի մատնությունն ու դավադիր սպանությունը իրականում ընկճեցին զորքին ու ժողովրդին, բայց, իհարկե, այս ստոր քայլը ևս անպատիժ չմնաց. «….Աղբյուր Սերոբի սպանության վրեժը լուծվեց 1900 թ. աշնանը. Աղբյուր Սերոբի զինվորներ Գևորգ Չաուշն ու Անդրանիկը ոչնչացնում են դավաճան Ավոյի ողջ գերդաստանը և սպանում Բշարե Խալիլին նույն ձևով և, ինչպես Աղբյուր Սերոբի դեպքում, Խալիլի գլուխը ցցի վրա անցկացրած շրջում էին փողոցներով՝ որպես Աղբյուր Սերոբի արդար արյան վրեժ»[3]:

Վրիժառուական բացառիկ մի գործողություն էր Ելդըզի մահափորձը հայության դահիճ Արյունոտ սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի դեմ, որը ծրագրել էր ՀՅԴ հիմնադիր Քրիստափոր Միքայելյանը, բայց, ցավոք, նա չկարողացավ ծրագիրն ավարտին հասցնել. զոհվեց 1905 թ. մարտի 17-ին Վիտոշ լեռան լանջին՝ ինքնաշեն ռումբի փորձարկման ժամանակ: Այնուամենայնիվ, Քրիստափորի ընկերները որոշեցին ավարտին հասցնել ձեռնարկը, և 1905 թ. հուլիսի 21-ին Կ. Պոլիսը ցնցվեց կառքի պայթյունից: Մահափորձն իրականացնող «Ռուբինան (Արեշյան-Օհանջանյան, Հայաստանի Հանրապետության վարչապետ Համո Օհանջանյանի ապագա կինը – Ա. Մ.) և ընկերները կարողանում են ռումբով կառքը յարմար կայանել մզկիթի մուտքին հնարաւորինս մօտ և որոշած ժամով գործարկել ժամացոյցը: Գործողութիւնից զոհւում են աւելի քան 40 թուրք բարձրաստիճան պաշտօնեաներ, խորտակւում է 20 կառք, սակայն սուլթանը ցաւօք յաջողում է մզկիթից դուրս գալու պահին և ուղղակի հրաշքով ողջ է մնում»[4]: Մզկիթից դուրս գալու պահին սուլթանը մի պահ խոսակցության է բռնվում շեյխ ուլ-իսլամի հետ և կառքի պայթելու պահին կառքում չէր: Այդպես նա փրկվեց, սակայն ստիպված էր «մոռացության տալ» մահափորձը՝ վախենալով, որ պատասխան քայլերից հետո հայ հեղափոխականներն ավելի ծայրահեղ քայլերի կդիմեն:

1905 թ. փետրվարի 6-ին Բաքվի նահանգապետ Նակաշիձեի դրդմամբ թաթարները հարձակվեցին քաղաքի հայկական թաղամասերի վրա, կողոպտեցին գույքն ու կահկարասին: Հայ բնակչության ինքնապաշտպանության կազմակերպումը ստանձնած

Քրիստափոր Միքայելյան

Դաշնակցությունը նախազգուշացնող գրություն է ուղարկում Նակաշիձեին, սակայն վերջինս մնում է անդրդվելի, ուստի «Հ.Յ.Դ. Ոսկանապատի Կենտ. Կոմիտեն որոշեց նրան ահաբեկել»[5]: Նույն որոշումը կայացրել էր նաև ռուսական սոցիալիստ-հեղափոխական կուսակցությունը, ուստի Դաշնակցությունը սկզբնապես նրանց զիջեց Նակաշիձեի ահաբեկման գործը, ինչը նրանք ձախողեցին: 21-ամյակը չբոլորած Դրոն խնդրեց իրեն վստահել Նակաշիձեից վրեժխնդիր լինելու գործը, և ի վերջո Նիկոլ Դումանի միջնորդությամբ այն հանձնարարվում է Դրոյին: 1905 թ. մայիսի 11-ին Բաքվի «Պարապետ» կենտրոնական հրապարակում Դրոն ռմբահարեց Նակաշիձեի կառքը. գործն արված էր, հայատյաց չարագործը՝ սպանված: Նույն օրը հրապարակված ՀՅԴ Ոսկանապատի կենտրոնական կոմիտեի կոչում կարդում ենք. «Ռումբը խոսեց: Գազազած Հայ ժողովրդի վրեժի որոտաձայն խոսքն էր այն…. Ռումբը դատեր շատ ունի դեռ: Վայ նրանց, որոնք կկամենան այսուհետ հոշոտել Հայ ժողովուրդը….»[6]: Այնուհետև Դաշնակցությունը «Հրաման» կոչվող մի կոչով էլ զգուշացնում է ցարական պաշտոնյաներին, որ հայի ձեռքից զենք խլողը, նրան խուզարկողը կամ բանտարկողը հիշի «….Բաքվի նահանգապետ Նակաշիձեին, Գանձակի փոխ-նահանգապետ Անդրեևին, գավառապետներ Բոգոսլավսկուն, Շմերլինգին, Պավլովին, ոստիկանապետ Սահակովին, պրիստավներ Նաշչանսկուն, Ջավախովին, Շումակևիչին, Տեր-Սահակովին, ոստիկան Սերգոյին, և ուրիշ շատերի, որոնք Հ.Յ. Դաշնակցության վճռով մահվան պատժի են արժանացել: Փոխարքայի կողմից 25 ռուբլի ընծա կամ հեղափոխականի գնդակը ահա թե

ի՞նչ բան պետք է ընտրել….»[7]:

Դաշնակցության վրիժառությունից չխուսափեց նաև նախիջևանցի թաթար, հայ և վրացի ժողովուրդների դահիճ Ալիխանով Ավարսկին, որից Ալեքսանդրապոլում վրեժխնդիր եղան Դրոն և Մարտիրոս Չարուխչյանը:

Հայոց պատմության մեջ, սակայն, վրիժառուական ամենամեծ ձեռնարկը «Նեմեսիս»-ն էր՝ Հայոց ցեղասպանության կազմակերպիչներին պատժելու արդարահատույց շարժումը: 1919 թ. սեպտեմբեր-նոյեմբերին Երևանում տեղի ունեցած ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովը, ի թիվս այլ հարցերի, որոշում կայացրեց նաև «Հատուկ գործ»-ի մասին, որն իրականացվելու էր «Նեմեսիս» ծածկանունով, և նպատակն էր վրեժխնդիր լինել Հայոց ցեղասպանության կազմակերպիչ դահիճներից: Գործի ղեկավարներն էին Արմեն Գարոն, Շահան Նաթալին և Գրիգոր Մերջանովը: Հայոց «Նեմեսիս»-ի ժամանակագրությունը մոտավորապես հետևյալն է. 1919 թ. Թիֆլիսի Երևանսկու հրապարակում Արամ Երկանյանը վրեժխնդիր եղավ «Մուսավաթ» կուսակցության անդամ, Ադրբեջանի ռազմական նախարար Ղասիմբեկովից և բուլղարացի գործակալ, գնդապետ Սարաֆովից, իսկ 1920 թ. հունիսի 19-ին՝ Բաքվի և Շուշիի հայկական կոտորածների կազմակերպիչ, Ադրբեջանի վարչապետ Ֆաթալի խան Խոյսկուց, նրա գործակից Խասմամեդովից և նրանց թիկնապահից: Ապա՝ 1920 թ. հուլիսի 19-ին, Թիֆլիսում վրեժխնդիր եղավ Շուշիի ջարդերի հիմնական պատասխանատուներից և իսլամիզմի հայտնի գաղափարախոսներից մեկից՝ Հասան բեկ Աղանից:

1921 թ. հուլիսի 18-ին Միսաք Թոռլաքյանը իր գործակիցների՝ Երվանդ Ֆունդուքյանի և Հարություն Հարությունյանի հետ վրեժխնդիր եղավ Ադրբեջանի «Թալեաթ» համարվող Բեհբութ խան Ջիվանշիրից:

1921 թ. դեկտեմբերի 5-ին Արշավիր Շիրակյանը Իտալիայի մայրաքաղաք Հռոմում վրեժխնդիր եղավ Օսմանյան կայսրության վարչապետ Սայիդ Հալիմից, իսկ 1922 թ. ապրիլի 17-ին Արամ Երկանյանի հետ Բեռլինում ահաբեկեց Տրապիզոնի վիլայեթի նախկին նահանգապետ, հայ մանուկներին ծովում խեղդամահ արած Ջեմալ Ազմիին և «Թեշքիլաթը Մահսուսե» կազմակերպության հիմնադիր Բեհաէդդին Շաքիրին:

1922 թ. հուլիսի 21-ին Թիֆլիսում Պետրոս Տեր-Պողոսյանը, Արտաշես Գևորգյանը և Ստեփան Ծաղիկյանը վրեժխնդիր եղան Թուրքիայի ռազմածովային ուժերի նախկին նախարար Ջեմալից:

Հայկական վրիժառուական «Նեմեսիս» գործողության ամենաաղմկահարույց ու ամենաոգևորիչ արարը տեղի ունեցավ 1921 թ. մարտի 15-ին Բեռլինի Շառլոտենբուրգ թաղամասի Հայդենբերգ փողոցում, երբ երիտասարդ դաշնակցական Սողոմոն Թեհլիրյանը գնդակահարեց հայության գլխավոր դահիճ Թալեաթ փաշային: «Թեհլիրյանը ձերբակալվեց սպանության վայրում և տարվեց ոստիկանություն, որտեղ սկսվեց հարցաքննությունը: Քանի որ նա հարցաքննության պահին գրեթե չէր տիրապետում գերմաներենին, իբրև



Սողոմոն Թեհլիրյանի արձանը Մարալիկ քաղաքում

թուրքահպատակի՝ նրան առաջարկեցին հարցաքննվել թուրքերենով: Սակայն Թեհլիրյանի պահանջով հարցաքննությունը կատարվեց հայ թարգմանչի միջոցով: Նա պնդում էր, որ Թալեաթին սպանել է վրեժից դրդված, գործել է միայնակ և հանցակիցներ չի ունեցել»[8]: Թեհլիրյանի դատավարությունը սկսվեց 1921 թ. հունիսի 2-ին, սակայն այն վերածվեց Թալեաթի դատավարության: Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը «Հատուկ գործ»-ի ամենահնչեղ էջն էր, ուներ քաղաքական նշանակություն. «....դժուար է խորաչափել քաղաքական կշիռը այն գնդակին, որ …. Թեհլիրեանի ձեռքով պարպուեցաւ Թալէաթի վրայ: …. Հսկայ մայրաքաղաքը զգում էր կարծես, որ դատասրահում դատւում էր ոչ թէ մի պարզ հայ, այլ դատւում էր համայն մարդկութիւնը, որ անպատիժ ձգեց մի անմեղ ժողովրդի նկատմամբ գործադրուած ապրիլեան անօրինակ Եղեռնը»[9]: Դատավարությունն ավարտվեց նրանով, որ գերմանական դատարանը Սողոմոն Թեհլիրյանին անպարտ ճանաչեց և ազատ արձակեց դատարանի դահլիճից:

Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից Էնվերին, ոչնչացրեց 1-ին Թուրքեստանյան դիվիզիայի 1-ին բրիգադի հրամանատար Հակոբ Մելքումովը: Ըստ խորհրդային նախկին չեկիստ Աղաբէկովի հուշերի Էնվերի սպանությունը իրականացվել է չեկայի որոշմամբ: Նշենք որ բոլշևիկների և նրանց առաջնորդ Լենինի գործակիցը դարձած երիտթուրքերի այս ներկայացուցիչը դավաճանել էր իր դաշնակիցներին և հայտվելով Միջին Ասիայում գլխավորում էր հակախորհրդային բասմաչական ապստամբական շարժումը:

Հարկ ենք համարում հատուկ նշել, որ հայկական վրեժխնդրությունից չեն խուսափել նաև հայ դավաճաններն ու մատնիչները, մասնավորապես «Նեմեսիս» գործողության տարիներին ոչնչացվել են Հայոց ցեղասպանությանը մասնակցած մի շարք հայ դավաճաններ: Այսպես. «Ինչպէս գիտենք, 1915-ի ապրիլի 24-ին Կ. Պոլսում ձերբակալուեցին և

սպանուեցին հայ մտաւորականներ, որոնց ցուցակը թուրքերի համար կազմել էր Վահէ Եսայեանը (Իհսան): 1920 թ-ի մարտի 27-ին 20-ամեայ Արշաւիր Շիրակեանը Կ. Պոլսում գնդակահարեց դաւաճան Իհսանին: Օսմանեան կայսրութեան քաղաքական ղեկավար, Թալիաթի գործակալ Յարութիւն Մկրտչեանի հրամանով՝ 1915 թ-ի ապրիլի 24-ին ձերբակալուել էին հայ մտաւորականութեան աւելի քան 600 ներկայացուցիչներ: 1919 թ-ին, Սողոմոն Թեհլիրեանը Կ. Պոլսում, ավելի վաղ քան «Նեմեսիս» ծրագիրը կյանքի կկոչվեր՝ ամենայն հավանականությամբ Պոլսի ՀՅԴ կենտրոնական կոմիտեի որոշմամբ, գնդակահարեց դաւաճանին: 1913 թ-ի սեպտեմբերի 7-ին Ռումինիայում գումարւում է ՍԴՀԿ 7-րդ պատգամաւորական ժողովը, որտեղ գաղտնի որոշում է կայացւում ահաբեկել Թալիաթին: Այդ ժողովին մասնակցում էր Եգիպտոսի ՍԴՀԿ կառոյցից պատգամաւոր ընտրուած Արթուր (Արշաւիր) Յասեանը, որը թուրքական գաղտնի ոստիկանութեան անդամ էր, և նրանց յայտնում է Ռումինիայի ժողովի գաղտնի որոշման մասին, դրա հետևանքով ձերբակալւում են հնչակեան մի շարք գործիչներ, այդ թւում նաև Թալիաթին ահաբեկելու նպատակով Կ. Պոլիս անցած Փարամազը և նրա խումբը՝ թւով 20 հոգի, 1915 թ-ի յունիսի 15-ին Կ. Պոլսի սուլթան Բայազիդ հրապարակում Փարամազը և իր ընկերները կախաղան են բարձրացւում:

Արթուր Յասեանը ևս, ինչպէս միւս բոլոր դաւաճանները, անպատիժ չմնաց, «Նեմեսիս»-ի շրջանակներում 1920 թ-ին Կ. Պոլսում նրա հետ հաշուեյարդար տեսաւ Արշակ Մուշեղյանը (Եզդի Արշակ)»[10]:

Հայոց ցեղասպանության, շուրջ առաջացած մոռացության պատը քանդելու, հայոց պահանջատիրական պայքարին միջազգային հնչեղություն հաղորդելու համար զինյալ գործողություններ ձեռնարկվեցին նաև հետագա տարիներին հայկական սփյուռքում: Այդ գործողությունների մեկնարկը տրվեց 1975 թվականի հոկտեմբերի 22-ին, երբ ահաբեկվեց Վիեննայի թուրք դեսպանը, իսկ երկու օր անց, հոկտեմբերի 24-ին, ահաբեկվեց Փարիզի թուրք դեսպանը: Ջոյգ գործողությունների պատասխանատվությունը ստանձնեց «Հայկական ցեղասպանության արդարության մարտիկներ կազմակերպությունը»: Այդ շրջանի առավել հնչեղ զինյալ գործողություններից է Հայ յեղափոխական բանակի մարտիկների իրականացրած «ահաբեկչական» գործողությունը: 1983 թ. հուլիսի 27-ին ՀՅԲ 5 անդամները՝ Վաչե Տաղլյանը, Սեդրակ Աճեմյանը, Սիմոն Յահնիյանը, Սարգիս Աբրահամյանը և Արա Քըրճլյանը, գրոհում են Լիսաբոնի թուրքական դեսպանատան վրա: Դեսպանատուն ներխուժելու ժամանակ, ոստիկանների հետ սկսված փոխհրաձգության հետևանքով, զոհվում է Սիմոն Յահնիյանը՝ չկարողանալով մտնել դեսպանատուն: Տղաները գրավում են դրան կից թուրքիայի փոխդեսպանի բնակարանը: Պորտուգալական ոստիկանությունն ու հատուկ ջոկատայինները շրջափակում են շենքը և սկսվում է փոխհրաձգություն: Հայ վրիժառուները գերիներին (փոխդեսպանի կնոջն ու երեխային) բաց թողնելուց հետո պայթեցնում են շենքը և մնում դրա փլատակների տակ: Մինչ պայթյունը ՀՅԲ մարտիկները աշխարհին ու նաև աշխարհասփյուռ հայությանը հղում են իրենց կոչը. «Բոլոր կառավարություններին, համաշխարհային հանրային կարծիքին և մամուլին: Սա անձնասպանություն չէ, ոչ էլ խելագարություն, այլ գերագույն զոհաբերում ազատության բագինին: Մեր ժողովրդի ինքնորոշման ձեռքբերման միակ միջոցը զինյալ պայքարն է: Բռնի ուժին դիմելու մեր որոշումը հետևանքն է թուրք պետության և նրա պաշտպան պետությունների մերժումի՝ գոհացում տալու Հայ ժողովրդի արդար ու խաղաղասեր իրավունքներին: Հայերի իրավունքն է ապրել ու բարգավաճել իրենց նախահայրերի հայրենիքում՝ ազատ ու անկախ...»:

Ամփոփելով կարող ենք ասել, որ պատմության տարբեր ժամանակահատվածներում վրեժխնդրությունը եղել է հայության պայքարի անբաժան մասը՝ թե՛ ազգային-ազատագրական պայքարում, թե՛ թշնամուն ու հայ դավաճաններին պատժելու և թե՛ արդարությունը վերականգնելու գործում: ■

Հղումներ

1.http://bazmavep.blogspot.com/2013/01/blog-post_30.html

2. Ջօրաւար Սմբատի յուշերը, Ա հատ. 1900-1914, Փարիզ, 1936, էջ 117:

3. Եղիազարյան Կ., Եղիազարյան Ք., Աղբյուր Սերոբ (կյանքն ու գործունեությունը), էջ 90, http://ysu.am/files/Aghbyur-Serob.pdf:

4. Հերոս հայուհու մահափորձը՝ Սուլթան Աբդուլ Համիդի դէմ, https://alikonline.ir/news/national/item/29156:

5. Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության (քառահատոր շարք), նվիրված Հ.Յ.Դ. 111 ամյակին, հ. Բ, էջ 372:

6. Նույն տեղում, էջ 374:

7. Նույն տեղում, էջ 375:

8. Խանումյան Գ., Սողոմոն Թեհլիրյան. ծննդյան 125-ամյակի առթիվ, «Դրօշակ», Եր., 2021, թիվ 4 (1650), էջ 40-41:

9. Յովհաննէսեան Կ., Սողոմոն Թեհլիրեան (1896-1960), https://www.aztagdaily.com/archives/353898:

10. Մելքոնեան Ա., Դաւաճանները հայոց պատմութեան մէջ, https://bit.ly/3p9omtL:

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

ա) Գրականություն
1. Ջօրաւար Սմբատի յուշերը, Ա հատ. 1900-1914, Փարիզ, 1936:
2. Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության (քառահատոր շարք), նվիրված Հ.Յ.Դ. 111 ամյակին, հ. Բ:

բ) Մամուլ
1. Խանումյան Գ., Սողոմոն Թեհլիրյան. ծննդյան 125-ամյակի առթիվ, «Դրօշակ», Եր., 2021, թիվ 4 (1650):

գ) Համացանցային նյութեր
1. Եղիազարյան Կ., Եղիազարյան Ք., Աղբյուր Սերոբ (կյանքն ու գործունեությունը), http://ysu.am/files/Aghbyur-Serob.pdf:
2. Հերոս հայուհու մահափորձը՝ Սուլթան Աբդուլ Համիդի դէմ, https://alikonline.ir/news/national/item/29156:
3. Մելքոնեան Ա., Դաւաճանները հայոց պատմութեան մէջ, https://bit.ly/3p9omtL:
4. Յովհաննէսեան Կ., Սողոմոն Թեհլիրեան (1896-1960), https://www.aztagdaily.com/archives/353898:

Նովրուզի քաղաքականացումը հարավկովկասյան տարածաշրջանում

Լիանա Պետրոսյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

Համաշխարհային օրացույցի յուրահատուկ օրերի և տոների մեջ կա միայն մեկ օր, որը կարելի է համարել բոլորինը՝ առանց բացառության: Այն քաղաքականությունից զերծ ընդհանուր տոն է և միևնույն ժամանակ բոլոր մարդկանց և բոլոր ժամանակների տոներից ամենաքաղաքականը: Նույնիսկ եթե երկրի վրա որոշ ժողովուրդներ նշում են այդ տոնը որպես ժողովրդական և ավանդական արարողություն, և եթե որոշ ժողովուրդներ չգիտեն դրա մասին, իրականում Նովրուզը բոլորինն է: Նովրուզը ամենից քիչ քաղաքականացված տոնն է, քանի որ ստեղծվել է մարդկանց կամքից անկախ: Այն բնության զարթոնքի, ինչպես նաև Արեգակի, Երկրի և Տիեզերքի շրջանառության տոնն է: Նովրուզը նաև ամենաքաղաքական տոնն է, քանի որ այն միավորում է բոլոր մեծագույն իդեալները, որոնց համար մարդկությունը պայքարել է իր ծագումից ի վեր: Նովրուզը հավասարության, համերաշխության, փոխըմբռնման, բարեկամության, հանդուրժողականության, գնահատանքի, խաղաղության և բարօրության տոն է: Իրանական և թյուրքական ժողովուրդների շրջանում, ըստ աստղագիտական արեգակնային օրացույցի, Նովրուզը Ամանորն է (մարտի 21): Վերջերս այն ձեռք է բերել գարնան և նորացման տոնի խորհուրդ: Մերձավոր Արևելքում Նովրուզը նշում են միայն այն ժողովուրդների ներկայացուցիչները, որոնք բնակվել են այս տարածաշրջանում մինչև արաբական նվաճումները և Արաբական խալիֆայության առաջացումը 7-8-րդ դարերում: Օրինակ՝ Իրաքի և Սիրիայի արաբները չեն տոնում Նովրուզը: Թուրքիայում 1925-1991 թթ. Նովրուզը պաշտոնապես արգելվել է տոնել: Հատկանշական է, որ Խորհրդային Միությունում Նովրուզը պաշտոնապես չէր նշվում: ԽՍՀՄ փլուզումից հետո այն պետական տոն հռչակվեց Կենտրոնական Ասիայի 4 հանրապետություններում, Ղազախստանում և Ադրբեջանում:

2009 թ. սեպտեմբերի 30-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ն (վերջինիս դիմելու նախաձեռնությունն Իրանինն էր) Նովրուզը ներառեց մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցուցակում: 2010 թվականից ի վեր Նովրուզը Վրաստանում պետական տոն է, որը նշում են ադրբեջանական և իրանական փոքրամասնությունները: Այն հատկապես տարածված է Վրաստանի թյուրքական բնակչության շրջանում, որը բնակվում է երկրի հարավային շրջաններում: Վրաստանի իշխանություններն ամեն տարի այցելում են գերակշռող ադրբեջանցի բնակչություն ունեցող Հարավային Վրաստանի մունիցիպալիտետներ և ակտիվորեն մասնակցում Նովրուզ-Բայրամին առնչվող միջոցառումներին:

Միջոցառումներն անցկացվում են Մառնեուլի

կենտրոնում: Վրաստանի ղեկավարները բնակչությանն ավանդաբար դիմում են վրացերենով և ադրբեջաներենով: Այնուհետև անցկացվում են համերգներ և տոնական այլ միջոցառումներ: Հատկանշական է, որ Նովրուզը պաշտոնապես պետական տոն հռչակելիս Վրաստանի նախագահ Միխայիլ Սաակաշվիլին հայտարարում էր, որ Վրաստանի համար բոլոր քաղաքացիները հավասար են՝ անկախ իրենց էթնիկական ծագումից:

Իսկ ո՞րն էր նման քաղաքականության և Նովրուզը պետական տոն հռչակելու իմաստը: Բանն այն է, որ իսլամական աշխարհում մահմեդականների շրջանում Նովրուզի տոնակատարության նկատմամբ երկակի վերաբերմունք կա: Նրանց մի մասը Նովրուզը կապում է պատմության և մշակութային ժառանգության հետ և ոչ մի վատ բան չի տեսնում դրա տոնակատարության մեջ, մի մասն էլ, ընդհակառակը, հեթանոսական արմատներ է տեսնում Նովրուզի տոնակատարության մեջ և կտրականապես հրաժարվում այն տոնելուց:

Վրաստանը, հատկապես նրա արևելյան մասը, պատմականորեն գրեթե միշտ գտնվել է իրանական մշակույթի ազդեցության տակ, և Վրաստանում Նովրուզի տոնակատարությունը չի կարող համարվել անսովոր երևույթ: Նովրուզի տոնակատարությանը պետական բարձր մակարդակով մասնակցելը կարող է ընկալվել որպես հարգանքի տուրք իրանական պատմամշակութային ազդեցությանը, որը շարունակվում է հնագույն ժամանակներից: Մյուս կողմից՝ այս տոնը շատ տարածված է Վրաստանի թյուրքական բնակչության շրջանում: Նովրուզի անցումը տարածաշրջանայինից ազգային մակարդակի կնպաստեր վրաց հասարակությանն ինտեգրման գործընթացներին: Այս ամենին գումարվում է նաև Իրանից զբոսաշրջիկների հոսքի ավելացումը, քանի որ շատ իրանցիներ նախընտրում են Նովրուզը նշել արտասահմանում, իսկ այս դեպքում Վրաստանը նախընտրելի է, քանի որ մի կողմից՝ Նովրուզը

պետականորեն նշող պետություն է, մյուս կողմից՝ գրավիչ պայմաններ է ստեղծում զբոսաշրջիկների ակտիվ հանգիստն ապահովելու համար: Չնայած հարցը, թե ինչպես կարող է այս տոնն արմատավորվել Վրաստանի ուղղափառ բնակչության շրջանում, մնում է բաց: Նովրուզի տոնակատարությունը համընկնում է Մեծ պահքի շրջանին, ինչը երկրի հավատացյալ ուղղափառ բնակչության համար գրեթե անհնար է դարձնում այն ակտիվորեն տոնելը:

Թեպետ Հայաստանում Նովրուզը հռչակված չէ որպես երկրի պետական-պաշտոնական տոն, սակայն ամեն տարի՝ մարտի կեսերից սկսած, Հայաստանն իր հյուրընկալ դռներն է բացում իրանցիների առաջ, որոնք նախընտրում են իրենց ազգային տոնը նշել հենց Հայաստանում: Հատկանշական է, որ թեև Հայաստանը քրիստոնյա բնակչությամբ պետություն է, սակայն, ի հարգանս հարևան և բարեկամ Իրանի, ամեն տարի նշում է Նովրուզը: Ուսումնական հաստատություններում և մշակութային կենտրոններում կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ, իսկ ժամանցային կենտրոնները նպաստավոր պայմաններ են ստեղծում տոնակատարությունների անցկացման համար:

Նովրուզի տոնակատարությունը լայնորեն լուսաբանվում է հայկական և իրանական ՁԼՄ-ներով՝ դրանով իսկ բարձրացնելով հանրային իրազեկման մակարդակը: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ Հայաստանում իրանական մշակութային քաղաքականության հիմնանպատակը Իրանի մշակույթի, կրոնի և ավանդույթների վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակի բարձրացումն է և այդպիսով Իրանի՝ որպես իր բնույթով տարբերվող, սակայն բարեկամական երկրի հոգևոր-մշակութային կերպարի ներկայացումը:

Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա այս երկրում Նովրուզը տոնում են անկախության ձեռքբերումից ի վեր: Ընդ որում, ադրբեջանական իշխանություններն էլ նշում են, որ խորհրդային իշխանության տարիներին զրկված են եղել Նովրուզը նշելու հնարավորությունից: Ըստ էության, Հարավային Կովկասի տարածաշրջանում Ադրբեջանը այն միակ պետությունն է, որը Նովրուզի ավանդույթներն ու ծիսակարգերը օգտագործում է քաղաքական նկատառումներով: Գաղտնիք չէ, որ ադրբեջանական իշխանությունները ամեն կերպ փորձում են Նովրուզի ծագումն ու ավանդույթները կապել ադրբեջանական մշակույթի հետ:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը Նովրուզի ամենամյա շնորհավորական ուղերձներում հիշատակում է Նովրուզի՝ ադրբեջանական տոն լինելը, պարբերաբար նշում, որ Նովրուզը հնագույն պատմական արմատներ ունի Ադրբեջանի տարածքում և դարձել է ազգային մտքի բաղկացուցիչ մաս: Նմանատիպ հայտարարությունների ազդեցությամբ էլ գլուխ են բարձրացնում պանթյուրքիստական գաղափարներով տոգորված արմատականները, որոնց հատկապես անհանգստացնում է այն հանգամանքը, որ Նովրուզը միահյուսված է իրանական ազգային առասպելներին և իրանական պատմամշակութային ինքնության բաղկացուցիչն է: Ադրբեջանցի ազգայնականները Նովրուզի շրջանում անգամ բողոքի ակցիաներ են իրականացնում երկրի սահմաններից դուրս՝ փորձելով միջազգային հանրությանը համոզել, որ Նովրուզը ոչ մի կապ չունի Իրանի հետ: Մասնավորապես, ժամանակին մեծ աղմուկ էր բարձրացրել Վարշավայում տեղի ունեցած միջադեպը, երբ մի քանի էթնիկ ադրբեջանցիներ բողոքի ակցիա էին իրականացրել Վարշավայի համալսարանի դիմաց՝ բողոքելով իրանցիների՝ Նովրուզը տոնելու դեմ: Նրանց պնդմամբ՝ Նովրուզը իրանցիների հետ կապ չունի և պատկանում է թուրքերին ու արաբներին:

Ադրբեջանական ՁԼՄ-ներն էլ իրենց հերթին ջանում են Նովրուզը ներկայացնել որպես ադրբեջանական տոն: Դրա վառ դրսևորումներից է այն, որ դեռևս նախորդ տարի ադրբեջանական ՁԼՄ-ները հրաժարվում էին տարածել Կանադայի վարչապետի շնորհավորական ուղերձը՝ Նովրուզի իրանական (պարսկական) տոնի առթիվ: Նրանք հրաժարվում էին նշել, որ Կանադայի վարչապետ Ջասթին Թրյուդոն Նովրուզի վերաբերյալ իր ուղերձը սկսել էր պարսկերեն «Նովրուզը հաղթեց, ամեն օր Նովրուզ է» արտահայտությամբ:

Իրականությունն ու պատմությունը խեղաթյուրող ադրբեջանական քաղաքականության վառ ապացույց է ադրբեջանական դասագրքի մի օրինակը, որում աշխարհագրական քարտեզով Իրանի հյուսիսարևելյան տարածքները ներկայացվում են ադրբեջանական դրոշի ներքո, ապա դասագրքի որոշ հատվածներում հենց իրանական Նովրուզի տոնն է ներկայացվում որպես ադրբեջանական՝ վաղ հասակից երեխաների մեջ ազգայնական գաղափարներ սերմանելու և աշխարհաքաղաքական նպատակներին հասնելու համար:

Վերոնշյալից զատ՝ Ադրբեջանն օգտագործում է Նովրուզը՝ հակահայկական քարոզչություն ծավալելու նպատակով: Մասնավորապես, 2021 թ. Նովրուզի տոնակատարությունը նախագահը անցկացրեց բոնազավթված հայկական Շուշի քաղաքում, որն ադրբեջանական քարոզչամեքենան անվանում է «Ադրբեջանի մշակութային մայրաքաղաք»: Հետաքրքրականն այն է, որ Իլհամ Ալիևը ծիսական կրակը Շուշի քաղաքում վառեց շաբաթ օրը՝ մարտի 20-ին, այնինչ կրակը վառում են Նովրուզին նախորդող չորեքշաբթի (Իրանում) կամ երեքշաբթի (Ադրբեջանում): Ստացվում է, որ Նովրուզն ադրբեջանական համարող առաջնորդը անգամ պատրաստ է խախտելու սրբազան ծիսակարգը՝ սեփական շահերն առաջ մղելու և էժանագին քարոզչություն ծավալելու նպատակով:

Ամփոփելով նշենք, որ, անկախ այն հանգամանքից, թե մուսուլմանական և ոչ մուսուլմանական պետություններից յուրաքանչյուրը ինչպես է փորձում ներկայացնել Նովրուզի կապն ու ծագումը սեփական պատմության և մշակույթի հետ, Նովրուզը իրանական մշակութային ժառանգություն է, որը խորհրդանշում է բնության վերածնունդը և լայն տարածում է ստացել Կենտրոնական Ասիայում, Կովկասում և Մերձավոր Արևելքում:

Թուրքական ներթափանցումը Աֆրիկա մայրցամաք

Խալիդ Օկաշա
Եգիպտոսի ռազմավարական հետազոտությունների կենտրոնի տնօրեն

2021 թ. հոկտեմբերի 19-21-ը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Հայաստանը և տարածաշրջանը. դասեր, արժեորումներ, հեռանկարներ» խորագրով միջազգային գիտաժողովը՝ նվիրված 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի 100-ամյակին:

Գիտաժողովը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ պատմության և արևելագիտության ինստիտուտները, «Հայ Յեղափոխական Դաշնակցության» Հայ դատի կենտրոնական խորհուրդը և «Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն» գիտահետազոտական հիմնադրամը: Գիտաժողովին ներկա էին անվանի պատմաբաններ, հայաստանյան և միջազգային փորձագետներ, հետազոտողներ, ՀՀ ԳԱԱ գիտաշխատողներ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամներ: Գիտաժողովի հյուրերի թվում էր ՀՀ-ում Եգիպտոսի Արաբական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Բահա Դեսուկին: Գիտաժողովի վերջին օրը զեկույց ունեցավ Եգիպտոսի ռազմավարական հետազոտությունների կենտրոնի տնօրեն, քաղաքագիտության դոկտոր Խալիդ Օկաշան: Նրա զեկույցի թեման էր «Թուրքական ներթափանցումը Աֆրիկա մայրցամաք», որը թարգմանաբար ներկայացվում է ստորև:

Թարգմանությունը՝ Սոնա Տոնիկյանի

Նպատակները և միջոցները

2002 թվականին՝ Թուրքիայում «Արդարություն և զարգացում» կուսակցության՝ իշխանության գալուց հետո, աֆրիկյան մայրցամաքը դարձավ թուրքական ղեկավարության ուշադրության առարկան: Նա որդեգրեց մի քաղաքականություն, որը հետապնդում էր «Աֆրիկայում տարածվելու» նպատակ: Կա թուրքական որոշում՝ ներթափանցելու Աֆրիկա մայրցամաք:

Աֆրիկյան մայրցամաքում բնակվում է 3.1 միլիարդ մարդ, որոնց 44 %-ը մուսուլմաններ են: Այն ունի ռեսուրսների հսկայական պաշարներ և խոստումնալից հնարավորություններ ներդրումների ոլորտում: Ի լրումն նրա, որ աֆրիկյան երկրների մեծ մասը ոչ կայուն երկրների ցուցակում է, և դրանցում այլ դերակատար պետությունների բուռն գործողություններ են ընթանում, մեծաթիվ էթնիկ և ռասայական հակամարտություններ կան, ինչը Աֆրիկան դարձրել է Անկարայի և նրա միջազգային ընդլայնման նախագծի թատերաբեմ:

Թուրքական ներթափանցումը աֆրիկյան երկրներ հիմնված էր չորս գործիքների վրա՝ տնտեսության, աֆրիկյան տարբեր մայրաքաղաքներում դիվանագիտական անմիջական ներկայության աճի, փափուկ ուժի՝ մարդասիրական, կրոնական և բժշկական համագործակցությամբ, և ի վերջո՝ ռազմական անմիջական ներկայության:

Այս հետազոտական զեկույցը նպատակ ունի անդրադառնալու Աֆրիկա մայրցամաքում թուրքական հետաքրքրության շարժառիթներին և վեր հանելու Աֆրիկա մայրցամաքի մի շարք տարածաշրջաններ ներթափանցելու համար Թուրքիայի կողմից օգտագործվող ամենաակնառու գործիքները:

Առաջին. Աֆրիկայի նկատմամբ Թուրքիայի աճող հետաքրքրության պատճառները:

1. Եվրամիությանն անդամակցելու Թուրքիայի հույսերի ոչնչացումը, հատկապես, այսպես կոչված, Արաբական գարնան ալիքների բռնկումից,

թուրքական ակտիվ դրական քաղաքականության և փափուկ ներթափանցման տասնամյակի ավարտից, Սիրիայի, Իրաքի, Լիբիայի և Արևելյան Միջերկրական ծովի աշխարհաքաղաքականության հետ անմիջական բախման փուլի սկսվելուց հետո, ինչը Թուրքիային դրդեց ոչ միայն բախվելու Եվրոպայի շահերի հետ, այլև նույնիսկ սպառնալու նրան փախստականների, զինված աշխարհազորայիններին անմիջական աջակցության և Արևելյան Միջերկրական ծովում եվրոպական էներգետիկ անվտանգության հարցերով:

2. Աֆրիկյան երկրների նկատմամբ արաբների հետաքրքրության նվազումը, որոնք կենտրոնացան ներքին խնդիրների՝ Արաբական գարնան ալիքների հետևանքով առաջացած մարտահրավերների, այդ թվում՝ սահմանների երկայնքով մեկ զինված ահաբեկչական կազմակերպությունների բուռն տարածման վրա:

3. Վերջին երկու տասնամյակների ընթացքում աֆրիկյան մայրցամաքում Թուրքիայի դեսպանատների թիվը 12-ից հասել է 42-ի: Առևտրային գրասենյակների թիվը 11-ից հասել է 26-ի: Աֆրիկայում Թուրքիայի համագործակցության և համակարգման գործակալության գրասենյակների թիվը 3-ից հասել է 11-ի: Եվ նրա գործունեության շրջանակն ընդլայնվել է՝

ընդգրկելով աֆրիկյան 28 երկիր:

4. Նեղուցներում և նավագնացության ռազմավարական գոտիներում գլոբալ մրցակցությունում Թուրքիայի աճող դերը, քանի որ վերջինս սկսել է ավելի շատ ձգտել ռազմական կայուն ներկայության աֆրիկյան մայրցամաքի որոշ տարածքներում:

5. Աֆրիկյան մայրցամաքում քաղաքական իսլամական շարժումներին աջակցությունը: Անկարան ձգտում է համագործակցելու որոշ իսլամական ուժերի հետ՝ ծայրահեղական կազմակերպությունների միջոցով ուժերի հարաբերակցությունը փոխելու նպատակով:

6. Աֆրիկայում թուրքական ռազմական հավակնությունների ամրապնդման ուղղությամբ աշխատանքը՝ ի լրումն թուրքական սպառազինության սպառման համար նոր շուկա բացելուն մի տարածաշրջանում, որն ականատես է լինում ահաբեկչական կազմակերպությունների տարածման ու տարատեսակ զինված բախումների:

7. Անկարայի տնտեսական և առևտրային շահերի ապահովումը Աֆրիկայում և տնտեսական հարաբերությունների հաստատումը: Տարածաշրջանի երկրների հետ տնտեսական հարաբերությունների հաստատմամբ Անկարան կարող է ուժեղ ազդեցության հասնել մայրցամաքում և տարածաշրջանում:

Երկրորդ. Թուրքիայի՝ աֆրիկյան մայրցամաք փափուկ ներթափանցման գործիքները:

Թուրքիան աշխատում է մեծացնել իր ազդեցությունն ու ներկայությունը աֆրիկյան մայրցամաքում մի շարք գործիքների կիրառմամբ, որոնցից կարելի է առանձնացնել ամենակարևորները.

- Թուրքիայի համագործակցության և համակարգման գործակալություն: Մայրցամաքում իր գործունեությունը ծավալում է 22 համակարգման գրասենյակների միջոցով, որոնք տարբեր ոլորտներում օգնություն են տրամադրում աֆրիկյան երկրներին: Գործակալությունը մեղադրվում է այդ քողի տակ հետախուզական գործունեության ծավալման, թուրքական վարչակազմի կողմից ահաբեկչական կազմակերպությունների հավաքագրման և ֆինանսավորման մեջ: Այն բազմաթիվ ծրագրեր է իրականացրել տարածաշրջանի երկրներում ՝ Չադ, Նիգեր և այլն:

- Թուրքական «SADAT» ընկերություն: Այն ներկայացնում է Աֆրիկայում թուրքական քաղաքականության կարևոր թևը և օգտագործվում է բազմաթիվ ձևերով, ինչպես զենքի վաճառքի, այնպես էլ անվտանգության և հետախուզական ծառայությունների առնչությամբ: Այն կարող է օգտագործվել որոշ օրինական և անօրինական հարցերում:

- Թուրքական «Ալ-Մաարեֆ» հիմնադրամ: Ստեղծվել է Թուրքիայի կառավարության կողմից՝ Ֆեթուլլահ Գյուլենի շարժման հետ կապված օտար դպրոցների ղեկավարման համար: Հաստատությունն ունի 23 մասնաճյուղ Աֆրիկայում և 333 դպրոց 43 երկրում: Այն կարողացավ գրասենյակներ հիմնել տարածաշրջանի մի շարք երկրներում: Դրանք են Չադը, Գաբոնը, Գամբիան, Գվինեան, Մալին, Մավրիտանիան, Նիգերը, Սենեգալը, Սիերա Լեոնեն, Սուդանը և Թունիսը:

Փափուկ ուժի այլ գործիքներ

Առաջին հերթին՝ մարդասիրական օգնությունը: Ներգրավված են տարածաշրջանում գործող մի շարք թուրքական կազմակերպություններ, ինչպիսիք են Թուրքիայի Կարմիր մահիկը, Թուրքիայի կրոնական հիմնադրամը և Թուրքիայի հումանիտար ընկերությունների ֆեդերացիան, որոնք մարդասիրական օգնության ակցիաներ են իրականացնում տարածաշրջանի շատ երկրներում:

Երրորդ. թուրքական ազդեցության գոտիները աֆրիկյան մայրցամաքում:

- Թուրքական ներթափանցումը Աֆրիկայի եղջյուր:

Աֆրիկայի եղջյուրը ներառված է աֆրիկյան մայրցամաքի վերաբերյալ թուրքական ավելի լայն ռազմավարության շրջանակներում, որը կենտրոնացած է աշխարհագրական սեփական շրջապատից հեռու գտնվող շրջանակներում ռազմավարական ընդլայնման և տարածման վրա: Եվ ահա թուրք պաշտոնյաները Աֆրիկան դիտարկում են որպես հնարավորությունների և ապագայի մայրցամաք: Տնտեսական և անվտանգային զարգացումները կարող են մեծացնել Աֆրիկայի եղջյուրի տարածաշրջանային ռազմավարական դիրքի կարևորությունը, քանի որ տարածաշրջանը ելք ունի դեպի Կարմիր ծով, Ադենի ծոց և Հնդկական օվկիանոս: Նրանք, ովքեր վերահսկում են այն, կարող են վերահսկել Բաբ էլ-Մանդեբի նեղուցը, որն աշխարհի ամենակարևոր ջրային ուղիներից մեկն է առևտրային և ռազմական առումներով: Այդ պատճառով Թուրքիան ձգտում է մեծացնելու իր ներթափանցումը Աֆրիկայի եղջյուրի տարածաշրջան բազմաթիվ քաղաքական, տնտեսական և ռազմական գործիքների միջոցով:

Սա կարելի է բացատրել հետևյալ կերպ.

- Քաղաքական ներթափանցում. Սոմալին հատուկ առաջնահերթություն է ստացել աֆրիկյան մայրցամաքի երկրների վերաբերյալ թուրքական հաշվարկներում, և հետևաբար այն աշխատեց Սոմալիի գործերին միջամտելու ուղղությամբ՝ նպաստելով քաղաքական ճգնաժամերի կարգավորմանը և տրամադրելով հումանիտար օգնություն: Մենք գտնում ենք, որ այս օգնության իրական շարժառիթն այն է, որ Սոմալին դարպաս է դեպի աֆրիկյան երկրներ: Միևնույն ժամանակ այն բաց շուկա է աֆրիկյան արտադրանքի համար, ինչը դրդեց Անկարային մտածելու աֆրիկյան մայրցամաքում ներդրումներ կատարելու համար գալ այս երկիր:

- Անկարան և Խարտումը համագործակցում էին 2017 թվականից՝ Սուդանի տապալված նախագահ Օմար ալ-Բաշիրի օրոք, ինչի մասին վկայում էր Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի ռազմավարական այցը: Սուդանում արագ քաղաքական վերափոխումները մտահոգություն են առաջացրել Անկարայում, սակայն տեսնում ենք, որ 2021 թ. օգոստոսին Սուդանի ինքնիշխանության խորհրդի նախագահ Աբդել Ֆաթահ ալ-Բուրհանի այցը Թուրքիա վերացրեց Անկարայի շատ վախերը:

- Թուրքիան նաև չանտեսեց ծովափնյա փոքր պետության՝ Ջիբութիի կարևորությունը և նրա հետ զարգացրեց իր դիվանագիտական և տնտեսական հարաբերությունները: Նաև փափուկ ուժի միջոցով ներթափանցելու նպատակով 2015 թվականին Էրդողանի՝ երկիր կատարած այցի շրջանակներում որոշվեց կառուցել Ամբուլիի բարեկամության ամբարտակը, «Ֆաղլա» մզկիթը և «Աբդուլ Համիդ II» վարժարանը:

Անդրադառնանք թուրք-եթովպական հարաբերություններին

1. Քաղաքական հարաբերություններ

Տեսնում ենք, որ երկու երկրների միջև կան փոխադարձ պաշտոնական այցեր. Եթովպիայի վարչապետ Աբի Ահմեդը Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հրավերով Թուրքիա է այցելել 2021 թ. օգոստոսի վերջին, և այդ այցի հետևանքով կողմերը ջրային և ռազմական ոլորտներին վերաբերող չորս համաձայնագիր են ստորագրել: Նախագահական այս այցին նախորդել էր 2021 թ. փետրվարի 12-ին Եթովպիայի արտաքին գործերի նախարար Դեմեկե Մեկոնենի այցը Թուրքիա, որի ընթացքում քննարկվել էին երկկողմ հարաբերություններին և նախագահական այցի նախապատրաստմանը, ինչպես նաև Անկարայում Եթովպիայի դեսպանատան նոր նստավայրի բացմանն առնչվող հարցեր: Այս պաշտոնական այցերը հաստատում են Ադիս Աբեբայի հետ սերտ հարաբերություններ հաստատելու Թուրքիայի մեծ հետաքրքրությունը: Այսպիսով՝ վերջին շրջանում ականատես ենք թուրք-եթովպական հարաբերությունների քաղաքական և դիվանագիտական մերձեցմանը: Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Եթովպիայի վարչապետ Աբի Ահմեդին առաջարկել է միջնորդել Տիգրայի շրջանում հակամարտության դադարեցմանը: Եթովպիան նաև խնդրել է Թուրքիային միջնորդել իր և Սուդանի սահմանային վեճը լուծելու հարցում:

2. Տնտեսական և առևտրային հարաբերություններ

- Թուրքիան աշխատում է տնտեսական գործիքների կիրառման ուղղությամբ՝ Աֆրիկայի եղջյուրի տարածաշրջանում իր ներկայությունը մեծացնելու համար՝ տրամադրելով տնտեսական օգնություն, ձգտելով բարձրացնելու առևտրային փոխանակման մակարդակը և խրախուսելով թուրք գործարարներին ու ներդրողներին ուսումնասիրելու տարածաշրջանում ներդրումային հնարավորությունները:

- Թուրքիան Աֆրիկայի եղջյուրի երկրների, հատկապես Սոմալիի առևտրային կարևոր գործընկերներից է, որն ակտիվորեն ներգրավված էր նրա վերականգնման աշխատանքներում. նավահանգիստների, օդանավակայանների և դպրոցների զարգացման միջոցով, ի վերջո, բանը հասավ այնտեղ, որ 2020 թ. հունվարին Թուրքիան արժանացավ Սոմալիի կառավարության հավանությանը Սոմալիի տարածքային ջրերում նավթ որոնելու հարցում:

- Մյուս կողմից՝ Եթովպիա ուղղվող թուրքական

Եգիպտոսի ռազմավարական հետազոտությունների կենտրոնի տնօրեն Խալիդ Օկաշան և ՀՀ-ում Եգիպտոսի Արաբական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Բահա Դեսուկին

ներդրումների ծավալը գերազանցել է հինգ միլիարդ դոլարը՝ ըստ Եթովպիայի ներդրումային կոմիտեի 2020 թ. տվյալների:

3. Հումանիտար օգնություն

- Թուրքիան ապավինեց օգնությունների միջոցին՝ որպես տարածաշրջանում իր ներկայության ապահովման մեխանիզմի, որը նրա համար ստեղծեց դրական և գրավիչ վարկանիշ՝ համեմատած արևմտյան տերությունների հետ, և նրան դարձրեց Աֆրիկայի եղջյուրի բազմաթիվ երկրների գործընկեր: Այս առումով Միջազգային զարգացման և համագործակցության գործակալությունը մեծ դեր խաղաց՝ տրամադրելով բազմաբնույթ օժանդակություն, ներառյալ կրթաթոշակները: Սոմալին 2011 թ. Թուրքիայի հումանիտար աջակցության ամենամեծ մասնաբաժինը ստացած երկիրն էր: Սա ի լրումն թուրքական «Ալ-Մաարեֆ» հիմնադրամի, որը գտնվում է Թուրքիայի վարչապետի գրասենյակի ենթակայության ներքո և ձգտում է փոխարինելու «Ֆաթուլլահ Գյուլեն» հիմնադրամին, որն արդեն մեծ տարածում է գտել Աֆրիկայում՝ մարդասիրական և կրթական գործունեության միջոցով:

- «Թուրքական Մաարեֆի օժանդակությունը» ազդեցիկ դեր խաղաց Աֆրիկայի եղջյուրում՝ մզկիթների կառուցման և բազմաթիվ երկրներում կրթական ու մշակութային դերի մեծացման ու գործունեության իրականացման միջոցով: Դրանով ազդել է հասարակությունների մշակութային կառուցվածքի վրա, ինչն էլ ցույց տվեց Սուդանի փորձը, երբ հիմնադրամը ստացավ «Ալ-Բաշիր»-ի խորհրդարանի հավանությունը երկրում թուրքական դպրոցներ հիմնելու համար, հատկապես մինչև 2019 թվականը Թուրքիայի և Սուդանի վարչակարգերի միջև գաղափարական ուղղությունների մերձեցման խորապատկերին:

4. Ռազմական և անվտանգային համագործակցություն

- 2017 թ. Թուրքիան Սոմալիում բացեց արտասահմանում իր ամենամեծ ռազմաբազան՝ 50 մլն դոլար արժողությամբ: Սոմալիի մայրաքաղաքի ծայրամասում՝ գլխավոր օդանավակայանի մոտ կառուցված հսկայական բազայի տարածքը 400 հեկտար է և ընդգրկում է 200 թուրք սպաներ, ինչը թույլ է տալիս թուրքական վարչակազմին ավելի մեծ ազդեցություն ունենալ Աֆրիկայի եղջյուրում:

- Թուրքիայի պաշտպանության նախարար, գեներալ-լեյտենանտ Հուլուսի Աքարը 2018 թ. նոյեմբերի սկզբին

այցելեց Սուդան: Նրա այցը ներառեց Կարմիր ծովում ելք ունեցող Սուակին կղզին, և պարզվեց, որ անհնար է Կարմիր ծովի վրա թուրքական ռազմաբազայի հիմնումը կղզու փոքր չափերի պատճառով:

Թուրքիայի ներխուժումը աֆրիկյան Սահելի տարածագոտի

Աֆրիկյան Սահելի տարածաշրջանում Թուրքիայի քայլերը բացահայտում են տարածաշրջանում մշտական ներկայություն հաստատելու նրա ձգտումը՝ թուլացնելով մրցակից երկրների ազդեցությունը Թուրքիայի կողմից Սահելի և Սահարայի տարածաշրջաններում անվտանգության բացակայության և անկայունության հանգամանքի շահագործմամբ, որոնցում «Ալ-Կաիդան» և ԴԱԻՇ-ը ակտիվորեն գործում են իրենց ազդեցության գոտին ընդլայնելու և ամրապնդելու համար: Անկարան ձգտում է ներթափանցելու Սահելի տարածաշրջան և Արևմտյան Աֆրիկա՝ մի շարք նպատակների հասնելու համար, որոնցից կարելի է նշել հետևյալները.

- սերտ հարաբերություններ հաստատել տարածաշրջանում գործող զինված կազմակերպությունների հետ՝ ամրապնդելու համար իր դիրքերը՝ նպատակ հետապնդելով ունենալու այնպիսի դերակատարություն, ինչպիսին իրականացնում են միջազգային տերությունները, օրինակ՝ Միացյալ Նահանգները, թուրքական ընդլայնողական օրակարգերի ճանաչման դիմաց,
- ինչպես նաև ֆրանսիական հեգեմոնիայի դաշտ ներթափանցելու համար՝ նպատակ ունենալով սահմանափակելու տարածաշրջանում Փարիզի ազդեցությունը և զսպելու Սիրիայում, Իրաքում, Արևելյան Միջերկրական ծովում և Լիբիայում թուրքական էքսպանսիոնիստական ծրագրին նրա հակազդեցությունը,
- աշխատել անօրինական ներգաղթի, կազմակերպված հանցավորության ցանցերի ու մարդկանց և թմրանյութերի մաքսանենգության խնդիրներով ճնշել եվրոպական երկրներին և նրանց հետ սակարկել գործիքների ձեռքբերման համար,
- վերահսկել աֆրիկյան մայրցամաքի արևմտյան ափի նավահանգիստները, քանի որ թուրքական «Albayrak Group»-ը Գվինեայի «Կոնակրի» նավահանգիստը ձեռք է բերել 25 տարով՝ կատարելով 700 մլն դոլարից ավելի ներդրումներ՝ ի լրումն Գամբիայի «Բանջուլ-Բարրա» նավահանգստի, որի նպատակն է բարելավել ներդրումային հնարավորությունները թուրքական ընկերությունների համար,
- լուծարել Արևմտյան Աֆրիկայում «Ֆաթահուլլահ Գյուլեն» շարժման կենտրոնները և բռնագրավել դպրոցներից ու սպասարկող հաստատություններից դրանց գույքը:

Հարկ է նշել, որ աֆրիկյան Սահելի տարածաշրջան ներթափանցելու համար Թուրքիան ապավինում է մի շարք գործիքների, որոնք կարելի է բնութագրել հետևյալ կերպ:

1. Դիվանագիտական գործունեության ակտիվացում

- Թուրք պաշտոնյաների պաշտոնական այցերը Սահել և Արևմտյան Աֆրիկայի երկրներ: 2020 թ. հունվարին Թուրքիայի նախագահ Էրդողանի վերջին այցը Գամբիա և Սենեգալ էր, իսկ 2020 թ. հուլիսին Թուրքիայի արտգործնախարարի այցը Սահել և Արևմտյան Աֆրիկա ներառեց Տոգոն, Հասարակածային Գվինեան և Նիգերը:
- Արտաքին գործերի նախարար Մևլութ Չավուշօղլուի այցի միջոցով Թուրքիայի կողմից քաղաքական վերափոխումների խնդրի շահարկումը Մալիում, որը 2020 թ. օգոստոսին ականատես եղավ ռազմական հեղաշրջման, որի ժամանակ տապալվեց նախագահ Բուբաքար Կեյտան: Այցը ռազմական հեղաշրջման օրինականացման և միջազգային աջակցության ապահովման քայլ էր Ֆրանսիայի հետ հարաբերությունների վատթարացման պայմաններում, որը տասնամյակներ շարունակ Մալիի իրարահաջորդ կառավարությունների ավանդական դաշնակիցն էր:

2. Անվտանգային համագործակցություն

- Արևմտյան Աֆրիկայի երկրներին անվտանգության և ռազմական փորձի տրամադրում:
- Անկարայի կողմից անվտանգության, համագործակցության համաձայնագրերի կնքում տարածաշրջանի շատ երկրների հետ, ինչպիսիք են Մավրիտանիան, Գամբիան, Կոտ դ'Իվուարը, Չադը, Սուդանը, Գվինեան, Նիգերիան և Բենինը: 2020 թ. հուլիսին անվտանգության համաձայնագիր ձեռք բերվեց նաև Նիգերի հետ:
- Թուրքական «SADAT» հիմնադրամի կողմից ռազմական ուսումնական ծրագրերի իրականացում աֆրիկյան շատ ուժերի և բանակների համար: Այն նաև փնտրում է աֆրիկյան մայրցամաքում ռազմական գործարքներից օգուտ ստանալու հնարավորություններ:

3. Փափուկ ներթափանցում

- Թուրքիան ակտիվ գործունեություն է ծավալում Սահելում և Արևմտյան Աֆրիկայում՝ ներգրավվելով մարդասիրական օգնության ոլորտում. ակտիվ են այս ոլորտում աշխատող մի շարք թուրքական կազմակերպություններ, ինչպիսիք են թուրքական Կարմիր մահիկը, Թուրքական կրոնական հիմնադրամը և Թուրքական մարդասիրական ընկերությունների միությունը, որոնք մարդասիրական և օժանդակության միջոցառումներ են իրականացնում տարածաշրջանի շատ երկրներում:
- Թուրքիան փորձում է իր կողմը գրավել տուարեգներին և օգտագործել նրանց իր ներկայիս քաղաքականության և Թուրքիայի նախագահի անձնական հավակնությունների ամրապնդման նպատակով՝ Աֆրիկայում տուարեգներին օգնելու և իսլամի շրջանակի ընդլայնման քողի ներքո: 2020 թ. ապրիլին 10-ին մի խումբ տուարեգ շեյխեր և առաջնորդներ այցելեցին Թուրքիա:
- Աֆրիկյան մայրցամաքի Արևմտյան ափին՝ ծովային նավահանգստի հատվածում, առկա է թուրքական

ներթափանցում և վերահսկողության հաստատում շատերի վրա: Թուրքական «Albayrak Group»-ը 25 տարով ձեռք է բերել Գվինեայի «Կոնակրի» անկախ նավահանգիստը ավելի քան 700 միլիոն դոլար ներդրմամբ՝ ի լրումն Գամբիայի «Բանջուլ-Բարրա» նավահանգստի: Դա նպատակ ունի թուրքական ընկերությունների համար բարելավելու ներդրումային հնարավորությունները:

4. Թուրքիայի միջամտությունը Լիբիայի ճգնաժամին

Թուրքական կառավարությունը ձգտում է միջամտելու Լիբիայի ճգնաժամի ընթացքին՝ մի շարք նպատակների հասնելու համար, մասնավորապես՝ ընդլայնելու իր ազդեցությունը Հյուսիսային Աֆրիկայի տարածաշրջանում և խորացնելու իր տնտեսական շահերը՝ հաշվի առնելով Լիբիայի ունեցած ներդրումային խոստումնալից հնարավորությունները և նավթի պաշարները: Թուրքական միջամտությունը Լիբիայում եղել է աստիճանական՝ սկսած Ազգային համաձայնության կառավարությանը նյութատեխնիկական, ուսուցողական և ռազմական աջակցություն ցուցաբերելուց, ապա անցնելով օդային կամրջի բացմանը՝ Սիրիայից վարձկաններ և ահաբեկիչներ տեղափոխելու համար, այնուհետև Անկարան շարունակել է Ազգային համաձայնության կառավարության հետ անվտանգության, ծովային, տնտեսական, ռազմական և առևտրային գործընկերության համաձայնագրեր ստորագրելով:

Լիբիայի ճգնաժամում Թուրքիայի կիրառած ամենաակնհայտ գործիքներն են.

1. Դիվանագիտական ակտիվ դերակատարությունը

- Թուրքիան ձգտել է ներգրավվելու լիբիական ճգնաժամին առնչվող քաղաքական պայմանավորվածություններում և բանակցային փուլերում՝ ամրագրելու իր դերը որպես ճգնաժամի կառավարման հարցում միջազգային ջանքերին արդյունավետորեն մասնակցող պետություն, ինչպես դա անում է Սիրիայի դեպքում:

- Անկարան մասնակցել է մի շարք խոշոր միջազգային քննարկումների, և տեսնում ենք, որ Թուրքիայի նախագահ Էրդողանը 2020 թ. հունվարին ներկա էր Բեռլինի կոնֆերանսին, որին մասնակցող մի շարք երկրների առաջնորդներ ընդգծեցին, որ Թուրքիան պետք է գործնականում դադարեցնի վարձկանների տեղափոխումը Լիբիա, ինչը մինչ օրս չի կատարվել:

- Անկարան ակտիվ քաղաքականություն է վարում Լիբիայի հարևան երկրների նկատմամբ: Թուրք բարձրաստիճան պաշտոնյաները այցելել են Թունիս, Ալժիր, Նիգեր և Մալի, ինչի միջոցով Անկարան նպատակ ունի մոբիլիզացնելու այդ երկրների աջակցությունը Լիբիայի արևմուտքում գտնվող իր հավատարիմ կառույցներին և հեշտացնելու զինյալներին սատարելու և աջակցելու գործողությունները՝ տվյալ տարածքներում այդ երկրների հողերի և ենթակառուցվածքների օգտագործման միջոցով:

2. Տարեսական պայմանագրերը

- Թուրքիան Ազգային համաձայնության կառավարության հետ մի շարք համաձայնագրեր և համագործակցության արձանագրություններ է կնքել, որոնք տնտեսական հեռանկար են ապահովում Համաձայնության կառավարության հետ: 2020 թ. հունիսից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում կնքվել են 4 համաձայնագրեր, որոնցից առաջինը Լիբիայի կենտրոնական բանկի, առևտրի և արդյունաբերության նախարարությունների և որոշ թուրքական ընկերությունների միջև էր, որոնք ներառում են մաքսային ենթակառուցվածքի հանձնումը թուրքական «SSK»-ին, որը պատասխանատու դարձավ լիբիական մաքսային ոլորտում էլեկտրոնային համակարգի ստեղծման և կառավարման գործում:

- Փոխըմբռնման հուշագրերից մեկը վերաբերում էր թուրքական ընկերությունների և լիբիացի գործատուների միջև եղած խնդիրների լուծմանը և թուրք կապալառուների համար ճանապարհ հարթելուն, որպեսզի նրանք Լիբիա մտնեին մեծ նախագծերով և հեշտացված պայմաններով: Եվ դա՝ ի լրումն այլ համաձայնագրերի, որոնք վերաբերում էին երկու կողմերի միջև ներդրումային ոլորտներում համագործակցության ընդլայնմանը՝ երկու կենտրոնական բանկերի միջև կապի և նրանց միջև փորձի փոխանակման հիման վրա:

- Լիբիան ունի նավթի և գազի պահուստային կարևոր պաշարներ. լիբիական անմշակ նավթի հաստատված պաշարները գնահատվում են 4.46 միլիարդ բարել, ի լրումն գազի պաշարների, որոնք գնահատվում են 55 տրիլիոն խորանարդ ֆուտ: Թուրքիան նպատակ ունի ուժեղացնելու իր ներկայությունը Լիբիայում՝ իր շահերն այնտեղ իրացնելու և ճնշման քարտեր ունենալու համար Արևելյան Միջերկրական ծովի վրա գերիշխանության և ռեսուրսների պայքարում:

3. Անվտանգությունը և ռազմական համագործակցությունը

Թուրքիան աշխատել է անվտանգության պայմանագրերի կնքման վրա՝ Լիբիայում թուրքական ռազմական ազդեցություն և ներկայություն հաստատելու համար, և դա ակնհայտ է հետևյալում.

- Խորհրդատվության տրամադրում և վերապատրաստում Լիբիայի անվտանգության հաստատություններում՝ երկարաժամկետ ազդեցություն ստեղծելու նպատակով:

- Վերատեղակայվել և տարածվել արևմտյան տարածաշրջանի հիմնական քաղաքներում, ինչպիսին է Միտիգայի բազան, որտեղ թուրքական ինքնաթիռները կենտրոնացած են վարձկաններ և զենք տեղ հասցնելու համար:

- Լիբիայի Արևմտյան ափի որոշ նավահանգիստներ ներառել ազդեցության իր գոտիներում, ինչը նա արդեն հասցրել է անել Տրիպոլիի, Միսրատայի և Ալ-Խումսի նավահանգիստներում:

- Միսուրատայի օդային ֆակուլտետը և քաղաքի նավահանգիստը դարձել են թուրք զինվորականների ամենակարևոր կենտրոններից:

- Թուրքիայի, Կատարի և Ազգային համաձայնության կառավարության միջև համաձայնագրի ստորագրումը նախատեսում է Միսուրատա նավահանգստի ակտիվացում որպես Միջերկրական ծովի արևելքում գործող թուրքական ռազմածովային նավերի բազա:

- Անկարան հակաօդային պաշտպանության

համակարգեր է տեղակայել «Ուքբա բին Նաֆիե» բազայի (Ալ-Վաթիա) և դրա օբյեկտների շուրջ՝ նախապատրաստելով դրանք թուրքական ազդեցության գոտում գտնվող այլ վայր տեղափոխելուն: Սակայն օդային գրոհների ժամանակ հասցվեցին ճշգրիտ հարվածներ, որոնք ամբողջովին ոչնչացրին բոլոր համակարգերը:

- 2020 թ. հունվարի 2-ին Թուրքիայի խորհրդարանը հավանություն տվեց Լիբիա ռազմական ուժեր ուղարկելու մասին օրենքին, որն աջակցում է Ֆայեզ ալ-Սարաջի գլխավորած Ազգային համաձայնության կառավարությանը՝ դիմակայելու Մարշալ Խալիֆա Հաֆթարի գլխավորությամբ «Լիբիայի ազգային բանակի» ուժերին:

- Պատվիրակված լիազորությունների հուշագիրը, որը թուրքական խորհրդարանի կողմից հաստատվել է 2020 թ. հունվարին, թույլ է տալիս Թուրքիային Լիբիայի Ազգային համաձայնության կառավարությանը տրամադրել ամեն տեսակի ռազմական և անվտանգային աջակցություն լիբիական տարածքներում, այդ թվում՝ լիբիական տարածքներում ռազմական հենակետերի կառուցումը:

4. Վարձկանների ներգրավումը Լիբիայի ճգնաժամի ընթացքում

- Թուրքիան հակված էր թուրքական բանակի հետ միասին վարձկաններից և ահաբեկչական խմբավորումներից խմբեր տեղափոխելու՝ ապահովելու համար Ազգային համաձայնության կառավարությանը հավատարիմ աշխարհազորայիններին տեղում աջակցություն, խորհրդատվություն տրամադրելուն և մարզելուն զուգահեռ իր ներկայությունն օրինականացնելու ուղիները և Անկարայի շահերին ծառայող զինված տարրեր գտնելու գործողությունները:

- Սիրիացի վարձկանների՝ Լիբիա տեղափոխումն սկսվեց 2019 թ. վերջին և շարունակվեց հաջորդ ամիսներին: 2020 թ. բեռլինյան համաժողովից հետո այդ գործողությունների տեմպը նվազեց, սակայն չդադարեց: Մենք տեսնում ենք նաև, որ Անկարայի կողմից օտարերկրյա տարրերի փոխադրումը չի սահմանափակվել սիրիացի վարձկաններով, այլ ընդգրկել է նաև տարբեր ազգությունների ահաբեկչական կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչը դրդեց Լիբիայի հարևան երկրներին բարձրացնելու անվտանգության մակարդակը՝ դիմակայելու համար այդ ահաբեկիչների ներթափանցման փորձերին կամ հարձակումներին:

- Հարկ է նշել, որ Թուրքիան հետ է կանչել իր մի շարք վարձկանների, որոնք Լիբիայի արևմտյան «Ալ-Վաթիա» բազա էին տեղափոխվել 2021 թ. սեպտեմբերի 14-ին: Տեսնում ենք, որ թուրքական դիրքորոշման փոփոխությունն ունի մտավախություններով պայմանավորված պատճառներ: Ընտրվելու դեպքում Լիբիայի կառավարությունը կվերանայեր Թուրքիայի հետ կնքված ռազմական և ռազմածովային համաձայնագրերը: Սա թուրքական կառավարության կանխարգելիչ քայլն է՝ որպես ռազմական ընդլայնման ռազմավարության մի մաս՝ առանց դրանից հետո կանգնելու որպես ռազմավարական նպատակ:

5. Ներթափանցումը լիբիական հասարակության կառուցվածքում:

- Թուրքիան աշխատել է Լիբիայում ցեղերի առաջնորդներին և սոցիալական խմբերի առանձին կողմերին իրար կապելու ուղղությամբ, ներառյալ ազդեցիկ գործիչները այնպիսի կարևոր քաղաքներում, ինչպիսիք են Միսրատան և Զավիան: Այս կապն ընդլայնվեց՝ ընդգրկելով նաև լիբիական սոցիալական այնպիսի կառույցների առաջնորդների և ներկայացուցիչների, ինչպիսիք են տեբու և տուարեգ ցեղերը:

- Թուրքիան օգտագործեց մի շարք այլ գործիքներ՝ հերքելու իր նախկին գործունեության վերաբերյալ մեղադրանքները և ապահովելու իր կայուն ազդեցությունը Լիբիայում տիրող իրավիճակի վրա, որտեղ նա հակված է ընդլայնման՝ նպատակ ունենալով նաև աջակցելու և պաշտպանելու թուրքական ծագմամբ լիբիացիներին: Թուրքիայի նախագահը հայտարարել է, որ «Լիբիան ունի մեկ միլիոն թուրք», ինչը փորձ է հիշեցնելու տարածաշրջանում Օսմանյան կայսրության թողած ժառանգությունն ու արմատները:

Թուրքիան փորձեց զուգահեռաբար իրականացնել ժողովրդագրական փոփոխություններ՝ ապահովելու իր գոյատևումն ու ազդեցությունը մինչև նպատակների լիակատար իրականացումը: Մի շարք զեկույցներ բացահայտել են անվտանգության կառույցներում օտարերկրյա վարձկանների ինտեգրման փաստը, որոնց Անկարան նախկինում տեղափոխել էր Լիբիա: Դա կապված էր նրանց՝ Լիբիայի քաղաքացիություն ստանալու Անկարայի խոստումների հետ, որպեսզի անվտանգության առաջիկա միջոցառումների ընթացքում նրանք լիարժեք ազդեցիկ քաղաքացիներ լինեին:

- Ազգային բանակի կողմից մայրաքաղաքի ազատագրման գործողությանը հաջորդեցին նաև տեղահանության և արևմտյան տարածաշրջանի՝ արաբական մեծամասնությամբ քաղաքների բնակիչների դեմ համակարգված ագրեսիայի ծրագրերը, որոնք ներառում էին Արևմտյան ափը, Թարխունան և այլ քաղաքներ: Այս հարձակումներին նախորդել էին հարավային շրջաններում լիբիացիների դեմ արաբական ցեղերի կատարած նմանատիպ հանցագործությունները, ինչպես դա տեղի ունեցավ Մուրզուկ քաղաքում տեղահանության և ինքնության դեմ գործողությունների հետևանքով այն բանից հետո, երբ Ազգային համաձայնությանը հավատարիմ որոշ ուժեր տարածվեցին հարավային շրջանում:

Ամփոփենք

Աֆրիկյան մայրցամաք թուրքական ներթափանցումն ընթացավ փափուկ և կոշտ տարբեր գործիքների կիրառմամբ: Սկզբում Թուրքիան կենտրոնացել էր հումանիտար օգնության և փափուկ ուժի վրա որպես իր քաղաքականության հիմնական ելակետ, որն օգնեց նրան դրական վարկանիշ ձևավորելու՝ համեմատած մայրցամաքի մյուս մրցակից ուժերի հետ: Հետո նա անցավ կոշտ գործիքների վրա հենվելու քաղաքականությանը, ինչը բացահայտում է աֆրիկյան մայրցամաքում ազդեցության և վերահսկողության ընդլայնման թուրքական հավակնությունները:

«Արդարություն և զարգացում» կուսակցության՝ իշխանության գալը Թուրքիայում (հոդված 4)

Տիգրան Զանդոյան
Քաղաքագետ, ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ

«Արդարություն և զարգացում» կուսակցության ստեղծման և իշխանության գալու պատմությունը անմիջականորեն կապված է Թուրքիայում քաղաքական իսլամի հիմնադիր համարվող Նեջմեթթին Էրբաքանի և նրա հիմնած «Ազգային տեսակետ» քաղաքական շարժման հետ: Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ ԱԶԿ համահիմնադիրներ Աբդուլլահ Գյուլն ու Ռեջեփ Թայիփ Էրդողանը իրենց քաղաքական կարիերան սկսել են այդ կուսակցությունից[1]: Հիմնադրումից տարիներ անց ԱԶԿ-ի վարած իսլամամետ-պոպուլիստական քաղաքականությունը հաշվի առնելով՝ այն կարելի է համարել «Ազգային տեսակետի» գաղափարական հետևորդ:

Դեռևս 1997 թվականից նկատելի էր «Ազգային տեսակետի» ներսում խմորվող պառակտումը: Մասնավորապես այդ շարժման հետևորդ «Առաքինություն» կուսակցության (Saadet Partisi) ռազմավարական խնդիրների քննարկումներից մեկի ժամանակ կուսակցության երիտասարդ սերնդի ներկայացուցիչներից Աբդուլլահ Գյուլը, Ջեմիլ Չիչեքը, Ալի Ջոշքունը և Աբդուլքադիր Աքսուն պահանջում էին դասեր քաղել «փետրվարի 28-ի գործընթացից»[2] (1997 թ. փետրվարի 28-ին, ներքաղաքական ճգնաժամով պայմանավորված, Թուրքիայի ԶՈՒ ղեկավարության կողմից վարչապետ Ն. Էրբաքանին ներկայացվեց 18-կետանոց վերջնագիր, որի հետևանքով Էրբաքանը հրաժարական տվեց պաշտոնից, իսկ հաջորդ տարի, Սահմանադրական դատարանի որոշմամբ, 5 տարով զրկվեց քաղաքական գործունեությամբ զբաղվելու իրավունքից[3]) և քեմալականների, իմա՝ ՀԺԿ-ի հետ վարել առավել շրջահայաց քաղաքականություն, ինչի համար, ըստ նրանց, պետք է կուսակցության ղեկավար կազմում ընդգրկվեին Ն. Էրբաքանի գաղափարական ազդեցությունից զերծ երիտասարդ կադրեր, որոնք պիտի վարեին ավելի կառուցողական քաղաքականություն և լավ հարաբերություններ հաստատեին քեմալականների հետ[4]:

2000 թ. կայացած «Առաքինություն» կուսակցության համագումարի ժամանակ հակասություններն ավելի խորացան, քանի որ կուսակցության նախագահի ընտրությանը Էրբաքանի ազդեցության ներքո գտնվող Ռեջայի Քութանի հետ առաջադրվել էր Ա. Գյուլը: Չնայած Ա. Գյուլը պարտվեց 112 ձայնի տարբերությամբ[5], այս միջադեպն արդեն ակնհայտորեն ցույց էր տալիս Էրբաքանի և Քութանի քաղաքական գծի անհեռանկար լինելն ու Գյուլի և նրա համակիրների աճող հեղինակությունը[6]: Դա էր փաստում նաև համագումարի նախօրեին Գյուլի՝ կուսակցության ղեկավարության հասցեին քննադատությամբ հանդես գալը, երբ նա կոչ էր անում համաձայնության եզրեր

գտնելու ԶՈՒ ղեկավարության հետ:

Հետագայում «Առաքինություն» կուսակցության վերշնախավին ուղղված քննադատությունները կուսակցության ներսում ավելացան, այդ թվում՝ կուսակցության ներսում հասունացած սերնդափոխության պահանջի անտեսման պատճառով: Չափավոր իսլամական քաղաքականություն վարելու կոչերը հանգեցրին Գյուլի ու նրա համախոհների կողմից նոր կուսակցության հիմնադրման գաղափարին, իսկ 2001 թ. հունիսին Թուրքիայի Սահմանադրական դատարանի կողմից «Առաքինություն» կուսակցության գործունեության արգելումը նպաստեց այդ գործընթացի արագացմանը[7]: 2001 թ. օգոստոսի 14-ին վերջինիս անդամներից չափավոր իսլամի և բարեփոխումների կողմնակիցները հիմնադրեցին «Արդարություն և զարգացում» կուսակցությունը (Adalet ve Kalkinma Partisi)՝ Ռ. Թ. Էրդողանի, Ա. Գյուլի և այլոց գլխավորությամբ[8]: ԱԶԿ ղեկավարությունը շտապեց հայտարարելու, որ հրաժարվում է «Ազգային տեսակետի» գաղափարախոսությունից, և որպես նորաստեղծ կուսակցության գաղափարական հիմք շրջանառության մեջ դրեց «ժողովրդավարական պահպանողականություն» եզրույթը[9]: ԱԶԿ հիմնադիրները ԹԱՄԺ գործող պատգամավորներ էին, որոնք 1999 թ. ապրիլի 18-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում ընտրվել էին «Առաքինություն» կուսակցության ցուցակից, և այդպիսով ԱԶԿ-ն մեխանիկորեն դարձավ խորհրդարանական կուսակցություն:

2002 թ. հուլիսի 16-ին կոալիցիոն կառավարությանը մաս կազմող կուսակցությունների միջև առկա ճգնաժամի խորացման պատճառով ակնհայտ դարձավ, որ խորհրդարանական ընտրությունները տեղի կունենան Սահմանադրությամբ նախատեսված ժամկետից 18 ամիս շուտ: Ընտրությունները տեղի ունեցան 2002 թ.

նոյեմբերի 3-ին, և դրանից ընդամենը 16 ամիս առաջ հիմնադրված ԱԶԿ-ն ստացավ ընտրողների քվեների 34.17 տոկոսը՝ խորհրդարանական 363 մանդատ[10]:

ԱԶԿ հաղթանակը պայմանավորված էր մի շարք գործոններով, որոնցից են քաղաքական վերնախավից ժողովրդի դժգոհությունը, ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների դանդաղ հաղթահարումը, քաղաքական երկարատև ճգնաժամը, որի հիմնական պատճառը 11 տարի անընդմեջ իրար հաջորդած կոալիցիոն կառավարություններն էին, և այն[11], մյուս կողմից՝ ԱԶԿ ղեկավարության անհամեմատ բարձր հեղինակությունը և կոռուպցիոն սկանդալների մեջ թաթախված չլինելու հանգամանքը[12]: ԱԶԿ հաղթանակին նպաստել էր նաև ֆինանսապես ազդեցիկ «անատոլիական բուրժուազիայի» ցուցաբերած անվերապահ աջակցությունը, որը, լինելով քաղաքականապես և տնտեսապես խոցելի, օժանդակում էր ԱԶԿ-ի ներկայացրած տնտեսական ազատականացման և սոցիալ-պահպանողական ծրագրերին[13]:

1997 թ. դեկտեմբերին Սիիրթում (Սղերդ) տեղի ունեցած հանրահավաքներից մեկի ժամանակ դեռևս Ստամբուլի քաղաքապետ Էրդողանը մեջբերում էր կատարել բանաստեղծ, թուրքական ազգային գաղափարախոսության հիմնադիրներից Զիա Գյոքալփի (ազգությամբ քուրդ) «Զինվորի երդումը» բանաստեղծությունից, ինչը Դիարբեքիրի պետական անվտանգության դատարանի կողմից ճանաչվեց որպես կրոնական ատելություն սերմանելու գործողություն, և Էրդողանը դատապարտվեց 10-ամսյա կալանքի ու զրկվեց կարևոր պաշտոններ զբաղեցնելու իրավունքից[14]: Էրդողանը բանտում անցկացրեց 4 ամիս՝ 1999 թ. մարտից մինչև հուլիսը, ինչի հետևանքով նրա վարկանիշը զգալիորեն բարձրացավ[15], սակայն, դատարանի որոշման երկրորդ մասի համաձայն, նա չկարողացավ 2002 թ. մասնակցել խորհրդարանական ընտրություններին, և ԱԶԿ-ի ձևավորած միակուսակցական կառավարության ղեկավար դարձավ Ա. Գյուլը: Գյուլը վարչապետի պաշտոնը զբաղեցրեց մինչև 2003 թ. ապրիլը: Այդ ընթացքում իրականացված մի շարք օրենսդրական փոփոխությունների հետևանքով Էրդողանի՝ քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը վերացվում է, և 2003 թ. մարտին Սիիրթ նահանգում տեղի ունեցած լրացուցիչ ընտրություններում հաղթելով՝ Էրդողանը սկզբում դառնում է ԹԱՄԺ պատգամավոր, ապա՝ ընտրվում վարչապետ: Էրդողանի ձևավորած կառավարության կազմում Գյուլը համատեղում է փոխվարչապետի և արտգործնախարարի պաշտոնները[16]:

Իշխանության գալով՝ ԱԶԿ-ն սկիզբ դրեց քաղաքական նոր գործելաոճի: Էրդողանը որդեգրեց պետության և ժողովրդի միջև գործակցության նոր սկզբունք, ըստ որի՝ պետությունը պետք է վերածել ժողովրդին ու անհատին ծառայություն մատուցող ինստիտուտի՝ վերջ դնելով մինչ այդ գործած հակառակ սկզբունքին[17]: Դրանով պայմանավորված՝

Արդարություն և զարգացում կուսակցության հանրահավաքը

ԱԶԿ վերնախավը առաջ քաշեց ծառայության (hizmet) գաղափարը՝ որպես պետական մարմինների և ժողովրդի միջև հարաբերությունների և գործակցության նոր սկզբունք: Այս քաղաքականության խորքային նպատակը հանրային այն ընկալման դեմ պայքարն էր, ըստ որի՝ ԱԶԿ-ն համարվում էր «Ազգային տեսակետի» հերթական կուսակցություն[18]: ԱԶԿ-ն ձգտում էր հնարավորինս հեռանալու Էրբաքանի հետ բոլոր զուգահեռումներից՝ քաղաքական դաշտում աջ կենտրոնական կուսակցության դիրք գրավելով և պահպանողական ժողովրդավարության գաղափարախոսություն որդեգրելով[19]:

ԱԶԿ-ի վարած արտաքին քաղաքականությունը ևս տարբերվում էր Էրբաքանի արտաքին քաղաքականությունից: Եթե Էրբաքանը առավելապես ուներ իսլամական կողմնորոշում և փորձում էր լավ հարաբերություններ հաստատել իսլամական աշխարհի երկրների հետ, ապա ԱԶԿ վերնախավը, իշխանության գալով, սկսեց ակտիվորեն եվրոպամետ քաղաքականություն վարել[20]: Տեղի ունեցան այցեր եվրոպական մայրաքաղաքներ, որոնցով փորձ էր արվում ցուցադրելու ԱԶԿ-ի եվրոպամետ լինելը: 2002 թ. դեկտեմբերին ԵՄ կոպենհագենյան գագաթնաժողովում որոշվեց խրախուսել դեռևս նախորդ իշխանության օրոք սկսված բարեփոխումների ընթացքը, և նշվեց, որ եթե մինչև 2004 թվականը բարեփոխումների արդյունքները լինեն նկատելի, ապա կմեկնարկի Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցելու բուն գործընթացը[21]: Դա ԱԶԿ-ի համար շատ կարևոր որոշում էր, և դրան հաջորդեց օրենսդրական փոփոխությունների լայնամասշտաբ գործընթացը: Փոփոխվեց Սահմանադրության մեկ երրորդը, հասարակության հետ տարված քարոզչական արդյունավետ աշխատանքների շնորհիվ գրանցվեց ԵՄ-ին անդամակցելու կողմնակիցների՝ Թուրքիայում արձանագրված ամենաբարձր ցուցանիշը՝ 70 տոկոս[22]:

Աչքի առաջ ունենալով քաղաքական միջամտության՝

զինվորական վերնախավի փորձառությունը՝ ԱԶԿ-ն ձեռնարկեց և առանց շտապողականության իրականացրեց մի շարք բարեփոխումներ, որոնց նպատակը զինվորականության անքննելի համարվող դերակատարության սահմանափակումն էր քաղաքական գործընթացներում[23]: Օրենսդրական և սահմանադրական որոշակի փոփոխություններով ԱԱԽ անդամների համամասնությունը փոխվեց հօգուտ քաղաքացիականների, իսկ ԱԱԽ գլխավոր քարտուղարի պաշտոնում նշանակվեց քաղաքացիական անձ[24]:

2002-2007 թթ. արձանագրվեց տնտեսական աճ: ԱԶԿ-ի՝ իշխանության գալու պահին Թուրքիայի տնտեսությունը աշխարհում 26-րդն էր՝ 230 մլրդ դոլար ՀՆԱ-ով[25]: Ֆինանսավարկային համակարգում ԱԶԿ-ի իրականացրած բարեփոխումների և վարած ներդրումային քաղաքականության շնորհիվ 7 տարի անց Թուրքիայի տնտեսությունը զբաղեցրեց 16-րդ հորիզոնականը՝ 780 մլրդ դոլարով: Մեծ աճ գրանցեց մեկ շնչին հասնող ՀՆԱ-ն՝ 3500 դոլարից հասնելով 10.000-ի: Էապես աճեց արտահանման ծավալը, օտարերկրյա ներդրումները գրեթե եռապատկվեցին: 2005 թ. հունվարի 1-ից շրջանառության մեջ դրվեց նոր լիրան, որի դեվալվացիայի հետևանքով վեց զրո կրճատվեց[26]:

ԱԶԿ-ի ձեռնարկած լայնամասշտաբ բարեփոխումների և փոփոխությունների հետևանքով էապես փոխվեց քաղաքացիների կենսամակարդակը, բարելավվեց կյանքի որակը: Կառավարությունը միջոցներ ներդրեց մեծ քաղաքների ենթակառուցվածքների զարգացման համար, իրականացվեց լայնածավալ շինարարություն, կառուցվեցին բազմահարկ շենքեր, ի հայտ եկան էլիտար թաղամասեր, երկրի տարբեր հատվածներում շահագործման հանձնվեցին նոր օդանավակայաններ, մայրուղիներ, ընդլայնվեց երկաթուղային ցանցը[27]:

Այս ամենին զուգահեռ՝ փոփոխություններ էին տեղի ունենում նաև հասարակության շրջանում: Այն գնալով դառնում էր ավելի պահպանողական, պահպանողական կողմնորոշում ունեցող նոր գործարար էլիտան ազդեցություն էր ձեռք բերել քաղաքական ոլորտում՝ փոփոխության ենթարկելով քաղաքական մշակույթը[28]: Լայն տարածում ստացավ մզկիթաշինությունը, մեծացավ կրոնական գլխաշոր կրող կանանց թիվը[29]: ԱԶԿ-ն զգալի աջակցություն էր ստանում «Նուրջու» կրոնական հոսանքի առաջնորդ Ֆեթուլլահ Գյուլենից և Նաքշիբենդի կրոնական միաբանությունից: Վերջիններիս օժանդակությամբ ԱԶԿ-ն շոշափելի հաջողություններ արձանագրեց 2004 թ. մարտին տեղի ունեցած ՏԻՄ ընտրություններում՝ ստանալով ձայների 42 տոկոսը և հաղթելով Անկարայում ու Ստամբուլում: Հատկապես նշանակալի էր գյուլենականների ցուցաբերած աջակցությունը, որոնց թիվը Թուրքիայում մի քանի հարյուր հազարի է հասնում[30]:

2007 թ. հուլիսի 22-ին Թուրքիայում անցկացվեցին արտահերթ խորհրդարանական ընտրություններ, ինչի պատճառը ներքաղաքական ճգնաժամն էր: Խնդիրն այն էր, որ 2007 թ. մայիսին լրացավ հանրապետության նախագահ Ահմեթ Սեզերի լիազորությունների ժամկետը: Սեզերի և ԱԶԿ-ի միջև հակասություններ կային ԱԶԿ-ի՝ իշխանության գալուց ի վեր, ինչի պատճառը քեմալական Սեզերի անհամաձայնությունն էր ԱԶԿ-ի վարած իսլամամետ-պոպուլիստական քաղաքականությանը. ԱԶԿ-ի առաջարկած ավելի քան 300 պաշտոնի նշանակման հրամանագրերը Սեզերը հրաժարվել էր իր ստորագրությամբ վավերացնելուց[31]: Խորհրդարանական մեծամասնություն կազմող ԱԶԿ-ի ներսում ակտիվորեն շրջանառվում էր նախագահի պաշտոնում Էրդողանի թեկնածությունն առաջադրելու գաղափարը[32]: Դա առաջ բերեց քեմալականների դժգոհությունը, և մի շարք քաղաքներում ծայր առավ բողոքի լայն ալիք, որով քեմալականները Էրդողանից պահանջում էին հարգել Թուրքիայի աշխարհիկ կարգերն ու զերծ մնալ իրեն կամ իր կուսակցության անդամներից մեկին որպես նախագահի թեկնածու առաջադրելու մտքից: Ի վերջո, Էրդողանը հրաժարվեց իր թեկնածությունն առաջադրելու մտքից, փոխարենը առաջադրվեց արտգործնախարար Ա. Գյուլի թեկնածությունը: Այս քայլը հանգեցրեց ԱԶԿ-ՋՈՒ հակասությունների խորացմանը, և ՋՈՒ ԳԾ կայքէջում տեղադրված հայտարարությամբ քեմալական զինվորականությունը անուղղակիորեն սպառնաց միջամտել քաղաքական գործընթացին հանրապետական աշխարհիկ կարգերը խաթարելու դեպքում[33]: Չնայած այս ամենին՝ Գյուլը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կողմից ընտրվեց նախագահ, ինչը ՀԺԿ-ն բողոքարկեց Սահմանադրական դատարանում, և բողոքը բավարարվեց: Ստեղծված իրադրությունից միակ ելքը արտահերթ խորհրդարանական ընտրություններն էին[34]:

Ի հեճուկս քեմալականների և ՋՈՒ-ի՝ ԱԶԿ-ն ավելի շատ քվե ստացավ, քան նախորդ՝ 2002 թ. ընտրություններին, այն է՝ ձայների 46.5 տոկոսը, որին համապատասխան՝ խորհրդարանում ստացավ 341 մանդատ: Ընտրություններից մեկ ամիս անց ԱԶԿ-ն կրկին առաջադրեց Գյուլի թեկնածությունը, և օգոստոսի 28-ին Աբդուլլահ Գյուլը ընտրվեց Թուրքիայի Հանրապետության 11-րդ նախագահ[35]: Նույն թվականի հոկտեմբերի 21-ին անցկացված հանրաքվեի արդյունքներով փոփոխվեցին Սահմանադրության մի շարք դրույթներ, համաձայն որոնց՝ նախագահի ընտրության կարգը փոխվում էր՝ դառնալով ուղղակի: Նախագահելու 7-ամյա ժամկետը փոխարինվում էր 5-ամյա ժամկետով՝ կրկնակի կառավարելու սկզբունքով, խորհրդարանական ընտրությունների անցկացման ժամկետը փոխվում էր՝ 5 տարուց դառնալով 4 տարի: Խորհրդարանական քվորում ապահովելու շեմն իջեցվեց՝ հասցվելով 34 տոկոսի[36]:

2008 թ. սկզբին ԱԶԿ-ն աջ ուղղվածություն ունեցող «Ազգային շարժում» (Milliyetçi Hareket Partisi) և «Դեմոկրատական հասարակություն» կուսակցությունների (Demokratik Toplum Partisi) հետ

հանդես եկավ օրենսդրական նախաձեռնությամբ, որով վերացվելու էր համալսարաններ և պետական հաստատություններ գլխաշոր կրող կանանց մուտք գործելու արգելքը: Փետրվարի 9-ին ձայների 411 կողմ և 103 դեմ հարաբերակցությամբ օրենսդրական փոփոխությունը հաստատվեց, և վերջ դրվեց ավելի քան երեք տասնամյակ թուրքական հասարակությունը պառակտած խնդրին: Բանն այն էր, որ կրոնական գլխաշոր կրելը դիտվում էր որպես քաղաքական իսլամի խորհրդանիշ, և քեմալականները դա համարում էին աշխարհիկության դեմ ուղղված սպառնալիք[37]:

Նախագահ Գյուլի կողմից սահմանադրական փոփոխությունների փաթեթի հաստատումից հետո ընդդիմադիր ՀԺԿ-ն Սահմանադրական դատարանում վիճարկեց փոփոխությունների սահմանադրականությունը, և հունիսի 5-ին ձայների 9 կողմ և 2 դեմ հարաբերակցությամբ Սահմանադրական դատարանը չեղյալ հայտարարեց փետրվարի 9-ին ընդունված փոփոխությունները[38]: Համաձայն Թուրքիայի Հանրապետության Սահմանադրության՝ Սահմանադրական դատարանի կայացրած այդ որոշումը հակասահմանադրական էր, քանի որ Սահմանադրական դատարանն իրավունք ունի քննելու Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ ներկայացված հայցերը միայն ըստ ձևի և ոչ ըստ բովանդակության[39]:

2008 թ. մարտի 14-ին Վճռաբեկ դատարանի գլխավոր դատախազը հայց ներկայացրեց Սահմանադրական դատարան, որով իշխող ԱԶԿ-ին մեղադրում էր հակաշխարհիկ գործունեություն ծավալելու, այսինքն՝ Աթաթուրքի գաղափարները չպահպանելու և իսլամամետ քաղաքականություն վարելու մեջ և պահանջում կասեցնել ԱԶԿ գործունեությունը, ԱԶԿ կառավարման խորհրդի շուրջ 70 անդամներին, այդ թվում և՝ Էրդողանին ու Գյուլին, 5 տարով զրկել քաղաքականությամբ զբաղվելու իրավունքից, ձերբակալել ԱԶԿ մի շարք անդամների[40]: Չնայած Սահմանադրական դատարանը մերժեց հայցի բավարարումը և սահմանափակվեց ԱԶԿ-ին ֆինանսական պատասխանատվության ենթարկելով, այնուամենայնիվ, սա ԱԶԿ-ի և աշխարհիկ քեմալական ուժերի միջև եղած հակասությունների հերթական դրսևորումն էր, որին հաջորդեց «Էրգենեքոնի» գործը, ինչը ԱԶԿ-ն հմտորեն օգտագործեց ԶՈՒ-ի և քեմալականների դեմ:

2008 թ. մարտի 21-ին աջ ծայրահեղ ազգայնական խմբավորումներից մեկի անդամների ձերբակալմամբ սկիզբ առավ «Էրգենեքոն» գաղտնի կազմակերպության ու դրա գործունեության բացահայտման գործը[41], որին հաջորդեց ձերբակալությունների 13 ալիք հետագա 4 տարիների ընթացքում[42]: Ձերբակալվեցին ԶՈՒ բարձրագույն և միջին սպայական կազմի, մտավորականության, դատահիրավական համակարգի, լրագրության մի քանի հարյուր ներկայացուցիչներ, որոնց անունները այս կամ այն կերպ առնչվում էին գաղտնի կազմակերպություններին, առգրավվեցին մեծաքանակ զենք և զինամթերք, համակարգչային

Դավութօղլուն և Էրդողանը

ֆայլեր, որոնցում կարևոր ապացույցներ կային 2000-ականներին զինվորականների պլանավորած գործողությունների վերաբերյալ: Զինվորականության դիրքերին մեծ հարված հասցվեց նաև 2010 թվականին, երբ «Թարաֆ» օրաթերթում տպագրված հոդվածով բացահայտվեց զինվորականների կողմից ծրագրված «Մեծ մուրճ» («Baloz») օպերացիան, որոնց նպատակն էր 2003 թվականին երկրում հեղաշրջում իրականացնել[43]: Ըստ օրաթերթի՝ զինվորականները ծրագրել էին հատուկ գործողությունների միջոցով ստեղծել քաոսային իրավիճակ՝ ի վնաս ԱԶԿ-ի, և առաջ բերել հանրային ընդվզումներ՝ նախադրյալներ ստեղծելով հեղաշրջման համար[44]: Այս բացահայտմանը հաջորդեցին ձերբակալություններ Թուրքիայի տարբեր քաղաքներում. ձերբակալվեցին մոտ 70 բարձրաստիճան գործող և պահեստի սպաներ, ապա՝ մինչև տարեվերջ՝ ևս 200 զինվորականներ, որոնց դեմ դատավարությունը սկսվեց 2010 թ. դեկտեմբերի 16-ից:

2010 թ. սեպտեմբերի 12-ին անցկացվեց սահմանադրական փոփոխությունների հանրաքվե՝ Թուրքիայում ԶՈՒ-ի և դատական համակարգի լիազորությունների ու նրանց՝ ներքաղաքական գործընթացներին մասնակցության սահմանափակման, քաղաքացիների սոցիալ-տնտեսական իրավունքների և ազատությունների հարցերով[45]: Այս սահմանադրական բարեփոխմամբ ԱԶԿ-ն նպատակ էր հետապնդում թուլացնելու աշխարհիկ-քեմալիստական ուղղվածության ԶՈՒ-ի և դատական համակարգի դիրքերը, քանի որ վերջիններս քաղաքական լուրջ հակակշիռ էին ԱԶԿ-ին:

Փոփոխությունների փաթեթի համաձայն՝ վերացվում էր Սահմանադրության այն հոդվածը, որն իրավական պաշտպանություն և անձեռնմխելիություն էր ապահովում ռազմական հեղաշրջման կազմակերպիչներին, ամրագրում էր բարձրագույն զինվորականության ներկայացուցիչներին և դատական պաշտոնյաներին որպես մեղադրյալ ներգրավելու իրավունքը, Սահմանադրական դատարանի անդամների թիվը 11-ից հասցվում էր 17-ի, իսկ դատավորների և դատախազների բարձրագույն խորհրդի

անդամների թիվը՝ 7-ից 22-ի[46]:

Սահմանադրական փոփոխություններին կողմ քվեարկեց քաղաքացիների 58 տոկոսը, ինչի հետևանքով ԶՈՒ-ի և դատական իշխանության սահմանադրական լիազորությունների սահմանափակման պայմաններում ԱԶԿ-ն ստացավ գրեթե անսահմանափակ իշխանություն: Ստանալով Թուրքիայի քաղաքացիների 58 տոկոսի վստահության քվեն՝ Էրդողանի քաղաքական վարքագիծը ենթարկվեց որոշակի փոփոխությունների՝ դրսևորելով բացահայտ ավտորիտար միտումներ[47]:

2011 թ. հունիսի 12-ին Թուրքիայում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ, որոնք նախորդ խորհրդարանական ընտրություններից ունեին մի շարք տարբերություններ: 1983 թվականից ի վեր դրանք առաջին խորհրդարանական ընտրություններն էին, որոնք արտահերթ չէին, այլ հերթական: Այդ ընտրություններում հաղթելու դեպքում ԱԶԿ-ն կդառնար երկրի՝ բազմակուսակցական համակարգին անցնելուց հետո ամենաերկար կառավարած քաղաքական ուժը[48]:

ԱԶԿ-ն ընտրություններին մասնակցեց թարմացված թեկնածուական ցանկերով, որում ընդգրկման հիմքը Էրդողանի հանդեպ հավատարմությունն էր և նրա կայացրած որոշումների անվերապահ կատարումը: Թերևս դա է պատճառը, որ նախկին խորհրդարանի ԱԶԿ պատգամավորներից 164-ը դուրս էին մնացել ԱԶԿ նախընտրական ցուցակից:

Ի տարբերություն մյուս քաղաքական կուսակցությունների թեկնածուների՝ ԱԶԿ թեկնածուները քարոզչության ընթացքում չէին խուսափում քրդական հիմնահարցին «քրդական» բնորոշում տալուց՝ «հարավարևելյան խնդիր» շինծու բնորոշման փոխարեն[49]:

Ընտրությունների նախօրեին ձերբակալվեցին ավելի քան 60 լրագրողներ, ինչի պատճառը Էրդողանի անհանդուրժողականությունն էր իրեն և իր վարած քաղաքականությունը քննադատող ԶԼՄ-ների նկատմամբ: Վերջին 4 տարիների ընթացքում Էրդողանը բազմիցս քննադատել էր ԶԼՄ-ներին, և դա հաճախ ուղեկցվել էր նրանց նկատմամբ գործադրված ճնշումներով ու հետապնդումներով[50]:

ԱԶԿ-ն իր առջև խնդիր էր դրել ձեռք բերելու առնվազն 367 պատգամավորական մանդատ, ինչը նրան թույլ կտար գրեթե անարգել իրականացնել սահմանադրական փոփոխություններ: Սակայն հունիսի 12-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններին ստացած 49 տոկոս ձայներով ԱԶԿ-ն ձեռք բերեց 327 մանդատ՝ հեշտությամբ հաղթահարելով մեծամասնության համար անհրաժեշտ 276 մանդատի շեմը, սակայն երկու առավել կարևոր՝ 330 և 367 մանդատների շեմերը հաղթահարել նրան չհաջողվեց, ինչը հնարավորություն կտար խորհրդարանում հավանության արժանացած սահմանադրական փոփոխության ցանկացած նախագիծ դնելու քվեարկության (330 մանդատի առկայության պարագայում) և ընդունելու սահմանադրական փոփոխություններ հենց խորհրդարանում (367 մանդատի առկայության պարագայում)[51]:

ԱԶԿ-ի վարած ներքին քաղաքականությունը Թուրքիայի հասարակության շրջանում ընդունվում էր ոչ միանշանակորեն: Թուրքական հասարակության տարբեր շերտեր տարբեր կերպ էին արձագանքում Էրդողանի քաղաքական կուրսին: Մասնավորապես այն անընդունելի էր քեմալականների, աշխարհիկների, ազատականների և ազգային ու կրոնական փոքրամասնությունների համար, և դրա դրսևորումը 2013 թ. մայիսի 28-ից հունիսի 15-ը Թուրքիայի ավելի քան 90 քաղաքներում տեղի ունեցած լայնամասշտաբ բողոքի ցույցերն էին, որոնց մասնակցեց մոտ 2.5 միլիոն մարդ[52]: Բողոքի ցույցերը սկիզբ առան Ստամբուլի Թաքսիմ հրապարակին հարող Գեզի այգուց, որտեղ կառուցապատման աշխատանքներ իրականացնելու նպատակով որոշվել էր կտրել ծառերը: Ցույցերը մեկնարկեցին ընդամենը 50 երիտասարդ բնապահպանների իրականացրած ակցիայով, որոնց հետագայում միացան սոցիալական և գաղափարախոսական տարբեր կողմնորոշումներ ունեցող քաղաքական, հասարակական շարժումներ և կազմակերպություններ: Ցույցերի մասնակիցները հիմնականում քաղաքային միջին խավի երիտասարդներն էին, որոնք քննադատում էին ԱԶԿ-ի վարած քաղաքականության մի շարք ուղղություններ, մասնավորապես՝ մարդու իրավունքների և բնապահպանական նորմերի խախտումները, հանրային տարածքների իսլամացումը՝ մզկիթաշինությունը, հասարակական կյանքի որոշ ոլորտների նկատմամբ կառավարական վերահսկողության մեխանիզմների ընդլայնումը, ոստիկանության կողմից ավելացող բռնությունները և իշխանությունների ավտորիտար հակումները[53]:

Էրդողանը, որն այդ ընթացքում բացակայում էր երկրից, ցուցարարներին անվանեց «սադրիչ-խռովարարներ» և անհավատներ՝ մեղադրելով նրանց արտաքին ուժերին ծառայելու և Թուրքիայի տնտեսությունը քայքայելու մտադրության մեջ[54]: Ոստիկանների կիրառած անհամաչափ ուժի հետևանքով զոհվեց 11 մարդ, տարբեր աստիճանի վիրավորում ստացավ մոտ 8000 քաղաքացի[55]:

Շարժման շնորհիվ Գեզի այգին պահպանվեց և շարունակեց ծառայել որպես քաղաքային զբոսայգի, սակայն այս դեպքերը փոխեցին Թուրքիայի քաղաքական գործընթացների, ինչպես նաև իշխանություն-ընդդիմություն-հասարակություն փոխհարաբերությունների սկզբունքները:

2013 թ. սեպտեմբերի 30-ին Էրդողանը հայտարարեց բարեփոխումների նոր փուլի մեկնարկի մասին, որոնք նա անվանեց «Ժողովրդավարացման փաթեթ»[56]: Այն ներառում էր մի շարք փոփոխություններ, ըստ որոնց՝ կրոնական գլխաշոր կրող կանայք այդուհետ իրավունք էին ստանում աշխատելու պետական հաստատություններում (բացառությամբ ԶՈՒ-ի, ոստիկանական համակարգի, դատական համակարգի) և կրթություն ստանալու պետական համալսարաններում[57]: Այս քայլը հասարակության

մեջ բարձրացրեց Գեզի այգու դեպքերից տուժած՝ Էրդողանի վարկանիշը:

Հաջորդ քայլը դպրոցներում երդմնակալության արարողության վերացումն էր, ինչին 1933 թվականից ի վեր աշակերտները մասնակցում էին ամեն առավոտ Թուրքիայի ազգային կրթության նախարարության բոլոր դպրոցներում[58]:

Թույլատրվեց մասնավոր դպրոցներում քրդերենի դասավանդումը, սակայն այն առարկաների դեպքում, որոնք հաստատված էին Ազգային կրթության նախարարության կողմից: Թույլատրվեց ընտրապայքարի ժամանակ օգտագործել այլ լեզուներ և բարբառներ, ինչպես նաև քրդերենում օգտագործվող Q, W, X տառերի կիրառումը, որոնք բացակայում էին թուրքերեն այբուբենում, և որոնց կիրառումն արգելված էր[59]:

Որոշակի փոփոխություններ էին նախատեսվում նաև ընտրական օրենսգրքում՝ ընտրական շեմի իջեցում 10-ից 7 տոկոսի, պատգամավորների թվի կրճատում և այլն, սակայն այդ հարցերն անգամ չքննարկվեցին խորհրդարանում՝ մնալով անփոփոխ:

«Ժողովրդավարացման փաթեթում» ներառված մյուս փոփոխությունները վերաբերում էին կրոնական, ազգային, լեզվական և այլ խտրականությունների դեմ պայքարին և այդ նպատակով քրեական պատասխանատվության խստացմանը:

2014 թ. մարտին ԹԱՄԺ-ն գրեթե ամբողջությամբ ընդունեց «Ժողովրդավարացման փաթեթը»՝ իրականություն դարձնելով բարեփոխումների երրորդ փուլը[60]:

Մարտի 30-ին Թուրքիայում տեղի ունեցան ՏԻՄ ընտրություններ: Ընտրություններին մասնակցում էր 26 կուսակցություն, սակայն հիմնական ընտրապայքարը խորհրդարանական կուսակցությունների՝ ԱԶԿ-ի, ՀԺԿ-ի, ԱՇԿ-ի և ԽԺԿ-ի միջև էր[61]:

Ընտրություններին նախորդած 10 ամիսներին ԱԶԿ-ի վարած քաղաքականությունը հասարակության շրջանում դժգոհությունների տեղիք էր տվել, և կարծիք կար, թե ԱԶԿ-ն այդ ընտրություններում կպարտվի: Ի հեճուկս դրա՝ ԱԶԿ-ն 30 նահանգային քաղաքներից հաղթեց 18-ում, 51 քաղաքներից՝ 32-ում, իսկ 900 շրջաններից՝ 556-ում[62]: Ուշագրավ էր այն, որ Էրդողանն ընտրարշավին մասնակցեց՝ այցելելով 81 նահանգներից ընդամենը 20-25-ը, ինչի պատճառը առողջական խնդիրներն էին, հատկապես ձայնալարերի բորբոքումը: Այնուամենայնիվ, դա չխանգարեց ԱԶԿ-ին արդեն 8-րդ անգամ ստանալու Թուրքիայի ընտրողների մեծամասնության վստահության քվեն, ինչը աննախադեպ ցուցանիշ էր Թուրքիայի քաղաքական պատմության մեջ[63]:

ՏԻՄ ընտրություններից 5 ամիս անց տեղի ունեցավ նախագահական ընտրություն: Օգոստոսի 10-ի ընտրությունների առանձնահատկությունն այն էր, որ առաջին անգամ հանրապետության նախագահն ընտրվում էր ուղղակի մանդատով՝ ժողովրդի կողմից: ԱԶԿ-ի առաջադրած միակ թեկնածուն վարչապետ Էրդողանն էր[64]: Ընդդիմությունը՝ ՀԺԿ-ն, ԱՇԿ-ն և ևս 12 արտախորհրդարանական ուժեր, հանդես եկան միասնական թեկնածուով, որը պատմաբան և իսլամագետ, 2004-2014 թթ. Իսլամական համագործակցության կազմակերպության գլխավոր քարտուղար, Եգիպտոսում ծնված և մեծացած Էքմելեդդին Իհսանօղլուն էր: Վերջինս չուներ քաղաքական փորձառություն և հանրության լայն շրջանակներին անծանոթ էր: Երրորդ թեկնածուն քրդական թևը ներկայացնող, իրավապաշտպան Սելահեթթին Դեմիրթաշն էր[65]:

Քաղաքագետներին և հանրությանը հուզող հիմնական հարցն այն էր, թե Էրդողանը կստանա՞ արդյոք ձայների 50 տոկոսը, թե՞ անհրաժեշտ կլինի անցկացնել ընտրության երկրորդ փուլ:

Ընտրություններում Էրդողանը ստացավ ձայների 51.8 տոկոսը, և ընտրության երկրորդ փուլի անհրաժեշտություն չծագեց[66]: Չնայած հասարակության աշխարհիկ-քեմալական, ազգայնական զանգվածների աջակցությունն ստանալու ակնկալիքներին՝ Իհսանօղլուն ստացավ քվեների 38.4, իսկ Դեմիրթաշը՝ 9.8 տոկոսը, ինչը, քրդաբնակ նահանգներում մեծ թիվ կազմելով, այնուհանդերձ, հանրապետության մակարդակով որոշիչ նշանակություն չունեցավ[67]:

Ընտրությունների նախնական տվյալների հրապարակումից հետո Էրդողանը ելույթ ունեցավ, որում ասվում էր, որ մինչև 2023 թվականը՝ Թուրքիայի Հանրապետության հոչակման 100-ամյակը, երկրի ՀՆԱ-ն պետք է դառնար աշխարհի 10 խոշորագույններից մեկը, առևտրի ծավալները պետք է կազմեին 1 տրիլիոն ԱՄՆ դոլար, արտահանման ծավալը՝ 500 միլիարդ ԱՄՆ դոլար: Այս ամենից բացի՝ նպատակ էր դրվում Թուրքիան դարձնելու աշխարհում զբոսաշրջային, գյուղատնտեսական, ռազմաարդյունաբերական լավագույն երկրներից մեկը և այլն[68]:

Օգոստոսի 21-ին ԱԶԿ արտահերթ համագումարում Էրդողանը հրաժարվեց կուսակցության նախագահի պաշտոնից, ինչպես Սահմանադրությունն է պահանջում, և նույն ամսի 28-ից ստանձնեց երկրի նախագահի լիազորությունները, իսկ կուսակցության նախագահի պաշտոնում նրան փոխարինեց արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն[69]:

2015 թ. հունիսի 7-ին տեղի ունեցան հերթական խորհրդարանական ընտրությունները, որոնցում իշխող ԱԶԿ-ն գրանցեց իր իշխանության ընթացքում ունեցած վատագույն արդյունքները: Չնայած ծախսած վարչաֆինանսական հսկայական ռեսուրսներին և գործադրած ջանքերին՝ ԱԶԿ-ն ստացավ ձայների 40.8 տոկոսը՝ ձեռք բերելով 276 մանդատ[70]: «Զախողման» պատճառների շարքում կարելի է նշել Էրդողանի վարած ներկուսակցական անհաջող քաղաքականությունը, ԱԶԿ նախագահ Դավութօղլուի իրականացրած թույլ քարոզարշավը, ինչպես նաև ԱԶԿ-ի ներկայացրած ծրագրի անհասկանալի լինելը Թուրքիայի քաղաքացիների մեծամասնության համար: Կարևոր է նշել նաև, որ Էրդողանի ուղղակի մասնակցությունը քարոզարշավին, ինչը Սահմանադրության խախտում էր, նույնպես բացասաբար անդրադարձավ կուսակ-

ցության վարկանիշի վրա[71]:

2016 թ. Թուրքիայում կատարվեց ռազմական հեղաշրջման փորձ, որը ձախողվեց[72]: Հեղաշրջման փաստացի ղեկավարը ռազմաօդային ուժերի նախկին հրամանատար, ռազմական բարձրագույն խորհրդի անդամ Աքըն Օզթյուրքն էր: Հեղաշրջման մասնակիցները փորձեցին վերահսկողություն սահմանել Թուրքիայի մի շարք քաղաքներում, իրենց հսկողության տակ վերցրին գլխավոր շտաբը, ռադիոյի և հեռուստատեսության պետական կորպորացիան, Ստամբուլի «Բոսֆոր» և «Ֆաթիհ Սուլթան Մեհմեդ» կամուրջները: Հեղաշրջման փորձի հետևանքով ռմբակոծվեցին Թուրքիայի խորհրդարանի շենքը, նախագահի նստավայրը, գլխավոր շտաբի շենքը, ոստիկանության շտաբ-կայանը, ազգային հետախուզության ծառայությունը, ներքին գործոց նախարարությունը և մեծ կարևորության այլ կառույցների վարչական շենքեր[73]: ՁՈՒ ԳՇ պետ Հուլուսի Աքարն առևանգվեց և փոխադրվեց «Աքընջը» ավիաբազա, որն օգտագործվում էր որպես գործողությունների կազմակերպման հենակետ[74]:

Նախագահ Էրդողանը, որն այդ ընթացքում արձակուրդում էր, տեղեկանալով զինվորական ստորաբաժանումների տեղաշարժերի մասին, շտապ լքում է հյուրանոցը և, կապ հաստատելով մի շարք հեռուստաընկերությունների հետ, ուղիղ եթերով կոչ է անում Թուրքիայի քաղաքացիներին դուրս գալու փողոց և պաշտպանելու «երկրի ժողովրդավարությունը»[75]: Ելույթից շատ չանցած՝ ՁՈՒ առաջին բանակի հրամանատար Ումիթ Դյունդարը հայտարարեց, որ Թուրքիայի ՁՈՒ-ն չի աջակցում հեղաշրջմանը[76]: Բախումներ տեղի ունեցան փողոց դուրս եկած՝ նախագահի կողմնակիցների և հեղաշրջման մասնակիցների միջև:

ԹԱՄԺ-ում հավաքված շուրջ 100 պատգամավորները նիստ են գումարում և դատապարտում հեղաշրջման փորձը: 02:30-ի սահմաններում հետախուզական ծառայությունը հայտարարում է, որ հեղաշրջման փորձն անհաջողության է մատնվել, իսկ մոտ մեկ ժամ անց Ստամբուլի օդանավակայանում վայրէջք է կատարում Էրդողանի ինքնաթիռը, և նրան դիմավորում են հազարավոր աջակիցներ: Քիչ անց Անկարայի գլխավոր դատախազությունը հայտարարում է հեղաշրջման կազմակերպիչների, այդ թվում և՝ ղեկավարների ձերբակալման մասին[77]:

ԱԶԿ-ն հեղաշրջման փորձի ամբողջ պատասխանատվությունը բարդեց Ֆեթուլլահ Գյուլենի և նրա աջակիցների վրա: Հուլիսի 16-ին ձերբակալվեցին տասնյակ հազարավոր մարդիկ, որոնք մեղադրվում էին գյուլենականներին աջակցելու և «Ֆեթուլլահական ահաբեկչական կազմակերպությանը» անդամակցելու մեջ: Հեղաշրջման փորձի ընթացքում զոհվեց 250 մարդ, իսկ վիրավորների թիվն անցնում էր 2200-ը. երկու դեպքում էլ գերակշռում էին քաղաքացիական անձինք: Պետությանը հասցվեց մոտ 100 մլրդ ԱՄՆ դոլարի նյութական վնաս[78]:

Հեղաշրջման փորձին հաջորդեց ձերբակալությունների, աշխատանքից ազատման և պաշտոնանկությունների մեծ ալիք, որի հիմնական թիրախը զինվորականներն էին: Փակվեցին բազմաթիվ լրատվամիջոցներ, դպրոցներ և համալսարաններ: Հուլիսի 21-ին մտցվեց արտակարգ դրություն, որը երկարաձգվեց յոթ անգամ, և որի ընթացքում գրանցվեցին մարդու իրավունքների ոտնահարման բազմաթիվ դեպքեր[79]:

2016 թ. դեկտեմբերին ԱԶԿ-ն ԱՇԿ-ի աջակցությամբ խորհրդարան ներկայացրեց սահմանադրական բարեփոխումների փաթեթ, որը պարունակում էր 21 հոդված (որոնցից 3-ը մերժվեցին)[80]: Սահմանադրական բարեփոխումների հիմնական նպատակը կառավարման նախագահական ձևին անցում կատարելն էր: Այդ հարցը քննարկվել էր դեռևս Թուրգութ Օզալի և Սուլեյման Դեմիրելի իշխանությունների օրոք, սակայն իրականություն չէր դարձել: 2016 թ. իրադարձությունները հնարավորություն տվեցին Էրդողանին ակտիվացնել այդ հարցի շուրջ քննարկումները, և 2016 թ. դեկտեմբերին ԹԱՄԺ ներկայացված բարեփոխումների նախագծի հաստատումով Էրդողանը ապրիլի 16-ին նշանակեց հանրաքվե[81]:

Ըստ բարեփոխումների փաթեթի՝ ԹԱՄԺ պատգամավորների թիվն ավելանալու էր՝ 550-ից հասնելով 600-ի, քանի որ, ըստ բարեփոխումների աջակիցների, պատգամավորների թիվը չէր համապատասխանում Թուրքիայի ավելացած բնակչության թվաքանակին, և առաջացել էր ընտրող-պատգամավոր համամասնության փոփոխության անհրաժեշտություն: Խորհրդարանական և նախագահական ընտրությունները անցկացվելու էին 5 տարին մեկ անգամ և նույն օրը:

Պատգամավոր ընտրվելու տարիքային շեմն իջեցվելու էր՝ 25-ից դարձնելով 18: Դրա նպատակը երիտասարդների՝ քաղաքականություն մուտքը խրախուսելն էր[82]:

Նախագահը կարող էր լինել կուսակցական, ինչը նախկինում արգելվում էր, կարող էր պաշտոնների նշանակել և պաշտոնանկ անել բարձրագույն պաշտոնատար անձանց: Վերացվում էր վարչապետի ինստիտուտը, որով նախագահի լիազորություններն ընդլայնվում էին՝ ընդգրկելով կառավարության ղեկավարի և երկրի առաջնորդի իրավունքներն ու պարտականությունները:

Վերացվելու էին ռազմական դատարանները, ռազմական դրությունը, որը փոխարինվելու էր արտակարգ դրությամբ: Արտակարգ դրություն հայտարարելու լիազորությունը տրվելու էր նախագահին, որն այդ որոշումն ուղարկելու էր ԹԱՄԺ: ԹԱՄԺ-ն կարող էր երկարացնել, կրճատել կամ չեղարկել արտակարգ դրությունը: ԹԱՄԺ-ին էր անցնում նաև բյուջեի հարցում վերջնական որոշման իրավունքը[83]:

2017 թ. ապրիլի 16-ին 51 տոկոս կողմ ձայներով սահմանադրական փոփոխությունների փաթեթը հաստատվեց, և իշխանությունը գերազանցապես կենտրոնացավ նախագահի ձեռքում[84]:

2018 թ. ԱԶԿ-ի նախաձեռնությամբ նշանակվեցին արտահերթ խորհրդարանական և նախագահական ընտրություններ՝ խորհրդարանական կառավարման համակարգից նախագահական կառավարման համակարգի անցնելու համար: Ընտրության օր նշանակվեց 2018 թ. հունիսի 24-ը՝ 2019 թ. նոյեմբերի փոխարեն[85]:

Ընդդիմությունն ընտրություններին հանդես եկավ «Ազգային դաշինքով», որին մաս էին կազմում ՀԺԿ-ն, ԺԴԿ-ն, «Լավ» կուսակցությունը և «Երջանկություն» ու «Ժողովրդավարություն» կուսակցությունների դաշինքը: «Ազգային դաշինքի» հիմնական նպատակը ԱԶԿ-ին խորհրդարանական մեծամասնությունից զրկելն էր[86]:

ԱԶԿ-ն դաշինք կազմեց ԱՇԿ-ի հետ, որն անվանվեց «Ժողովրդական դաշինք»[87]: Որպես նախագահի թեկնածու առաջադրվել էր Էրդողանը, որի հիմնական մրցակիցը ՀԺԿ-ի կողմից առաջադրված Մուհարրեմ Ինջեն էր: Նախագահի թեկնածու էին առաջադրվել նաև Մերալ Աքշեները, Սելահաթթին Դեմիրթաշը, «Երջանկություն» կուսակցության առաջնորդ Թեմել Քարամոլլաօղլուն և «Հայրենիք» կուսակցության առաջնորդ Դողու Փերինչեքը: Նախնական համաձայնությամբ՝ ընտրությունների երկրորդ փուլի դեպքում ընդդիմադիր ուժերը հանդես էին գալու երկրորդ տեղը զբաղեցրած միասնական թեկնածուով[88]:

Ընտրությունների արդյունքներով Էրդողանն ընտրվեց նախագահ՝ ձայների 52 տոկոսով, իսկ նրա ղեկավարած «Ժողովրդական դաշինքը» հաղթեց ձայների 53 տոկոսով (ԱԶԿ՝ 42 տոկոս, ԱՇԿ՝ 11 տոկոս)՝ ստանալով 293 պատգամավորական մանդատ: Ընտրությունները, ինչպես և նախորդ տարվա սահմանադրական հանրաքվեն, անցկացվեցին ընտրախախտումներով[89]:

Հղումներ

1. Տես Soner Cagaptsy, The New Sultan, Erdogan and the crisis of modern Turkey, London, New York, 2017, էջ 49:
2. Տես Թուրքիայի Հանրապետության պատմություն, Եր., 2018, էջ 246:
3. Տես Erik J. Zurcher, Turkey. A Modern History, fourth edition, New York, 2017, էջ 323-329:
4. Տես Թուրքիայի Հանրապետության պատմություն, էջ 246:
5. Տես նույն տեղում, էջ 247:
6. Տես նույն տեղում:
7. Տես Erik J. Zurcher, նշվ. աշխ., էջ 327:
8. Տես նույն տեղում:
9. Տես Թուրքիայի Հանրապետության պատմություն, էջ 247:
10. Տես նույն տեղում, էջ 250:
11. Տես նույն տեղում, էջ 251:
12. Տես Erik J. Zurcher, նշվ. աշխ., էջ 330:
13. Տես Թուրքիայի Հանրապետության պատմություն, էջ 251:
14. Տես Andrew Mango, The Turks Today, London, 2004, էջ 97-98:
15. Տես Թուրքիայի Հանրապետության պատմություն, էջ 245:
16. Տես նույն տեղում, էջ 251:
17. Տես նույն տեղում:
18. Տես նույն տեղում:
19. Տես նույն տեղում:
20. Տես Erik J. Zurcher, նշվ. աշխ., էջ 339-340:
21. Տես Թուրքիայի Հանրապետության պատմություն, էջ 252:
22. Տես նույն տեղում:
23. Տես Erik J. Zurcher, նշվ. աշխ., էջ 340:
24. Տես Թուրքիայի Հանրապետության պատմություն, էջ 252:
25. Տես նույն տեղում, էջ 253:
26. Տես նույն տեղում:
27. Տես նույն տեղում:
28. Տես նույն տեղում, էջ 254:
29. Տես նույն տեղում:
30. Տես նույն տեղում:
31. Տես Erik J. Zurcher, նշվ. աշխ., էջ 341:
32. Տես Թուրքիայի Հանրապետության պատմություն, էջ 258:
33. Տես նույն տեղում, էջ 259:
34. Տես նույն տեղում:
35. Տես Erik J. Zurcher, նշվ. աշխ., էջ 343:
36. Տես Թուրքիայի Հանրապետության պատմություն, էջ 260:
37. Տես նույն տեղում:
38. Տես նույն տեղում, էջ 260-261:
39. Տես նույն տեղում, էջ 261:
40. Տես նույն տեղում:
41. Տես Erik J. Zurcher, նշվ. աշխ., էջ 344-346:
42. Տես Թուրքիայի Հանրապետության պատմություն, էջ 261:
43. Տես Erik J. Zurcher, նշվ. աշխ., էջ 345:
44. Տես Թուրքիայի Հանրապետության պատմություն, էջ 262-263:
45. Տես նույն տեղում, էջ 263-265:
46. Տես նույն տեղում, էջ 264:
47. Տես նույն տեղում, էջ 265:
48. Տես նույն տեղում:
49. Տես նույն տեղում, էջ 266:
50. Տես նույն տեղում:
51. Տես նույն տեղում, էջ 266-267:
52. Տես նույն տեղում, էջ 285:
53. Տես նույն տեղում, էջ 285-286:
54. Տես նույն տեղում, էջ 286:
55. Տես նույն տեղում, էջ 287:
56. Տես նույն տեղում:
57. Տես նույն տեղում, էջ 288:
58. Տես Erik J. Zurcher, նշվ. աշխ., էջ 350:
59. Տես Թուրքիայի Հանրապետության պատմություն, էջ 288:
60. Տես նույն տեղում, էջ 289:
61. Տես նույն տեղում, էջ 293:
62. Տես նույն տեղում, էջ 293-294:
63. Տես նույն տեղում, էջ 294-295:
64. Տես նույն տեղում, էջ 295:
65. Տես նույն տեղում, էջ 295-296:
66. Տես նույն տեղում, էջ 296:
67. Տես նույն տեղում:
68. Տես նույն տեղում, էջ 296-297:
69. Տես նույն տեղում, էջ 297:
70. Տես նույն տեղում, էջ 298:
71. Տես նույն տեղում, էջ 298-299:
72. Տես նույն տեղում, էջ 302:
73. Տես նույն տեղում:
74. Տես նույն տեղում:
75. Տես Soner Cagaptsy, նշվ. աշխ., էջ 183:
76. Տես Թուրքիայի Հանրապետության պատմություն, էջ 303:
77. Տես նույն տեղում:
78. Տես նույն տեղում, էջ 303-304:
79. Տես նույն տեղում, էջ 303:
80. Տես նույն տեղում, էջ 307:
81. Տես նույն տեղում, էջ 306-307:
82. Տես նույն տեղում, էջ 307:
83. Տես նույն տեղում:
84. Տես նույն տեղում, էջ 308-309:
85. Տես նույն տեղում, էջ 309:
86. Տես նույն տեղում, էջ 309-310:
87. Տես նույն տեղում, էջ 310:
88. Տես նույն տեղում:
89. Տես նույն տեղում, էջ 310-311:

Յաղագս ազգային մտածողութեան

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Անցնող տարիներու իրադարձութիւնները, 44-օրեայ պատերազմի պատճառած ահաւոր կորուստներն ու մեր ազգային կուսակցութիւններուն, կազմակերպութիւններուն ու հաստատութիւններուն և անոնց դերակատարութեան նկատմամբ ձևաւորուող արհամարհական, այլև յարձակողական կեցուածքը վերջնականապէս պիտի պառակտեն հայութիւնը, հետզհետէ աւելի վիատեցնեն ու ի վերջոյ վերածեն ապակողմնորոշուած զանգուածի մը կամ զանգուածներու: Թէ ոչ, պիտի ամրակայեն մեր ապրելու կամքը, ջրդեղեն մեր վճռակամութիւնը՝ շարունակելու մեր գոյամարտն ու մեր երթը:

Ակներևօրէն վտանգ մը կ՚ուրուագծուի հորիզոնին վրայ:

Հայաստանէն ու հայրենական հողերէն ձեռքերը լուալու, «մենք մեր գլխուն ճարը նայինք», «Սփիւռքը զօրացնենք, մոռնանք մնացեալը» և նման մտայնութիւններ կը յառաջանան ու կը սպառնան մեր գոյութեան հիմնական նպատակէն շեղել մեզ: Մինչդեռ մենք, որ ոչ թէ պարզապէս հայրենիքի կամ Սփիւռքի բնակիչներն ենք, այլ Հայաշխարհի՛, ամեն ժամանակէ աւելի պէտք ունինք ազգայի՛ն մտածողութեամբ նայելու մեր ճակատագրին, մեր ներկային, բայց մանաւանդ մեր ապագային: Համահայկակա՛ն մտածողութեամբ: Եւ եթէ պահ մը միայն փորձենք կեդրոնանալ այս առաջադրանքին վրայ, պիտի անդրադառնանք, թէ որքա՛ն ետ ենք մնացեր մշակելու մեր այդ ազգային մտածողութիւնը: Նոյնիսկ նահանջեր ենք մեզ նախորդած սերունդներուն բաղդատմամբ:

Ազգային մտածողութիւն... Ի՞նչ կը նշանակէ այդ: Կը նշանակէ յստակ ուղի մը ունենալ մեր առջև, մշակե՛լ, ինչպէս Խորենացին կ՚երևակայէր զայն, երբ կ՚ողբար վիճակը Հայոց աշխարհին, ինչպէս Ռաֆֆին կը տեսանէր, երբ իր Խենթը երազ կը տեսնէր, ինչպէս Խրիմեանը կը պատգամէր՝ «երկաթէ շերեփ» քարոզելով:

Բոլո՛ր պատասխանատուութիւն ունինք մեր ներկայ կացութեան համար:

Ի՞նչ կրնանք ընել, ուրեմն:

Ի՞նչ կրնանք ընել հիմա՛:

Առաջին նախապայմանն այն է, որ ուզե՛նք համահայկական մտածողութեամբ մօտենալ մեր հարցերուն: Ուզենք մենք բոլորս՝ Հայաշխարհի բոլոր բաղկացուցիչ տարրերը՝ անկախ աշխարհագրութենէն, գաղափարաբանութենէն, թէ դաւանանքէն: Ուզենք ու միասին որոշենք մեր առնելիք քայլերը: Այդ քայլերը պիտի վերաբերին մեր կեանքի կառավարման բոլո՛ր մակարդակներուն, բոլո՛ր ոլորտներուն մէջ՝ կազմակերպականէն մինչև ինքնապաշտպանականը, տնտեսականէն մինչև կրթամշակութայինը, քաղաքականէն մինչև քարոզչականը:

Յստակ է, որ այդ բոլոր ոլորտներուն մէջ վերանայման, բարեփոխութեան անհրաժեշտութիւն կայ: Բայց ազգային մտածողութիւն ու անկէ բխած ազգային ռազմավարութիւն մշակելու համար մենք պէտք է օգտուիլ կարենանք մեր ամբողջ ներուժէն, այդ ըլլայ մեր առկայ կազմակերպութիւններու շարքերէն ներս թէ դուրս, մեզի արդէն լաւապէս ծանօթ գործիչներէն ու զինուորեալներէն մինչև տակաւին բոլորովին անծանօթ մասնագէտներն ու

փորձագէտները:

Գիտեմ, որ այս ըսածներս այդպէս մատներու չրթոցով մը չեն ըլլար: Համբերութիւն ու երկար շունչ կ՚ուզէ: Երկար շունչ ու անյողդողդ կամք կ՚ուզէ, որ թօթափենք մեզ կաշկանդող մտայնութիւններ ու վարուելակերպեր, որոնք տզրուկի նման փակած են մեր հոգիներուն վրայ: Թուենք մի քանին՝

- ստորակայութեան զգացում,
- գերակայութեան զգացում,
- անսխալականութեան յաւակնութիւն,
- մնապարծութիւն,
- «ուր հաց, հոն կաց» փիլիսոփայութիւն,
- ընչաքաղցութիւն,
- օտարամոլութիւն,
- սեփական քիթին ծայրէն անդին չտեսնելու մոլութիւն,
- սեփական շահի գերադասում հաւաքական շահէն,
- հասարակութեան ծառայելու դժկամութիւն:

Մեծ լայնախոհութիւն ու պայծառ ողջմտութիւն կ՚ուզէ, որ սորվինք ի մի բերել ամեն բանէ առաջ մեր տնտեսական անբաւ կարելիութիւնները, հաստատենք մեր ազգային կարիքներուն հասանելի գումարներու կռուանները՝ աչալուրջ վերահսկելով անոնց գործածութիւնը:

Լայն փորձառութիւն ու խոր հմտութիւն կ՚ուզէ, որ Հայաշխարհն իր ամբողջութեան մէջ համահայկական ուժերով կառավարելու հեռահար ծրագիրն ու գործիքակազմերը ստեղծենք, ատակ ուժերը գործի լծենք, մանաւանդ հետևինք անոնց գործելակերպին ու մնայուն կերպով կարենանք սրբագրել շեղումներն ու թերացումները:

Վերջապէս՝ ամբողջական յօժարակամութիւն և գիտակցուած համեստութիւն կ՚ուզէ, որ կարենանք դրօշը փոխանցել մեր երիտասարդներուն ձեռքը՝ շարունակելով վազել անոնց կողքին ու զօրավիգ կանգնելով անոնց ճիգերուն:

Այլապէս ինչպէ՞ս կ՚ուզենք Հայ դատ հետապնդել՝ շրջապատուած ոխերիմ թշնամիներով ու անվստահելի բարեկամներով:

Ինչպէ՞ս կ՚ուզենք պահել լեզու և մշակոյթ՝ մեզ համաշխարհայնացնելու ձգտող բոլոր հոսանքներուն դէմ-յանդիման:

Ինչպէ՞ս կ՚ուզենք մաս կազմել կենսունակ ու ապրելու ճակատագրուած ազգի մը...

Ազգային մտածողութեամբ միայն:

ՀՅԴ 34-րդ Ընդհանուր ժողովի հայտարարությունը

Սույն թվականի փետրվարի 28-ից մարտի 8-ը Հայաստանում տեղի ունեցավ ՀՅԴ 34-րդ Ընդհանուր ժողովը: Աշխարհի շուրջ 30 երկրներից ժամանած 100 պատվիրակները քննարկեցին և արժևորեցին համահայկական կառույցի հաշվետու ժամանակաշրջանի գործունեությունը, ուղենշեցին ՀՅԴ առաջիկա քառամյակի ռազմավարությունը՝ որդեգրելով քաղաքական գործունեության առաջնահերթություններն ու հիմնական ուղղությունները:

Ժողովը արձանագրեց.

• Ողջ հայությունը, Հայաստանի և Արցախի Հանրապետությունները հայտնվել են մեր նորագույն պատմության ճակատագրական փուլերից մեկում, երբ աննախադեպ սպառնալիքներ են ստեղծվել Հայաստանի ինքնիշխանության և անվտանգության համար:

• ՀՀ իշխանությունների որդեգրած ապազգային քաղաքականությունը, արտաքին և ներքին ճակատներում առաջ եկած մարտահրավերներին անհամարժեք արձագանքը և սխալ գործողությունները հանգեցրին 44-օրյա աղետալի ու կորստաբեր պատերազմին՝ Հայաստանի և Արցախի Հանրապետությունների համար ստեղծելով լինելիության վտանգ:

• ՀՀ իշխանությունները խորացրել են ներազգային պառակտումներն ու ջրբաժանները, որոնք ուղեկցվում են քաղաքական հետապնդումներով, բանտարկություններով և ճնշումներով: Փլուզված է Հայաստանի անվտանգության ողջ համակարգը, կազմաքանդվում են պետական և ժողովրդավարական ինստիտուտները:

• Սփյուռքը, աշխարհաքաղաքական, տնտեսական, ընկերային բազմաթիվ պայմաններով թելադրված, համազգային պառակտման և հատկապես 44-օրյա պատերազմում պարտությունից ու հետպատերազմյան զարգացումներից հետո հուսալքության, ահռելի դժվարությունների հաղթահարման և ելքերի փնտրտուքի փուլում է, որը հարկ է հունավորել ու արդյունավորել:

• Տարածաշրջանում ակտիվացել է թուրք-ադրբեջանական տանդեմը, իսկ Հայաստանի իշխանությունները դադարել են լինել Արցախի Հանրապետության և արցախահայության անվտանգության երաշխավորը:

ՀՅԴ 34-րդ Ընդհանուր ժողովը հաստատեց.

• Ստեղծված իրավիճակը և հայկական զույգ պետությունների վտանգված հեռանկարը հնարավոր է բեկել հայ ժողովրդի վճռական կամքով, Հայաստան-Սփյուռք-Արցախ եռամիասնական ներուժով:

• Հայության ներուժի, ազգային արժեքների նահանջի պայմաններում Դաշնակցությունը պարտավոր է ստանձնել ազգային նպատակներ բանաձևողի, ապազգային իշխանություններին երկրի ղեկավարումից հեռացնելու գործընթացում հիմնական ուժի որոշիչ դերակատարությունը:

• Սփյուռքը՝ իբրև գլխավորապես Հայոց ցեղասպանության ծնունդ, Արևմտահայաստանի կորստի արդյունք և արևմտահայերենի պահպանման կռվան, ռազմավարական նշանակություն ունի հայության մղած պայքարում: Անհրաժեշտ է նոր ավյուն ներարկել Սփյուռքի առավել կազմակերպման և համահայկական քաղաքական նպատակների իրականացման պայքարին:

• Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների հաստատումը չի կարող լինել ի հաշիվ Հայաստանի, Արցախի և համայն հայության օրինավոր ու անժամանցելի իրավունքների:

• Արցախում ստեղծված նոր կացությամբ պայմանավորված՝ առաջացել է պայքարի նոր մոտեցումներ և ռազմավարություն որդեգրելու անհրաժեշտություն՝ մեկնակետ ունենալով արցախահայության ինքնորոշման իրավունքի լիարժեք իրացումը:

• ՀՅԴ-ն իր ողջ ներուժով, համահայկական կառույցի կարողականությամբ և նվիրումով ձեռնամուխ է լինելու Հայաստանի և Արցախի Հանրապետությունների անվտանգության, տարածքային ամբողջականության, ինքնիշխանության, կայունության ու զարգացման ապահովման և ժողովրդի կենսամակարդակի բարձրացման ու ընկերային արդարության հաստատման աշխատանքներին:

• ՀՅԴ-ն, հավատարիմ Հայ դատի պայքարին, հանդես է գալու ցանկացած գործընթացի դեմ, որը կհակասի 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունված ՀՀ անկախության և Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին հրապարակված համահայկական հռչակագրերին:

• Ապազգային քաղաքականություն վարող և երկրին ծանր կորուստներ բերած իշխանությունների հեռացումը օրակարգային առաջնահերթ խնդիր է, և կուսակցությունը շարունակելու է ընդլայնել հունավորվող ազգային դիմադրության շարժումը:

ՀՅԴ-ն իր համահայկական կառույցով և համակիրների աջակցությամբ վճռականորեն իրականացնելու է իր որդեգրած ուղեգիծն ու ռազմավարությունը:

8 մարտի 2022 թ.

2022 թ. փետրվարի 28-ից մարտի 8-ը Հայաստանում գումարվեց ՀՅ Դաշնակցության 34-րդ Ընդհանուր ժողովը

Բացման արարողությունը տեղի ունեցավ փետրվարի 28-ին՝ Երևանում

ԴՐՕՇԱԿ